



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



ՀԱՅ ԱՄ ԷՑ

10-2

4485  
Ճ-61

1332  
2080

ՅՈՎԱԿԻՓ ՃԻԱԳՈՋԱ

# ԻՆՉՊԷՍ ՏԵՐԵԻՆԵՐԸ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ՁՈՐՍ ՀԱՆԳԷՍՈՎ

Թարգմ. Հ. ԱՐԻՍԱԿԷՍ ԲԱՍԳԱՆՏԻԼԵԱՆ

Հ. ԵՆԼՆ ԳՈՐԾ

2080  
Հ. ԳՈՐԾ

8875



Центральная биб-ка им. Ленина

ՎԵՆԵՏԻՎ ԲԱՍՄԱԿԱՆԱԿԱՆ  
ԿԵՆՏՐԱԿԱԼԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
1936 Դ.

1936

24 JUL 2013

8180



2768  
41

ԵՐԿՐԵՆՈՍ ԴՈՐԵՂԼԻ-ՎԻՈՂԼԻԷ

ԲԱՐԵԿԱՄԻՆ

ՈՐ ԵԱՆՐ ՎԱՅՐԿԵԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ ԻՆՏԻ ԵՂԱԻ

ՀԱՒԱՏԱՐԻՄ

ՅՈՎԱԷԼԻ ՃԻԱԳՈՂԱ.



## Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

2875



ՏԱԼԱԿԱՆ թատրոնը քիչ անգամ  
կը յիշէ այն եռանդագին և միա-  
ձայն յաջողութիւնը՝ որ ունեցաւ  
Ճիագողայի կատակերգութիւնը,  
Ինչպէս տերեւները, 1900ի յու-  
նուարի Յին իրիկունը: Ուրիշ անօրինակ ե-  
ղելութիւն մը այն միաձայնութիւնը եղաւ՝  
որով հետեւեալ օրը ամէն զոյնէ ամէն օրա-  
գիրները գովեցին նոր երկը:

Կը թարգմանենք հոս միայն Perseve-  
ranza կարեւոր և լուրջ թերթին յօդուածը,  
զոր գրած է Յովսէփ Պոնաօրէզի:

..... Կաատակերգութեանս նիւթը այն-  
քան պարզ է, որքան եղելութիւնը որ անկէ  
կը հանէ՝ ճշմարտաման: Ո՛րչափ ընաա-

նիքներ՝ որ նախընթաց օրը հարուստ, հզօր  
 և ակնածելի էին, օր մը յանկարծ շարժնցան  
 խեղճ ըլլալու աստիճանի աղքատ, անգութ  
 հեղնութեան աստիճանի ծաղրուած և զրպար-  
 աուած: Անդիտակից թեթեւութեամբ ձեռն-  
 արկուած խիստ յանդուզն և յանձնապաս-  
 տան գործ մը, տեսակ մը առեւտրական շա-  
 հադիտութիւններու մէջ անխոհեմաբար նե-  
 տուելով Սակարանի յանկարծադէպ բարձրա-  
 նալ մը և ցածնալ մը, բաւական է փճա-  
 ցընելու ամենէն աւելի մեծափարթամ ստա-  
 ցուածքը, մղելու սնանկութեան, և թերեւ  
 ալ անպատուութեան մէջ գլորելու ամենէն  
 աւելի ուղիղ և պարկեշտ անձինքը:

Ասոր նման բան մը հանդիպած է Յով-  
 հաննէս Ռոզանիի, զրեթէ վաթսուննոց մարդ  
 մը, որ իր ամբողջ կեանքը անցուց՝ ընտա-  
 նեացը բարեկեցութիւն և հարստութիւն տա-  
 լու համար, և առեւտրական ձախորդութիւն  
 մը յեղակարծուց կը նետէ զինքը թշուառու-  
 թեան մէջ: Անտարակոյս, եթէ ինքը ան-  
 խիղճ մարդիկներու խորհուրդին հետեւէր,  
 կրնար հետեւանքները նուազեցնել և ազա-  
 տել նաւաբեկութենէ թանկադին նշխար մը.  
 բայց ինքը չուզեց:

Ուստի, իրեն պարտատէրներուն ամէն  
 բան կու տայ, ամէն բան կը ծախէ. ինքը  
 կը մտածէ, հարստութիւնը կորսնցնելը շատ  
 բան է, բայց պատիւը կորսնցնելը ամէն բան  
 է. և եթէ տունը լքանելու վրայ եղած ա-  
 տենը՝ խոր ցաւով մը կը համակուի, անոր  
 համար է որ այն տունը լեցուն է իրեն եր-  
 կու դաւակններուն, թոմիի և Նէննէլէի, ա-  
 նոյշ յիշատակներով, և Յուլիայի իրեն եր-  
 կրորդ ամուսնոյն, որ դեռ երիտասարդ է և  
 քիչ յարմար զրկանքներու կեանքին՝ որ ա-  
 պագան իրենց կը պատրաստէ: Իրեն վրայ  
 չի մտածեր. ինքը կը զգայ որ աշխատելու  
 համար ծնած է, և պիտի աշխատի: Միւշ-  
 նի մէջ չէ, կը հասկցուի: Բազմաթիւ բա-  
 րեկամներէն և ազգականներէն որ առաջ շուրջը  
 կը պտըտէին և կը ծռէին իրեն, իրեն տանը  
 կործանումէն ետքը մէկը չերեցաւ, բայց  
 եթէ աւելցնելու համար իրեն թշուառութեանը  
 վրայ, քիչ մը ձեւացեալ կամահաճութեամբ,  
 իրենց ստորին սրտին ծաղրուածանակը:

Գտնուեցաւ մարդ մը միայն՝ որ վաղեց  
 ինքնարեւոյտ և անկեղծօրէն զմբազու-  
 թեան լուրը առնելուն, Մաքսիմոս Ռոզանի,  
 Յովհաննէսի եղբորորդի մը, պատանեակ մը

որ տասուկրեք տարուան որբ մնացած, առանց առաջնորդի և առանց բազդի, կրցաւ վասակիլ իր կամքին ուժովը և իր նկարագրին զօրութեամբը շահաւոր դիրք մը և ապահով ապագայ մը:

Ժընէվէն, ուր երկաթուղիի մը շինութեան կը զբաղի, շուտ մը, ոչ թէ դրամ, այլ զործ ճարեց իր հօրեղբօրը, որ երախտագիտութեամբ կ'ընդունի:

Ռոզանիի տան մէջ ուրեմն կը տեսնուին պատրաստութիւնները մեկնելու, Մաքսիմոսի հետ մեկտեղ, որ նոյն օրը Պուտարեստէն դարձեր էր, ուր գնացած էր զործի համար: Թոմի, որ չի կրնար յարմարիլ իր վայելչասիրական, մխոզ և զործալբական կեանքէն հրաժարելու գաղափարին հետ, ապահով կ'ըլլայ որ իր ճամբորդութեան plaidը պատրաստելու ժամանակ չի մոռցուին նաեւ Դէննիսի դունդխաղի զործիքները, որ իրեն սիրելի մարզանքն էր. Յուլիա, որ էրկանը երզուընցեր էր թէ քաղաքին մէջ ալ պարտք մը չունի, շտապ տագնապով կը վճարէ նորաձեւքի կնոջ մը, զոր, ինքը կը յուսար, ձգելու փախչելու, և Միլանը թողլու կը պարաստուի՝ աւելի հրապուրուած անձանութիւն

ուր կը դիմէ, քան թէ տխրած թողուցածին և կորսնցուցածին համար:

Մինակ Նէննէլէն մեկնելու ատենը կը զգայ անպատում վիշտ մը. ինքը տխուր նախազգածութիւններով լեցուն է. զազանի անձկութեամբ մը, զգնդակ ցաւով մը կը համակուի տեսնալով զՄարթան, հաւատարիմ սպասուհին և իրեն մանկական հրճուանքներուն ամենէն աւելի զորովալի ընկերը, ամայի սենեկին մէջ արտասուածոր և անմխիթար: Եւ Նէննէլէ ետ կը դառնայ. այն պառաւին լացը սիրտը կը խշխշացնէ. — Լուս կեցիր. Լուս կեցիր. — կ'ըսէ անոր ինքը հեծկլտանքներու մէջ և անհուն տխրութեամբ, զրկելով զինքը վերջին անգամ:

Այս կերպով Ճիագոզա, տեսարաններու արագասահ յաջորդութեան մը մէջ, և զրեթէ առանց անդրադառնալու կերպարանքն ունենալու, կը ներկայացնէ մեզի կատակերուն ենալու, կը ներկայացնէ կը ծրագրէ հզօրութեան ամէն անձինքը, կը ծրագրէ և նկարարագիրները, և կը պատրաստէ հոգեբանական խոր հակապատկերները՝ որ արարուածին պարզուելուն ատեն պիտի հաստատուին:

Եւ այս վայրկեանէս, բացուելու վրայ եւ  
դաձ կուսին մէջ, զժուարին չէ գուշակել թէ  
ո՞վ պիտի բլլայ յաղթողը և ո՞վ զուհը:

\*

Երկրորդ հանգեւին ժընէյ ենք, անշուք  
տանը մէջ՝ զոր գտաւ Մաքսիմոս իրեն ազ-  
գականներուն: Յովհաննէս, ինչպէս որ ինք-  
զինքը կը քարոզէ, աշխատութեան ճշմարիտ  
եղ, եղբորորդիէն իրեն յանձնուած պաշտօն-  
ներուն կը զբաղի առաւօտունէ մինչեւ իրի-  
կուն: Յուլիա, իր մանկամարդ կինը, կը  
զուարճանայ նկարելով՝ ընտանիքին օգնելու  
համար, ինքը կ'ըսէ, բայց խորը՝ որպէս զի  
դարպաս ընդունի Հելմէր Սյորելէն, նորվի-  
կիացի նկարիչ մը, որ իրեն հաւատարիմ  
ընկերն է: Նէննէյէ սկսաւ անդղիներէն դասեր  
տալ, բայց ընկելքը իրեն պիտի չի դար և  
շարունակելու շատ կամք չունի: Թոմիին  
գալով, ինքը որ մը անգամ չի կրցաւ պի-  
մանալ տեղը՝ որ իրեն ճարեր էր հօրեղբոր-  
որդին: Երեսկայէ՛: Աղտեղի և կիսամերկ  
մարդիկներու հետ շփումով, ներքնուղիի մը  
աշխատութիւններուն հսկելու համար, ամի-  
սը իննսուն ֆրանք:

— Եւ բեզի բիշ բան կ'երեւայ. — կը  
պատասխանէ իրեն Մաքսիմոս: — Բայց թէ  
արդեօք պիտի հատուցանէի ես ընթերակայի  
մը որ աշխատութիւններուն ընթերակայ բլ-  
լալէն զատ՝ հսկէր նաեւ քու վրայ:

Եւ խօսակցութիւնը երթալով տաքնալով,  
երկուքնուն մէջ կը հիւտուի զրգուած տե-  
սարան մը, որուն միջոց Մաքսիմոսի կերպա-  
բանքը կամաց կամաց կը բարձրանայ խոր-  
հըրդանշանի մը զեղեցկութեան, առողջ և  
կամեցող ուժին խորհրդանշանը, յաղթող  
իրերու և տիրող մարդիկներու զօրութեանը:

Բայց Թոմի անձնատուր չըլլար. և երբ  
Մաքսիմոս կ'ակնարկէ եղած յարաբերու-  
թիւններուն՝ Թոմիի և բաղդախնդիր հարուստ  
առու կնոջ մը միջեւ, որուն տանը մէջ աշ-  
խարհաբազբցի ընկերութիւն մը կը հաւա-  
քուի և կը կործանի, և հեգնօրէն վրայ կը  
բերէ. — Այն կինը երկրորդ ամուսին մը կը  
փնտոէ. գնա, և կարգուէ հետը. բիշ աշխա-  
տանքով կը հարստանաս:

— Ահա լաւ գաղափար մը, — կը պա-  
տասխանէ Թոմի. և զայն իսկոյն կը գոր-  
ծադրէր, եթէ Նէննէյէ չի հասներ զինքը  
արդիւելու, և եթէ ոչ նուազ բուռն և յու-



զեալ տեսարան մը իրմէ չի վերցընէր նաեւ շարն ընելու կամքը: Բայց իրեն զգաստութիւնը բիշ ժամանակ պիտի տեւէ. Մաքսիմոս կը տարակուսի զեռ հօրեղբորորդոյն ապագային վրայ, և չի խաբուիր:

※

Եւ ստուգիւ երբորդ հանդէսին, հեղինակը, զմեզ ներկայ ընել տալէն ետքը, թեւեւ բիշ մը շափազանց երկնցնելով, և զիմելով պզտիկ միջոցներու որ բնաւ պէտք չկայ գործին ընդլայնմանը, և ոչ՝ արդէն կատարելապէս ծրարուած՝ նկարագիրներուն շրջափոխութեանը, — և այս պզտիկ արատներէն մէկն է, — Յուլիայի բարոյական փըշումին, կը ցուցնէ նաեւ մեզի ընկզմամբ՝ զոր թուրի կատարելու վրայ է: Եւ կը ցուցնէ մեզի երկու եղբայրներուն մէջ եղած ամենազեղեցիկ տեսարանով մը, տեսարան որ իպտեական ճաշակ մը ունի, և, զեղազիտականօրէն խօսելով, բոլոր մէկախներէն բիշ մը սաստիկ կերպով զատուելու յանցանքը. սակայն ուրիշ կողմանէ այս ամենամեծ արժանիքն ալ ունի՝ որ այն երկու սրտերը մէջտեղ կը հանէ և կը ներկայացնէ մեզի իրենց ա-

մէն երեսոյթներովը և իրենց ամէն ազիտաբեր տկարութիւններովը:

Բայց թումիի ընկզմամբ հեղեղատի մը մէջ ոստում մը չէ, ինչպէս վայրկեան մը սոսկալով ենթադրած է Նէննէլէն. ինքը պարզապէս կ'ընկզմի միլիոններու մէջ, այն բազդախնդիր կնոջ հետ կարգուելով, որուն հետ արդէն միացած է նախատալից կասով մը:

Իսկ Նէննէլէ՛: Իրեն ինչ պիտի ըլլայ: Ինքը կը տեսնայ, որ ճիւղէն փրցուած և մըրկէն ցիրուցան եղած մեռած տերեւներուն նման՝ ամէն բան կ'իյնայ իր շուրջը. մտալուտ կործանումէն կրնայ ազատիլ կոթընելով Մաքսիմոսի, զոր կը սիրէ. բայց լեւեալն հասկցուելու տարակոյտը կը կենդանացնէ իր մէջը բնազդական գոռոզութիւնը. և հրբոր պատուական երիաստարդը, որ շատնցունէ կը պաշտէ զինքը ծածուկ, միա՛ միտ պարզութեամբ իրեն կ'ըսէ. — Կ'ուզե՞ս իմ կինս ըլլալ. — ինքը կը պատասխանէ արհամարհութեամբ. — Ողորմութիւն չեմ ընդունիր:

Մաքսիմոս զուլիսը ծոած, պահելով սրաին մէջ գորովանաց յուզմունք մը՝ զոր բերանը

չի կրնար, կամ կ'արհամարհէ ինքն ալ  
 յայտնելու, կը թողու հօրեղբօր աղջիկը. և  
 վերջինս որ կը նայի անոր հեռանալուն և  
 կը տեսնէ որ մինչեւ անգամ իրեն վերջին  
 յոյսը կ'անհետանայ, կը հառաչէ. — Միտքս  
 չի հասկցաւ:

\*

Վերջին հանդէսը կ'ամփոփուի տեսարանի  
 մը մէջ, որ քերթուած մըն է զգացմունքի:  
 Մեր Ռողանին, կանթեղի լոյսով, վերջա-  
 ցնելու վրայ է սովորականէ զուրս աշխատու-  
 թիւն մը՝ զոր յանձն առեր է իրեն ընտա-  
 նեացը հետզհետէ անող պէտքերը լեցնելու  
 համար: Նէննէլէ գաղտուկ կ'ելլայ իր սե-  
 նեկէն: Ինքը չի գիտեր թէ հայրը այն ժա-  
 մուն այն տեղը կ'աշխատի. բայց հայրական  
 բարի կերպարանքն անգամ բաւական չէ  
 զինքը ետ կեցնելու մահուան տխուր մտա-  
 ծովթիւններէն: Յովհաննէսին ականջը կը  
 հասնի թեթեւ շրշին մը. — Ո՛վ է հոն. —  
 ինքը կ'աղաղակէ իրրեւ սարսափած: Եւ վա-  
 զելով սեւ ստուերին ետեւէն, որ դրան մը  
 ետին աներեւոյթ կ'ելլայ, բիշ մը վերջը կը  
 վերադառնայ իր աղջիկովը: Նա կ'ուզէր  
 մեռնիլ:

Ինչ օգուտ նորէն շինել գէշ կերպով տե-  
 սարան մը՝ որուն ամէն մէկ բառը, ամէն  
 մէկ շարժմունքը՝ զգացմունքի ամենէն աւելի  
 կենդանի և քերթողական արտայայտու-  
 թիւնն է:

Քիչ մը ետքը, մինչպիսի հայր և աղջիկ  
 բացուած պատուհանէն կը զիտեն լուսնկայ  
 զեղեցիկ զիշերը և կը ծծեն լիաթոր մաքուր  
 օդը, և իրենց սրտերը կը խօսին և քան  
 ուրիշ որ և է ժամանակ իրարու միտքը կը  
 հասկնան, ստորակայ պարտեզին ծառերուն  
 մէջէն ստուեր մը կ'անցնի....

Նէննէլէ աչքերը կը սեւեռէ կիսաստուե-  
 ըին մէջ. — Կարելի՞ է — ինքը կ'աղաղակէ:  
 — Նա ուրեմն իմ վրաս կը մտածէր: Նա  
 կուահեր էր, նա կը հսկէր:

— Բայց ո՞վ — կը պատասխանէ հայրը:  
 — Նա: Կ'ուզես որ կանչեմ.... Մաք-  
 սիմոս, Մաքսիմոս:

Եւ այս սիրոյ վրայ երգովը, այս՝ Մաք-  
 սիմոսի տնկեղծ և համարձակ սրտին մէջ  
 համադրուած, գէտ ի բեղնաւոր դործօնէու-  
 թիւն և կենաց ամենէն աւելի մաքուր ուրա-  
 խովթիւններուն բուռն տենչանքովը, կը գո-  
 ցուի ամենազեղեցիկ կատակերգովթիւնը:

չի կրնար, կամ կ'արհամարհէ ինքն ալ յայանելու, կը թողու հօրեղբօր ազջիկը. և վերջինս որ կը նայի անօր հեռանալուն և կը տեսնէ որ մինչեւ անգամ իրեն վերջին յոյսը կ'անհետանայ, կը հառաչէ. — Միաքս չի հասկցաւ:

\*

Վերջին հանդէսը կ'ամփոփուի տեսարանի մը մէջ, որ քերթուած մըն է զգացմունքի: Մեր Ռոզանին, կանթեղի լոյսով, վերջացնելու վրայ է սովորականէ զուրս աշխատութիւն մը՝ զոր յանձն առեր է իրեն ընտանեացը հետզհետէ անող պէտքերը լեցնելու համար: Նէննէլէ գաղտուկ կ'ելլայ իր սենեկէն: Ինքը չի գիտեր թէ հայրը այն ժամուն այն տեղը կ'աշխատի. բայց հայրական բարի կերպարանքն անգամ բաւական չէ զինքը ետ կեցնելու մահուան տխուր մտածութիւններէն: Յովհաննէսին ականջը կը հասնի թեթեւ շրշին մը. — Ո՛վ է հոն. — ինքը կ'աղաղակէ իրրեւ սարսափած: Եւ վազելով սեւ ստուերին ետեւէն, որ զրան մը ետին աներեւոյթ կ'ըլլայ, քիչ մը վերջը կը վերադառնայ իր ազջիկովը: Նա կ'ուզէր մեռնիլ:

Ի՞նչ օգուտ նորէն շինել գէշ կերպով տեսարան մը՝ որուն ամէն մէկ բառը, ամէն մէկ շարժմունքը՝ զգացմունքի ամենէն աւելի կենդանի և քերթողական արտայայտութիւնն է:

Քիչ մը ետքը, մինչդեռ հայր և ազջիկ բացուած պատուհանէն կը դիտեն լուսնկայ գեղեցիկ գիշերը և կը ծծեն լիաթօք մաքուր օլը, և իրենց սրտերը կը խօսին և քան ուրիշ որ և է ժամանակ իրարու միտքը կը հասկնան, ստորակայ պարակզին ծառերուն մէջէն ստուեր մը կ'անցնի....

Նէննէլէ աչքերը կը սեւեռէ կիսաստուերին մէջ. — Կարելի է — ինքը կ'աղաղակէ: — Նա ուրեմն իմ վրաս կը մտածէր: Նա կոահեր էր, նա կը հսկէր:

— Բայց ո՞վ — կը պատասխանէ հայրը:

— Նա: Կ'ուզէս որ կ'անչեմ.... Մաքսիմոս, Մաքսիմոս:

Եւ այս սիրոյ վրայ երգովը, այս՝ Մաքսիմոսի անկեղծ և համարձակ սրտին մէջ համադրուած, գէպ ի բեղնաւոր գործօնութիւն և կենաց ամենէն աւելի մաքուր ուրախութիւններուն բուռն աննշանքովը, կը գոցուի ամենագեղեցիկ կատակերգութիւնը:

Ա Ն Ձ Ի Ն Ք

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՌՈԶԱՆԻ, 36 տարուան :  
ՅՈՒԼԻՍ, իրեն երկրորդ կինը, 34 տարուան :  
ԹՈՄԻ, 27 տարուան } իրեն որդիքը առաջին  
ՆԷՆՆԵԼԷ, 22 տարուան } կնոջմէն :  
ՄԱՔՍԻՄՈՍ ՌՈԶԱՆԻ, իր եղբորորդին, 34 տարուան :  
ԼԱՌԻ ՏԻԿԻՆԸ :  
ԻՐԵՆԷ ՏԻԿԻՆԸ :  
ԼԱՊԼԱՆՏ ՏԻԿԻՆԸ :  
ՀԵԼՄԷՐ ՍԴՐԻԼ, նկարիչ :  
ՈՒՐԻՇ ՆԿԱՐԻՁ ՄԸ :  
ՊԱՐՈՆ ՄԸ :  
ԱՆԴՐԷԱՍ } ծառաներ :  
ԳԱՍՊԱՐ }  
ԼՈՒՍԻՍ, պառաւ սենեկապան :  
ՄԱՐԹԱ, խոհարարուհի :  
ԿՈՌԻՄ ՄԸ :  
ԲՆՈՆԱԿԻՐՆԵՐ :

## ՀԱՆԴԻՍ ԱՌԱՋԻՆ

Շքեղ դահլիճ մը, (կամարով մը՝ որ կրնայ շոցուել պատին մէջ մտնող ելլող և սահուն փեղկերով) բացուած դէպ ի շքեղազարդ ճաշարան մը: Ասոր պատերը՝ ոսկեղօծ մեծամեծ ծաղկանկարներով մուժ յատակի վրայ կաշիով ծածկուած են, և ունի քանդակուած ընկուղիէ կահկարասի: Դահլիճը՝ դնդաղարդիկ արկղաձեւ սեղանով ձեղուն մը ունի, և պատերը սրահակներով զարդարուած են: Ճաշարանին մեծ սեղանը՝ պայուսակներով, շալակալներով, հովանոցակալներով, և այլն, խոնուած է: Դահլիճին մէջ, ամենանուրբ անդդիական կահկարասի: Կահերը տարազարդ: Կը հասկցուի որ սուներ թողուելու վրայ է: Աջակողմը երկու դուռ, առջինը Յովհաննէսին սենեակը կը տանի, երկրորդը Թոմիինը: Զախակողմը, երկրորդ կողմանոցին վրայ, մայր դուռը: Առաջին կողմանոցին վրայ դուռ՝ որ կը հանէ Յուլիայի սենեակը: Ճաշարանը՝ անկիւն մը՝ միայն մէկ դուռ ունի, հանդիսատեսին ձախակողմը:

### ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

Վարագոյրը բարձրանալուն, պայուսակներով բեռնաւորուած երեք բեռնակիրներ՝ ճաշարանէն կու գան և մայր դռնէն դուրս կ'ելլան: Ճաշարանին մէջ կը տեսնուի ԼՈՒՍԻՍ, որ կ'երթայ և կու գայ, բերելով իրեղէններ՝ զորոնք ստուլին վրայ կը դնէ: Գահլճին մէջ ՆԵՆՆԵԼԷՆ, գոնսոյի մը քով կանգնած, արձակ թերթի մը վրայ բեռններուն թիւը արձանագրելու հետ է: Երբեմն երբեմն զանգակի զայրացկոտ և անհամբեր հնչիւն մը:

ՆԵՆՆԵԼԷ բեռնակիրներուն:

Քանի՞ հատ են:

ԲԵՌՆԱՊԻՐ ՄԸ

Վեց վարը և երեք հոս: Իննը հատ:

Կ'երթայ:

ՆԵՆՆԵԼԷ

Լուսիս:

ԼՈՒՍԻՍ

Օրիորդ:

ՆԵՆՆԵԼԷ

Քանի՞ պայուսակ մնաց:

ԼՈՒՍԻՍ

Երեք հատ աիկնոջը և երկու հատ պարոնիկին:

ՆԵՆՆԵԼԷ

Պատրաստ են:

ԼՈՒՍԻՍ

Վերջինը աիկնոջը՝ հիմա գոցեցի: Պարոնիկիները չեմ գիտեր:

ՆԵՆՆԵԼԷ

Երբոր իրենէ հորաքոյրս գայ, պէտք է հայրս իսկոյն կանչել:

ԼՈՒՍԻՍ

Լաւ, օրիորդ:

ՆԵՆՆԵԼԷ

Հայրս մ'ըր է որ:

ԼՈՒՍԻՍ

Չեմ գիտեր: Առաւօտունէ ի վեր է՝ որ տանը մէջ վեր վար կը շրջի: Կու գայ, կ'երթայ, չի կրնար անշարժ կենալ: Ժամ

մը կ'ըլլայ՝ որ՝ իրեն սենեակը մտայ, եկած նամակները տանելու համար, և հայելասեղանին առջեւը կանգնած էր՝ բիւրեղին վրայ մատուցներովը դափ դափ ընելով: Յետոյ ախտուը իջաւ: Յետոյ դարձեալ ասկէց անցաւ: Դուք զինքը չի տեսա՞ք:

ՆԵՆՆԵԼԷ

Այո՛, այո՛: Հազիւ թէ ելայ, զնացի բարեւեցի զինքը:

ԼՈՒՍԻԱ

Մտածէ, որ արդէն հինգին պայուսակը գոցած էր: Եւ զանիկայ վար իջեցնելու համար՝ Անդրէասին ինքն էր որ օգնեց: Աղէկ դիտէր որ բեռնակիրները պիտի գային: Ուղեցի իրեն տեղը բռնել, բայց ճար չեղաւ: Ըսաւ. Թող ինձի, կը զուարճանամ:

Դադար, ետքը գրեթէ լաւով:

Ա՛հ, օրիորդ Նէննէլէ: Երբ կը մտածեմ որ ժամէ՛ մը վերջը...

ՆԵՆՆԵԼԷ

Լուռ կեցիր, լուռ կեցիր:

Զանգակի անդադար դանչիւն:

Բայց ո՞վ է որ այս կերպով կը զարնէ:

ԼՈՒՍԻԱ

Պարոնիկը պէտք է ըլլայ:

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

ԹՈՄԻ և վերոյիշեալները:

ԹՈՄԻ իր սենեկին մուտքին վրայ: Կարճ տալատ հագուած է և բարակ բուրդէ գուլպաներ մինչեւ ծունկը, ալպեան դրօսաաշրջիկի ձեւով: Շապկանց է:

Գասպար, Գասպար ո՞ր է:

ԼՈՒՍԻԱ

Գաւիթն է, թե՛ն համար:

ԹՈՄԻ

Կէս ժամ է որ զինքը կը կանչեմ: Ըսէ իրեն որ վեր գայ լմեցնէ հագուեցնէ զիս:

ՆԵՆՆԵԼԷ

Հայրս զինքը զրկեց: Չե՛ս կրնար դու քեզմէ հագուիլ:

ԹՈՄԻ

Այո՛, շտապելով: Այս նե՛ղ ժամերուս:

ՆԵՆՆԵԼԷ

Իննուկէս է: Ես վեցին ինքնիրենս հա-  
գուեցայ:

ԹՈՄԻ

Ենորհաւորութիւններս:

Լաւ, թող մնայ:

Լուսիայի:

ՅՈՒՐԱՅԻ ԶԱՅՆԸ իրեն սենեկէն:

Լուսիա:

ԼՈՒՅԻԱ

Հրամսէ:

Կը մտնայ Յուլիայի սենեակը:

ՆԵՆՆԵԼԷ

Գոյքերդ պատրաստ են:

ԹՈՄԻ

Այո՛, օրինակ առաքինութեան: Մեծ պա-  
յուսակը պատրաստ է: Գասպար պզտիկը  
գոցելու վրայ էր, երբոր զինքը կանչեցին:  
Փորձեցի որ ես ինծմէ գոցեմ: Բայց դժուար  
կ'ըլլայ: Լոգարանը (տն) չուզէր մէջը մտնալ:

ՆԵՆՆԵԼԷ

Մէկդի թող անիկայ: Ի՛նչ պէտք է:

ԹՈՄԻ

Կեցցե՛ս, Սիււս բաղնիք պիտի չընե՛մ: Աղ-  
քատ, բայց մաքուր:

Փողպատը հանդուցելու հետ:

ՆԵՆՆԵԼԷ

Թող ինձի:

Կը հանդուցէ զանիկայ:

Ո՛հ Թոմի: Ասկէց վերջը ահաւասիկ ես  
հոս սպասաւոր և սենեկապանուհի:

ԹՈՄԻ

Եիտակն ըսէ, որ այս զբաղման տեսակը  
շքեղ կը դուարձացնէ:

ՆԵՆՆԵԼԷ

Ոչ, բայց անոր ցաւէն չեմ մեռնիր:

ԹՈՄԻ

Եւ իրաւունք ունիս: Ասոնք առաջին վայր-  
կենին դիւցազնական որոշողութիւններն են:  
Տեսնաս պիտի: Կը փորձես... բայց հաքը:  
Երբոր օտար երկիր ըլլանք:

ԼՈՒՅԻԱ Յուլիայի սենեկէն դէպ ի մայր դուռը  
կը սկսի երթալ:

ՆԵՆՆԵԼԷ

Վա՛ր կ'իջնաս:



ԼՈՒՍԻՍ

Կ'երթամ տիկնոջը այս տոմսակները տա-  
նելու:

ՆԵՆՆԵԼԵ

Թղթատունը:

ԼՈՒՍԻՍ

Ոչ: Հասցեին:

ՆԵՆՆԵԼԵ

Հիմակ:

ԼՈՒՍԻՍ

Ինձի ըսաւ որ կառք մը բռնեմ:

ՆԵՆՆԵԼԵ

Գնա՛ գնա՛:

Լուսիս կ'երթայ:

ԹՈՍԻ

Անշատման վերջին ողջերթները:

Նէննէլէի դրամ մը կու տայ:

Քեզի:

ՆԵՆՆԵԼԵ

Ի՞նչ է: Ո՛սկի՛ մը:

ԹՈՍԻ

Քեզի ձեռածիր կու տամ: Ա՛ն: Քեզի  
կ'ընծայեմ:

ՆԵՆՆԵԼԵ

Իսկ դո՛ւ:

ԹՈՍԻ

Է՛հ, է՛հ:

Անոնցմէ շատեր ունիմ ըսելու պէս:

ՆԵՆՆԵԼԵ

Այն ատեն շնորհակալ եմ: Գնա շուտ մը  
հագուէ:

Թո՛մի կը սկսի երթալ:

Ինձի նայէ: Եւ ետքը դարձիր հոս, որ քիչ  
մը խօսակցի՛նք դու և ես:

ԹՈՍԻ

Շալերուն ծրարը պիտի շինեմ:

ՆԵՆՆԵԼԵ

Հոս բեր, որ քեզի օգնեմ: Կ'ուզե՛ս:

ԹՈՍԻ

Բայց այ՛ո՛, այ՛ո՛:

Կը մտնայ նորէն սենեակը: Բեռնակիր-  
ները առանց բետի կը դառնան:

ՆԵՆՆԵԼԻ ԲԵՈՆԱԿԻՐՆԵՐՈՒՆ :

Ասկից :

Յուլիայի դուռը կը դարնէ :

ՅՈՒԼԻԱՅԻ ՁԱՅՆԸ

Ո՞վ է :

ՆԵՆՆԵԼԻ

Այս մարդիկը կրնան մտնալ արկղները առնելու :

ՅՈՒԼԻԱՅԻ ՁԱՅՆԸ

Թող գան, թող գան :

Բեռնակիրները կը մտնան :

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

ԱՆԴՐԵԱՍ և վերոյիշեալները :

ԱՆԴՐԵԱՍ առանց համազգեստի : Ճաշարանին խորէն կու գայ բանակիրներու տրցակով մը :

Ատնը մեր խուցերուն, խոհանոցին և սեղանատան բանակիրներն են :

ՆԵՆՆԵԼԻ

Ծառաներուն սենեակներուն շրջանը դռը բեր : Ա՛լ բան մը չմնաց ներսը :

ԱՆԴՐԵԱՍ

Ծառաներուն վերաբերեալ բան մը չմնաց : Ա՛մէնն ալ ես գոցեցի :

ՆԵՆՆԵԼԻ

Ապրիս : Բանալիները դէր հոն սեղանատան մէջի մեծ սպասադարանին մէջ : Ա՛ջակողմի գլորոցին մէջ ուրիշներ ալ կը գտնաս : Թղթիկին վրայ գրուած է :

ԱՆԴՐԵԱՍ

Այո, օրիորդ : Ես ստուգեցի : Ա՛մէն բան կարգին է :

ՆԵՆՆԵԼԻ

Ապրիս :

ԱՆԴՐԵԱՍ

Ուրիշ բան կը հրամայէք :

ՆԵՆՆԵԼԻ

Ոչ, կրնաս երթալ :

Բեռնակիրները սնուկներով մէլսեղէն կ'անցնին :

### ՏԵՍԻԼ ՉՈՐՐՈՐԴ

ՆԵՆՆԵԼԷ և ԹՈՄԻ

ԹՈՄԻ շալերու ծրարի մը մէջ կը բերէ ճամբորդութեան ծածկոց մը քաջազոյն վերնազգեստ մը:

Ահաւասիկ:

Ամէն բան բազմոցին վրայ կը նետէ:

Սպասէ:

Կը դառնայ սենեակը:

ՆԵՆՆԵԼԷ

Շատ բան չըլլայ է՛հ:

ԹՈՄԻ Իր սենեկէն:

Ինչ որ պէտք է:

Դարձեալ տեսարանը կը մտնայ ու բիշ գոյքերով, որոնց մէջ Գէննիսի զուգլխաղի երկու զործերնէր:

Ահա ամէնը: Ի՛նչ է ուղածդ:

ՆԵՆՆԵԼԷ

Ոչինչ: Վայրկեան մը պէտք ունիմ կենալու անձի մը հետ որ միտքս հասկնայ: Հօրս հետ պէտք է զիս զուարթերես ցուցնեմ: Մայրերնիս մեր մայրը չէ: Սոյս երեք ժամ է հոս եմ կարգադրութիւններ ընելու, որ ինձի կը

Թուին յուղարկաւորութեան: Ինձի կ'երեւայ որ մեր տունը կը թաղենք: Եւ հարց: Եւ Խաբը....

ԹՈՄԻ

Ի՛նչպէս կը վհատու կ'իյնաս:

ՆԵՆՆԵԼԷ

Ո՛հ: Վհատիլ: Այդչափ բանով չէ: Տրտմիլ այր: Խիստ շատ, խիստ շատ: Թողուցի սենեակս ալ երբեք ներս չմտնալու համար: Գոցեցի պատուհանները, փակեցի փեղկերն այնպէս մթապատ որ ալ չէի կրնար դուրս գալ: Անկէ ելլալու ժամանակս՝ ունեցայ դրեթէ վախի գգացում մը: Ինձի կ'երեւնար որ անկողնին վրայ զիս մեռած կը տեսնայի: Մեռած էր հոն իմ բովանդակ երիտասարդութիւնս, կեանքիս ծաղիկը:

ԹՈՄԻ զրանիկ մը վառելով:

Խեղճ Նէննէլէ:


ՆԵՆՆԵԼԷ

Հոն ուրիշներ պիտի մտնան, ուրիշներուն պիտի ըլլան... պատերը, կահկարասին, կերպասները: Գիտե՞ն թէ պատուհանին անկիւնը պատին վրայ ինչ գրեցի: Գրեցի. Ով

ՃԻՍԳՈՁՍ. ԴՅՅԱԿԱՆ ԿՐԻՍՏՈՍ



2768 41



որ ալ ըլլաս դու, որ պիտի գրաւես այս սե-  
նեակս, անիծած ըլլաս: Նէննէլէ:

ԹՈՄԻ

Հիմակ ալ մէկը պիտի չի գտնուի որ տունը  
ծտխու առնէ:

ՆԵՆՆԵԼԷ

Ի՞նչպէս: Կը կարծես...

Կը բանայ շաւակալը և ստոլին վրայ  
կը տարածէ:

ԹՈՄԻ ծիծաղելով:

Ոչ, ոչ, ոչ: Հանդարտ ապրէ: Քեզմէ կա-  
խարդուած սենեկի մը մէջ կ'ուղէի ես ինքս  
մանալ: Խեղճ Նիճնի, Նէննէ, Նէննէլէ:  
Այնչափ երիտասարդ և այնչափ սխալալ: Կը  
տեսնես: Երկրաւոր բաներու պէտք չէ սէր  
կապել:

ՆԵՆՆԵԼԷ

Ո՛հ, աղքատութիւնը բնաւ զիս չահարե-  
կեր, գիտես:

ԹՈՄԻ

Եւ սակայն:

ՆԵՆՆԵԼԷ

Ոչ, ոչ: Նայէ, արգէն հօրս ըսի:

Վերնաղբեսաը կը ծալէ:

Անդդիերէն դասեր պիտի տամ: Ժընէվի մէջ  
պէտք է որ գտնուի:

ԹՈՄԻ

Տարակոյս չկայ: Ոչ, ոչ, ոչ: Թեզանիք-  
ները ներս ծալուած:

Թեզանիքները կը ծալէ:

Այդպէս: Եւ ես Դէննիսի դասեր պիտի տամ:  
Քղանցքներուն վրայ հիմակ...

ՆԵՆՆԵԼԷ

Այոպէս:

ԹՈՄԻ

Այո: Վայ քեզի եթէ այդ վերնաղբեսաը  
ճմրտակելու ըլլաս: Լոնտրայի օրինակ մըն է:  
Իսկ մայրս Շիլլոնի լիճը և Դղեակը ջրաներկ  
նկարէ պիտի: Վաճառումը ապահով:

ՆԵՆՆԵԼԷ

Երէկ, գոյներու պաշարը պատրաստեց:

ԹՈՄԻ

Աղէկ ծախուած:

ՆԵՆՆԵԼԷ

Այս առաւօտ վաճառականը եկաւ գրամ-  
ներն ուղելու:

ԹՈՄԻ

Վճարած չէր :

ՆԵՆՆԵԼԷ

Ոչ : Բայց նա իմացեր էր որ կը մեկնինք . . . .  
ամէնքն ալ գիտեն, և հոս վաղեց ինկաւ այն-  
պիսի՝ ձեռով մը, ո՛հ :

ԹՈՄԻ

Իսկ մայրս :

ՆԵՆՆԵԼԷ

Իր սենեկին մէջ փակուած էր : Հարկ եղաւ  
որ դրան ետեւէն խօսիմ : Պատասխան տուաւ  
թէ մեկնելէն առաջ կը զրկէ : Միւսը շշնկոց  
կը հանէր : Ութսուն ֆրանք ես հատուցի :

ԹՈՄԻ

Դո՛ւ :

ՆԵՆՆԵԼԷ

Եւ ուրիշ ութսուն ֆրանք ձեռնոցագործ  
կնկան և վաթսուն խնկեփեց կնկան . . . .  
ամէնքը այսօրերս հոգացեր պատրաստեր էր :  
Հիմա քովս կը մնայ , բայց ի քու ոսկիէդ ,  
քանի մը ֆրանք : Եթէ ուրիշներ ալ զալու  
ըլլան՝ պէտք է հօրս զրկել :

ԹՈՄԻ

Հարկաւ : Սակայն աղէկ ըրիր : Այս վայր-  
կենիս հօրս քով քիչ ստակ պէտք է ըլլայ :

ՆԵՆՆԵԼԷ

Այնչափ յանձնարարեր էր որ ժամանակին  
հաշիւներն իրեն յանձնենք , վասն զի մնա-  
ցորդներ չէր ուզեր թողուլ :

ԹՈՄԻ

Բայց անշուշտ : Այն պատիկ հաշիւները  
պէտք է վճարել :

ՆԵՆՆԵԼԷ

Մեծ ու պատիկ :

ԹՈՄԻ

Կը հասկցուի : Ըսել կ'ուզեմ որ պատիկ-  
ներուն ձայնը աւելի զիլ է :

ՆԵՆՆԵԼԷ

Իրաւ է : Այն մարդիկները խիստ անվստա-  
հութեամբ զիս վերէն ի վար կը դիտէին :  
Այս կահերուն , այս չեղութեանը այնպիսի  
հեղինական կերպով մը կը նայէին որ : Բնաւ  
մեր կործանմանը չեն հաւատար , գիտես :

ԹՈՄԻ

Չէ էհ:

Նէննէլէ գունդխաղի գործիքներուն տուփը  
կ'առնէ ձեռքը:

Գունդխաղի գործիքները կը տանին:

ԹՈՄԻ

Ի՞նչ ըսել է:

Նէննէլէ

Ի՞նչ պիտի ընես որ:

ԹՈՄԻ

Բայց չե՞ս գիտեր որ ժընէվ իմ փառացս  
ասպարէզ մըն է: Հելվետեան Գուպին պա-  
տուակալ ընկերակից մըն եմ: Երկու տարի  
կ'ըլլայ, որ Դէննիսի միջազգային մրցանքին  
յաղթեցի:

Նէննէլէ

Ժամանակները ուրիշ էին:

ԹՈՄԻ

Ի՞նչ է որ փոխուած է: Նուազ հարուստ  
ենք: Ի՞նչ կ'ընես:

Նէննէլէ

Գունդխաղի գործիքները կը ստեղաւորեմ:

ԹՈՄԻ

Դրսէն դնելու է: Փոկերուն տակ, որ տես-  
նուին:

Նէննէլէ

Դու անգամ ուրեմն չես հաւատար մեր  
կործանմանը:

ԹՈՄԻ

Կարծիքի խնդիր է:

Նէննէլէ

Այն գոյներու վաճառականը կ'ըսէր՝ որ  
միլիոնները ձիւթով ծեփուած են. ով որ զա-  
նոնք ձեռքերուն մէջ առած է միանգամ, ա-  
նոնցմէ միշտ մատներուն կպած կը մնան: Ե-  
ղմեզ նախատելու համար կ'ըսէր այս բանս:

ԹՈՄԻ

Մէջը Ի՞նչ չարութիւն կայ որ:

Նէննէլէ

Այն ատեն այս աղքատութիւնս կեղծեալ  
կրնայ համարուիլ: Երբ մէջը չարութիւն չըլ-  
լայ, ինչո՞ւ կեղծել:

ԹՈՄԻ

Մէկ խօսքով, դու կ'երեւակայես բուն սեւ խեղճութիւնը, առատաղը, խշտեակը և ուղորմութեան արդուզարդով տիկիները՝ որ պիտի գան բերելու մեզի ամբողջ ընտանեաց համար բոլորէ ծածկոցը:

ՆԵՆՆԵԼԷ

Յրէկ, Լուսիան աղաչեց հօրս՝ որ զինքը մեզի հետ տանի... և առանց թոշակի կուզար: Հայրս արտասուալից աչքերով իրեն շնորհակալ եղաւ, ես տեսայ, և պատասխանեց որ իրեն միջոցները չէին ներեր զինքը տունը պահելու:

ԹՈՄԻ

Ամնպիսի բաներ են որ:

ՆԵՆՆԵԼԷ

Կեզժիք մըն է՝:

ԹՈՄԻ

Ի՛նչ կ'ուզես որ քեզի ըսեմ: Քառասուն տարի առաւօտուընէ մինչեւ իրիկուն աշխատութիւններու մէջ անցընող մարդուն կենաց զգացումը, տարբեր է մերինէն, որ փափով

բաներու, և գեղեցկութեան հայեցողութեանը մէջ մեծցած ենք: Մեր զգացումներն անօգուտ իրերը կը բարձրացնեն: Մենք կը ներկայացընենք գերագոյն մարդկութիւն մը: Իրականութիւնը ոչ դու ոչ ես կ'ընենք:

ՆԵՆՆԵԼԷ

Դու սակայն անոր շնորհքներն ընդունելու տրամադիր ես:

ԹՈՄԻ

Ինչ որ կը գտնամ անիկայ կ'առնեմ:

ՆԵՆՆԵԼԷ

Ինձի խեղճութիւնը փափագելի պիտի ընել տաս:

ԹՈՄԻ

Ճաշակի խնդիր: Ասով մէկտեղ, կ'երգունում որ բան մը չեմ գիտեր:

ՆԵՆՆԵԼԷ

Ուրեմն գէշ մի մտածեր:

ԹՈՄԻ

Կ'ուզե՞ս որ գէշ չի մտածեմ: — Եղաւ գնաց: Գէշ չեմ մտածեր:

ՆԵՆՆԵԼԷ

Քեզի հետ արջորէն չի խօսուիր: Օգնէ ինձի, որ փոկերը սղմեմ:

ԹՈՄԻ

Խնդճ Լուսիա է՞հ. առանց թռչակի կուգար:

ՆԵՆՆԵԼԷ

Մէկ հատիկ անձն է՝ որուն հետ կը համարձակիմ դեռ դուով խօսելու: Սովորական մարդիկներու պէս հազուած ծառաներէն կ'ականածեմ:

ԹՈՄԻ

Ո՛հ, ես չէ: Այս առաւօտ Գասպար սեւեակս մտաւ, ճատրակաւոր միօրինակ զգեստ մը հազուած, իմ անցած տարուան թողուցածս... և դեղին կօշիկներով: Եւ սակայն... տեսա՞ր զի՞նքը:

ՆԵՆՆԵԼԷ

Ուշ չի դրի:

ԹՈՄԻ

Կարծես թէ ձեռքըդ անհետ մըն էր: Անմօրուս ինչպէս որ է....

ՆԵՆՆԵԼԷ

Բան մըն ալ չի պակսիր իրեն:

ԹՈՄԻ

Յայտնի է թէ աւելի նշանաւոր կերպարանք ունի՞ քան մեր Մաքսիմոս հօրեղբայրը.... մականուանեալ Աղատարար:

ՆԵՆՆԵԼԷ

Քիչ բան կ'ուզէ:

ԹՈՄԻ

Մտածէ՛, որ հոն Սիւիս միշտ մեր ոտքերուն առջեւ պիտի ունենանք:

ՆԵՆՆԵԼԷ

Աւելի դէշը: Ինքը զմեզ իրեն ոտքերուն առջեւ պիտի ունենայ:

ԹՈՄԻ

Եւ ի՞նչպէս ալ աղուոր սանամաններ հազուած է: Կը յիշես այն հիանալի կիսակօշիկները:

ՆԵՆՆԵԼԷ

Իսկ ժիյե՞ն: Կը կարծէր թէ յանկարծակի պիտի բերէ, զիտե՞ս:



ԹՈՄԻ

Նախապաշարմունք չունի:

ՆԵՆՆԵԼԷ

Հաստատամիտ է:

ԹՈՄԻ

Իրահամարձակ է:

ՆԵՆՆԵԼԷ

Գոհ է:

ԹՈՄԻ

Եւ ուզէ պիտի հետոյ կարգուիլ:

ՆԵՆՆԵԼԷ

Եւ զինքը ճամբայ կը դնենք:

ԹՈՄԻ

Իր հօրեղբորը ամիսը, իրրեւ ոռճիկ, ա-  
ռաջարկել էրկու հարիւր յիսուն ֆրանք:

ՆԵՆՆԵԼԷ

Չեմ հասկնար թէ հայրս ինչպէս ընդու-  
նեցաւ:

ԹՈՄԻ

Բայց ես հոն այն տեղն եմ:

ՆԵՆՆԵԼԷ

Ո՛հ Թոմի: Բաղդ է որ դու կաս: Տխուր,  
տխուր էի և դու զիս բուրբուլին մխիթարեցիր:

ԹՈՄԻ

Ինձի թող, ինձի թող:

ԳԱՍՊԱՐ, ճատրակաւոր միօրինակ զգեստով  
մը մայր դունէն կ'երեւնայ:

ՆԵՆՆԵԼԷ

Ահա Գասպարը:

ԹՈՄԻ

Երենէկ զինքը տեսնողին:

ԳԱՍՊԱՐ

Գաւիթն էի:

ԹՈՄԻ ՆԵՆՆԵԼԷ:

Երեսը նայէ, պարոն մը չերեւնար:

ԳԱՍՊԱՐ

Հրամաններ ունի՞ր տալու:

ԹՈՄԻ

Բայց, եթէ չեմ սխալիր, լողարանն (տսb)  
ալ կար դեռ որ սակառին մէջ պիտի դրուէր:

ԳԱՍՊԱՐ

Հիմա կ'երթամ:

ԹՈՄԻ

Եթէ կը բարեհաճիս:

ԳԱՍՊԱՐ կը մտնայ Թոմիի սենեակը:  
Վերջինս ետեւէն կ'երթայ:

ՆԵՆՆԵԼԵ Թոմիի՝ որ Գասպարին ետեւէն կ'երթայ:  
Թոմի, ծաղրածու թեամբ մը տակէն ելար,  
բայց իրեն դու չըսիր:

ԹՈՄԻ

Կը վախնայի որ ինձի փոխարէնը տար:  
Կ'երթայ:

ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՆԵՆՆԵԼԵ, ԱՆԴՐԷԱՍ, յետոյ ԼԱՊԼԱՆՇ տիկինը  
պզտիկ աղջիկով մը, յետոյ ՅՈՒԼԻԱ:

ԱՆԴՐԷԱՍ

Օրիորդ: Լապլանշ տիկինը եկեր է:

ՆԵՆՆԵԼԵ

Գերձակուհին: Ի՞նչ կ'ուզէ:

ԱՆԴՐԷԱՍ

Տիկինը կը հարցնէ: Պզտիկ աղջիկը հետն  
է տուփով մը:

ՆԵՆՆԵԼԵ

Տէր Աստուած: Իրեն չըսիր:

ԱՆԴՐԷԱՍ

Ըսի: Բայց կը պնդէ կը կենայ:

ՆԵՆՆԵԼԵ

Նայէ թէ հայրս իր սենեակն է:

ԱՆԴՐԷԱՍ

Չկայ: Հիմա հիմա տեսայ զինքը՝ որ պար-  
տիպպանին հետ խօսելու վրայ էր: Կանչեմ:

ՆԵՆՆԵԼԵ

Ո՛չ ոչ: Ո՛ւր է որ:

ԱՆԴՐԷԱՍ

Ծաղկանոցին մէջ:

ՆԵՆՆԵԼԵ

Ներս մտցուր:

Անդրէաս կը հնազանդի:  
ԼԱՊԼԱՆՇ տիկինը կը մտնայ:  
Պզտիկ աղջիկը դրան մօտ ա-  
թոռի մը վրայ կը դնէ տուփը  
և կը կենայ խօրը:

ՆԵՆՆԵԼԻ ԱՆՊՐԷՄԱՐ:

Տիկնոջ իմացուր:

Անորէսա կը հնազանդի, յետոյ կ'երթայ:

ԼԱՊԼԱՆՇ

Բարի լոյս, օրիորդ:

ՆԵՆՆԵԼԻ:

Աստուծոյ բարին: Մայրս հիմայ կու գայ:

Կ'երթայ ճաշարանը:

ՅՈՒԼԻՍ Իր սենեկէն կու գայ ճամբորդութեան  
ամենազեղեցիկ հագուստով մը:

Զմեզ մեկնելու վրայ կը գտնաք, տիկին  
Լապլանշ:

ԼԱՊԼԱՆՇ

Երէկ երիկուն Ալբրովինի տիկինն ըսաւ  
ինծի: Աճապարեցի շուտ մը ձեր զգեստը  
լմնցնելու: Ազդիկներս բոլոր զիշերը աշխա-  
տեցան:

ՅՈՒԼԻՍ

Շնորհակալ եմ, բայց փութալու բան չկար:  
Մանաւանդ թէ ձեզի գրելու վրայ էի: Յան-  
կարծահաս սուգ մը....

ԼԱՊԼԱՆՇ

Ո՛հ, կը ցաւիմ:

ՅՈՒԼԻՍ

Եւ կ'ուզէի աղաչել թէ արդեօք կրնա՞ք  
ուրիշ կերպով մը կարգադրել այն զգեստին  
համար:

ԼԱՊԼԱՆՇ

Եթէ տիկինը ինծի ըսած ըլլար երկու կամ  
երեք օր առաջ....

ՅՈՒԼԻՍ

Իրաւունք ունիք.... մտքէս անցաւ: Եթէ  
հարկ ըլլայ վրան բան մը տալ.... Հիմա  
չեմ գիտեր անգամ թէ ինչպէս հետս տա-  
նիմ: Այսպէս շուտ չէի սպասեր:

ԼԱՊԼԱՆՇ

Իրաւ է, բայց որովհետեւ աւելի ուշ գալով  
զձեզ պիտի չկարենայի գտնալ....

ՅՈՒԼԻՍ

Աղէկ, աղէկ: Ինծի կը զրկէք այն ատեն:

ԼԱՊԼԱՆՇ

Ինչպէս որ կը հրամայէք: Պզտիկ աղջկան:

Գնա դու:

Պզտիկը տուփը թողով կը սկսի երթալ:

Ոչ, սա նորէն: Պզտիկը կ'իւրայ տուփով:

ՃԻՍԳՈՋԱ. ԴՅՈՂԵՍ ԵՐԵՒԱՆԻՆԵՐԸ. 4

ՅՈՒԼԻԱ

Հասցէս կը ղրկեմ:

ԼԱՊԼԱՆՇ

Դեռ այն պզտիկ հաշիւն ալ կայ:

ՅՈՒԼԻԱ

Այն ալ զգեստին հետ մէկտեղ ղրկեցէք:

ԼԱՊԼԱՆՇ

Պնդելու ստիպուած ըլլալու մահացած եմ, բայց չեմ կրնար սպասիլ:

ՆԵՆՆԵԼԷ ճաշարանին խորէն կ'ելլայ  
ընելէքը որոշած:

ՅՈՒԼԻԱ

Այս վայրկենիս....

ԼԱՊԼԱՆՇ

Մեծ գումար մը չէ: Հազար երեք հարիւր ֆրանք:

ՅՈՒԼԻԱ

Ճիշդ մեկնելու ժամուն: Այս ընելու բան չէ: Վերջապէս երեք ամսուան հաշիւ մըն է: Եւ երբեք ձեզի փող մը կորսնցնել չտուի:

ԼԱՊԼԱՆՇ

Ճշմարիտ է, բայց չէի ուզեր հիմակուց սկսիլ: Տիկինը շատ լաւ գիտէ որ զբօսանքի ճամբորդութեան մը չէ և ոչ զիւզազնացութեան համար է որ կը մեկնի: Պարոն Ռոզանին իրեն պարտատէրներէն դիւրութիւն մը ստացաւ: Եթէ ժամանակին տեղեկութիւն ունենայի, կու գայի ես ալ կ'երեւնայի: Երէկ իրիկուն իմացայ: Վաճառական եմ, ընտանիք ունիմ, պէտք է իմ շահերս մտածեմ: Եթէ պատշաճ կը դատիք որ ձեր ամուսնոյն դիմեմ....

ՅՈՒԼԻԱ

Ոչ, ոչ, ոչ:

ԼԱՊԼԱՆՇ

Քիչ մը ամօթը իսկոյն կ'անցնի:

ՅՈՒԼԻԱ

Ոչ, ոչ:

Կը սկսի երթալ դէպ ի իր սենեակը, յետոյ կը ստրջանայ և թոմիի դուռը կը գարնէ: Թոմի: Կարելի՞ է մտնալ:

ԹՈՄԻԻ ԶԱՅՆԸ

Վայրկեան մը: Հիմա կու գամ:

ՅՈՒԼԻԱ Լապլանչի:

Հազար ընենք: Այն զգեստը ձեր քով մնայ:

ԼԱՊԼԱՆՇ

Հազար հարիւր այն ատեն:

ՅՈՒԼԻԱ

Հարիւր ֆրանք շնորհով:

ԼԱՊԼԱՆՇ

Եւ կը կորսնցնեմ:

ՅՈՒԼԻԱ

Հազար ֆրանք կու տամ: Փող մը աւելի չէ:

Տ Ե Ս Ի Լ Վ Ե Յ Ե Ր Ո Ր Դ

ԹՈՄԻ և վերոյիշեալները:

ԹՈՄԻ կը մտնայ:

ՅՈՒԼԻԱ շէնքը կը ասնի մէկ կողմ:

Ինծի 500 ֆրանք տուր: Գիտեմ թէ ունիս: Հաշիւ մըն է որ մոռցայ հօրդ յանձնելու: Եթէ հիմա իրեն ըսեմ՝ լացեր պիտի ըսան: 1000 ֆրանքի հաշիւ մըն է: Մէկաւ 500ը ունիմ:

ԹՈՄԻ

Աւելի չունիս:

ՅՈՒԼԻԱ

Հրաշք է այնչափին ալ հասնիս:

ԹՈՄԻ Թերահաւատ և ծաղրասէր:

Մայր:

ՅՈՒԼԻԱ

Ո՛հսկից պէտք է առնեմ զանոնք: Զիս տաղնապի մէջ մի ձգեր:

ԹՈՄԻ

Գրաւ դնեմ որ ծրարիկ մը մէկչի դրած ես:

ՅՈՒԼԻԱ

Ճշմարիտ Աստուած, չէ: Խօսքս մի կտորեր: Տուր ինծի:

ԹՈՄԻ

Դուրս հանէ քու 500դ:

ՅՈՒԼԻԱ

Շնորհակալ եմ: Երթամ առնեմ:

Վազելով կը մտնայ իր սենեակը:

ԹՈՄԻ Կէս շնչով կը սուլէ՝ ծունկերուն վրայ  
օրօրուելով, յետոյ Լապլանշ տիկնոջ կը նայի:

Աղէկ հագուած է:

Գլանիկ մը կ'առնէ և կը վառէ:

Ուրէ՛ղղին զո՛ւք էք հագուեցնողը:

ԼԱՊԼԱՆՇ

Երգչուհի՛ն: Այո, պարոն:

ԹՈՄԻ

Ուրախակցութիւններս: Երէկ իրիկուն  
ծաղկափայլ սիրուն հագուատիկ մը ունէր:

ԼԱՊԼԱՆՇ

Մոլոշագոյն մետաքսէ:

ԹՈՄԻ

Անիկայ:

ԼԱՊԼԱՆՇ

Ա՛յնպէս գեղատեսիլ անձ մըն է:

ԹՈՄԻ

Քառասուն հարիւրորդամետր մէջքով:

ԼԱՊԼԱՆՇ

Դո՛ւք կ'օգնէք իրեն հագուելու:

ԹՈՄԻ

Ե՛ս: Կը խաբուիք: Հակառակը:

ՅՈՒԼԻՍ քիչ մը տագնապած

կը դառնայ 1000նոց թղթադրամով մը որ

կ'ուզէ ծածկել: Թոմի:

Ահաւասիկ:

ԹՈՄԻ

Ա՛հ: Մնացածը պէտք է տաս: Ունեցածս  
1000նոց թուղթ է միայն:

ՅՈՒԼԻՍ զժկամակած:

Ո՛չ:

ԹՈՄԻ

Այս այս է: Մօրուիս վրայ չեմ վստա-  
հիր: Մնացածը ինծի և պատրաստ եմ:

ՅՈՒԼԻՍ տագնապած:

Այն կայ որ... չեմ կրնար....

ԹՈՄԻ ծիծաղելով:

Դո՛ւ ալ: Ա՛հ տես ի՛նչ աստիճանի ազահ:  
Դո՛ւ ալ 1000նոց թուղթ մը ունիս: Ճշմարիտ  
Աստուած: Լաւ, հիմա քուկիներովդ վճարէ:  
Հաղիւ թէ կոտրեմ՝ իմ մասս կու տամ քեզի:

ՅՈՒԼԻԱ

Խօսք կու տամս :

ԹՈՄԻ

Մարդու խօսք :

ՅՈՒԼԻԱ Լապլանշ տիկինջ :

Ձեզի, տիկին Լապլանշ :

ԼԱՊԼԱՆՇ

Շնորհակալ եմ : Ո՛ւր կրնամ զրել ընկալագիրը :

ՅՈՒԼԻԱ տարազարդ կահերուն նայելով :

Ա՛լ հոս բան չկայ :

ԹՈՄԻ

Հոն գոնուդին վրայ :

ԼԱՊԼԱՆՇ կ'երթայ ընկալագիրը գրելու : ետքը կը յանձնէ զայն Յուլիայի :

Ահա, տիկին : Ձեր ուզածին պէս ըրի :

**ՏԵՍԻԼ ԵՅԹՆԵՐՈՐԴ**

Վերոյիշեալները, ՅՈՎՀԱՆՆԷՍ մայր դռնէն :

ՅՈՎՀԱՆՆԷՍ տիկին Լապլանշի :

Ներումն կը խնդրեմ եթէ սպասեցնել տուի : Ինծի համար հաշիւ մը ունիք :

ԼԱՊԼԱՆՇ

Ընկալագիրը հիմա ստորագրեցի :

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Ահ : Լա :

ԼԱՊԼԱՆՇ

Բարի ճանապարհ, տիկին :

ՅՈՒԼԻԱ

Յտեսութիւն :

Կ'երթայ Լապլանշ տիկինը :

ՅՈՎՀԱՆՆԷՍ Յուլիայի :

Երէկ ինծմէ խնդրեցիր ութսուն ֆրանք, գոյներ գնելու համար : Պաղատեցայ քեզի ծախքեր չընել, քեզի ըսի որ ունեցած դրամներս համրուած են : Պնդեցիր, երդուըննալով որ փող մը չունիս : Ա՛յնպէս մահացած էի : Ա՛յնչափ պնդեցիր որ քեզի տուի :

ԹՈՄԻ ինքնիրեն :

Նայէ :

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Ո՞րչափի կ'ելլայ այն հաշիւը :

ՅՈՒԼԻԱ

Ո՛հ քիչ . . .

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Յուզուր:

ՅՈՒԻՍ

Թոմիին աղաչեցի, ինքն ըրաւ: Չէի համարձակեր զքեզ անհանգիստ ընելու չնչին բանի մը համար:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Յուզուր:

Կ'անէ հաշիւը և կը կարգայ: Թոմիի: Դո՛ւ հազար ֆրանք հատուցիր:

ԹՈՄԻ

Կէսը, կէսը:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Դու ալ հարուստ ես:

ԹՈՄԻ

Գէ՛շ ըրի հատուցանելուս:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Շատ աղէկ ըրիր: — Այն դրամներն որ կ'ինս ունի, ինձմէ ստացաւ: Տանը վրայ եղած խնայողութիւններուն պատուո՞ն է, կը ցաւիմ զինքը զրկելուս, բայց, ըստ ինքեան, տանը կը պատկանին: Սակայն դու, ինձմէ

չափր: Երկու ամիս է կը տեսնայի կործանմանը դալը, քու դատարկասրտութիւնը կեանքդ երկայն ատենէ ի վեր զիս կը վշտացնէր, քսակս քեզի համար գոցուած էր... Ուրեմն քու կ'իններդ են: Եւ քեզի ետ կը դարձնեմ:

ԹՈՄԻ

Ո՛հ հայր:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Կ'ուզեմ որ առնես:

Ստուին վրայ թղթադամ մը կը դնէ:

Եւ եթէ կը խորշիս առնելու զանոնք, աչէկ տեղ մը կը դրուին: Պահէ: Ո՛վ գիտէ թէ որ մը....

ԹՈՄԻ

Խաղի մէջ յաջողութիւն ունեցայ: Տաւուերկու հազար ֆրանք շահեցայ անցած ամիս:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Գիտէի: Մինչդեռ ես սնանկութեան սարսափին մէջ կը մաքառէի, դու գիշերը գունդ-խաղարաններու մէջ կ'անցընէիր:

ԹՈՄԻ

Գունդխաղարաններո՛ւ մէջ: Գլուպը:



ՅՈՎՀԱՆՆԵՍ

Գիշերուան մը մէջ ութհազար ֆրանք վաս-  
տըկեցար: Իմացայ առաւօաը: Նոյն այն օրը որ  
պարտատէրներս կանչեցի: Չքեզ աշխատա-  
նոցս բերել տուի, յայտնեցի քեզի իմ գոր-  
ծերուս վիճակը: Չէի ուզեր սկսիլ յանդիմա-  
նութիւններով... չէի ուզեր ցուցնել քեզի  
թէ գիտէի: Քու մէկ բարեմիտ շարժմունքիդ  
կը սպասէի: Խօսք մը անգամ չըսիր: Սիրտս  
կոտորեցաւ: Ագահ չես: Գիտեմ թէ ինչ կը  
մտածես:

Լուսին. յետոյ ձայնը փոխելով երկուքին ալ:  
Նայեցէք որ քիչ ատենէն Մաքսիմոս հոս պի-  
տի ըլլայ: Հասած պէտք է ըլլայ այս առա-  
ւօտ, և ճամբորդութիւնը մեզի հետ պիտի  
ընէ, կ'ենթադրուի: Գիտեմ թէ ձեզի հա-  
ճելի մէկը չէ, և ոչ ալ Նէննէլէի: Եւ կը  
հասկցուի: Արդէն Նէննէլէի ըսի ինչ որ ի-  
րեն կ'իյնար, և ձեզի ալ կ'ըսեմ որ քեթու-  
պոչ չեմ ընդունիր:

ԹՈՄՍ

Եթէ ես երբեք ըրի...

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Մաքսիմոս ամենամօտ ազգականէ, և մէկ-

հատիկ անձն է որ ինծի օգնութեան հասած  
ըլլայ այս մըրկիս մէջ: Շատ տարիներէ ի  
վեր զինքը չէի տեսնար, միշտ աշխարհքիս  
մէջ, շրջագայիկ, աշխատելով սպրեցաւ. զին-  
քը չի կանչեցի, և ինքիբմէն ցուցուց թէ  
ողջ է: Առանց անոր, ազէկ գիտցած ըլլաս,  
Թոմի, չեմ գիտեր թէ ինչ կ'ըլլար մեզի:  
Այս ալ ըսեմ: Մտտանէն կ'անցնինք, վասն  
զի երկաթուղիները ձրի ճամբորդութիւն  
շնորհեցին ինծի, իբրեւ հին խորհրդականի,  
և անոր համար իտալական զիծերու վրայ  
որչափ որ կարելի է պէտք է անդին երթալ:  
Նոյն պատճառաւ ասկէ մինչեւ Մոտան պի-  
տի ճամբորդենք առաջին կարգով: Բայց,  
կ'իմացընեմ ձեզի, որ Մոտանէն անդին եր-  
կրորդը բաւական է:

ԹՈՄՍ:

Կը ցաւիմ քու կարճ տաքատիդ համար, բայց  
այն գեղեցիկ հաղուստը ուրիշ շատ բաներ  
ալ պիտի տեսնայ և պիտի վարժուի: Կէս  
ժամէն տունէն կը մեկնինք: Կ'ազաչեմ ճիշդ  
ժամանակին պատրաստ ըլլաք:

ԹՈՄՍ

Ամէն բան ըսիր: Գիտես թէ ինծի իբրեւ  
թշնամիի ժը հետ խօսեցար:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ուժգնութեամբ թամիի գլուխը ձեռքերուն մէջ կ'առնէ և նահատար կը համբուրէ :  
— Հեծկլտանք մը զսպելով :

Այս տանս մէջ մեծնալը տեսայ : Չի փղձկինք : Քեզի դաս ըլլայ, սորվէ :  
Կը փախչի եր սենեակը, ետքը կ'երեւնայ : Քոյրս եկան :

ԹՈՄԻ

Հօրաքոյրս Լուսիան : Ոչ :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Երբոր դայ, շուտ մը զիս կանչեցէք :

ՏԵՍԻԼ ՈՒԹԵՐՈՐԴ

ՅՈՒԼԻՍ, ԹՈՄԻ, ետքը ՆԵՆՆԵԼԷ, ետքը ԼՈՒՍԻՍ :

ՅՈՒԼԻՍ

Պէտք է կարեկից ըլլալ, վասն զի գլուխը տկար է : Եթէ խորհուրդներուս մտիկ ըրած ըլլար, այս բաներուս չէինք հասներ :

ԹՈՄԻ

Խորհուրդներդ :

ՅՈՒԼԻՍ

Ես կը հասկնամ : Կ'ուզէի գոնէ խնայել իրեն հիմա այս ծախքս :

ԹՈՄԻ

Ո՛հ : Եթէ քեզի մնար, կը խնայէիր իրեն թէ հիմա թէ հոգը : Եթէ Լապլանչ տիկինը չի վազեր, Սիւսէն ալ ստակի երես չէր տեսնար :

ՅՈՒԼԻՍ

Ա՛յնչափ դրամներ առաւ որ : Նայէ որ այն ստակը հոն մնաց :

ԹՈՄԻ

Ազէկ գիտես որ իմս չէ : Քեզի հաճոյք ընելու համար յանդիմանութիւնները կերայ :

ՅՈՒԼԻՍ թղթազրամը կ'առնէ :

Ըսել է որ ալ ինծի պարտական չես : Ի՞նչ կը համարիս : Ամէնուզ համար կը պահեմ արդէն : Կարօտութեան վայրկենին զանոնք պիտի գտնաք :

ԹՈՄԻ

Բայց յայտնի է :

ՅՈՒԼԻՍ.

Տասուերկու հազար ֆրա՞նք վաստկեցար :  
Անցած օր ինձի վեց ըսած էիր :

ԹՈՄԻ

Վեցէն՝ ինծմէ հինգհարիւր խնդրեցիր :  
Եթէ քեզի տասուերկուք ըսած ըլլայի, հա-  
զար պիտի ուզէիր : Ասկէ զատ, մեծագոյն  
մասը գնաց : Ես ալ քանի մը հաշիւ ունէի  
հատուցանելու :

ՅՈՒԼԻՍ.

Ամօթ :

ԹՈՄԻ

Ամօթ՝ պարտքերս հատուցանելուս համար :

ՅՈՒԼԻՍ.

Խաղալուդ համար :

ԹՈՄԻ

Ե՛ս ալ այն կ'ուզէի ըսել : Քիչ մը բարոյա-  
կա՞ն խրատ :

Նէննէլէ ճաշարանին խորէն կը մտնայ :

ՅՈՒԼԻՍ.

Հոս եկուր, հոս եկուր : Հայրդ դու գնա-  
ցիր կանչելու, էհ :

Նէննէլէ

Այո՛ :

ՅՈՒԼԻՍ.

Աղու՞ր բան : Ետեւէս լրտեսութիւն կ'ընես :

ԹՈՄԻ մէջտեղը մտնալով : Նէննէլէի :

Պատասխան մի տար :

ԼՈՒՍԻՍ մայր դռնէն կը մտնայ տոմսակով  
մը՝ զոր Յուլիայի կը յանձնէ :

ՅՈՒԼԻՍ կ'առնէ զայն, կը բանայ և փութով  
կը կարգայ :

ԹՈՄԻ վերասացեալ դորձերուն միջոց : Նէննէլէի :

Եւ չէ՞ս մտածեր որ քեզի համար ես հոս  
եմ : Ստահակ մը կրնամ ըլլալ, սակայն . . . .

Նէննէլէ

Ինչու ա՞յդպէս կ'ըսես :

ԹՈՄԻ

Վասն զի ճշմարիտ է :

ՅՈՒԼԻՍ Լուսիայի :

Տոմսակներն անձամբ ներկայացուցիր :  
ՃԻԱԳՈՋԱ. ԴՅԱԿԷՍ տերեւոնորդ.

ԼՈՒՍԻԱ

Փիլիպպոս կոմսը դեռ կը քնանար: Սե-  
նեկապան կնոջ տուի: Սանդուղին վրայ պա-  
րոն Սարծանային հանդիպեցայ և ըսաւ որ  
կայարան պիտի երթար: Տէր Մեքայէլը ինքը  
նախասենեակը եկաւ այդ տոմսակը յանձնե-  
լու: Հարցուց թէ ո՞ր ժամուն կը մեկնէիք.  
նա ալ կայարան պիտի գտնուի:

ՅՈՒԼԻԱ

Ծաղիկներ պիտի բերեն:

ԼՈՒՍԻԱ

Արդէն անդին են: Ծառան հետս եկաւ:

ՅՈՒԼԻԱ

Գնա առ զանոնք:

Լուսիա կ'երթայ: Յուլիա  
տոմսակը նորէն կը կարգայ:

ԹՈՍԻ կամացուի Նէննէլէի:

Ճամբորդութեանը համար ծաղիկները պո-  
կաս էին:

ՆԵՆՆԵԼԷ Ի. Վ. ԹՈՄԻԻ:

Ծաղկազարդելու աղուոր ճամբորդութիւն:

ԼՈՒՍԻԱ կը դառնայ ծաղիկներով:

ՅՈՒԼԻԱ զանոնք կ'առնէ:

Ո՛հ սիրուն են, սիրուն:

ՆԵՆՆԵԼԷ

Մայր, կրնա՞նք գոցել ներսը սենեակդ:

ՅՈՒԼԻԱ

Այո՛: Լուսիան թող գայ:

Ծաղիկները Նէննէլէի կու տայ:

Ա. Տեղ մը դիր որ շաւրուին:

ՆԵՆՆԵԼԷ բազմոցին վրայ կը նետէ զանոնք:

ՅՈՒԼԻԱ

Ի՞նչ կերպ է ատիկայ:

ՆԵՆՆԵԼԷ

Ո՛ւր պիտի դնէի:

ՅՈՒԼԻԱ կը նայի իրեն, յետոյ Լուսիայի:

Հետս եկուր:

ՅՈՒԼԻԱ Նէննէլէի կը մօտենայ փայփայող:

Օրիորդ:

ՅՈՒԼԻԱ

Երթանք:

Լուսիայի հետ սենեակը կը մտնայ:

## ՏԵՍԻԼ ԻՆՆԵՐՈՐԴ

ՆԵՆՆԵԼԷ, ԹՈՄԻ, յետոյ ԱՆԳՐԷԱՍ,  
յետոյ ՄԱՔՍԻՄՈՍ :

ՆԵՆՆԵԼԷ

ԽԵԼՔԸ այս բաներուս տալու բուն օրն է,  
այսօր :

ԹՈՄԻ

Ո՛հ : ՍԻԼԻԱ երթալնուս համար պիտի չի  
մեռնինք :

ԱՆԳՐԷԱՍ մայր դռնէն :

Գասպարը բեռներով կրնամ ղրկել, յանձ-  
նելու համար :

ԹՈՄԻ

Իմ պայուսակներս :

ԱՆԳՐԷԱՍ

Գասպար զանոնք սանդղիկէն վար իջեցը-  
նել տուաւ :

ՆԵՆՆԵԼԷ

Ղրկէ զինքը :

ԱՆԳՐԷԱՍ

Գիտէք թէ պարոն Ռոզանին հասաւ...  
եղբորորդին :

ՆԵՆՆԵԼԷ

Մաքսիմոս : Ո՛չր է :

ԱՆԳՐԷԱՍ

Հիմա պատուհանէն տեսայ որ պարտէզին  
մէջէն կ'անցնէր :

ՆԵՆՆԵԼԷ

Կառքը պատրանտ է :

ԱՆԳՐԷԱՍ

Լծելու վրայ են :

ՄԱՔՍԻՄՈՍ մայր դռնէն :

Բարի լոյս :

Անդրեաս կ'երթայ :

ՆԵՆՆԵԼԷ

Ո՛հ Մաքսիմոս : Ե՛րբ հասար :

ՄԱՔՍԻՄՈՍ

Այս առաւտ եօթին, ուղղակի Պուտա  
Բեշտէն : Բարի լոյս, Թովմաս :

ԹՈՄԻ

Սիրելիդ Մաքսիմոս :

ՄԱՔՍԻՄՈՍ

Դ՞ու ալ կը մեկնիս :

ԹՈՄԻ

Այնպէս որոշուած չէ՞ր :

ՄԱՔՍԻՄՈՍ

Երբ ; տասը օր կայ , ելայ դացի , հօրեղբայրս դեռ երկմիտ էր թէ արդեօք մինակ գար թէ զձեզ ալ հետը տանէր : Բայց հիմա բեռները տեսնալովս՝ հասկցայ որ ամէնքնիդ ալ գալու էք :

ՆԵՆՆԵԼԷ

Շատ ենք է՛հ :

ՄԱՔՍԻՄՈՍ

Երբէք : Աւելի լաւ է , աւելի լաւ : Իսկ հօրեղբայրս :

ԹՈՄԻ

Կանչեմ զինքը :

Յովհաննէսի դուռը կ'երթայ :

Հայր , Մաքսիմոսը հոս է :

ՄԱՔՍԻՄՈՍ ՆԵՆՆԵԼԷ :

Ի՞նչպէս է տրամադրութիւնը : Ինքզինքը գտա՞նք քիչ մը :

ՆԵՆՆԵԼԷ

Հանդարտ է :

ՄԱՔՍԻՄՈՍ

Իսկ դ՞ու : — Կը ցաւի՞ս երթալուդ վրայ :

ՆԵՆՆԵԼԷ

Անհամբեր մեկնելու ժամուն կը սպասեմ :

ՄԱՔՍԻՄՈՍ

Այդ չըսեր : Շատ կը ցաւի՞ս :

ՆԵՆՆԵԼԷ

Չէի ուզեր մնալ :

ՄԱՔՍԻՄՈՍ

Ուրիշ պատասխան մը որ պատասխան չէ : Երկու եղբարց զաւակներ ենք , մէկմէկու հետ դուով կը խօսինք , երկուքնիդ ալ հաճելի էք ինձի , բայց աշխարհք զալերնէս ի վեր , ընդամէնը իրարու հետ երկու ժամ տեսնուած ենք անցած շարաթ :

ԹՈՄԻ

Ես կը յիշեմ որ երբոր զքեզ տեսայ, տա-  
սուերիւս տարուան կայիր : Զողի մը պէս  
երկայն բարակ բան մըն էիր : Ես տասը տա-  
րեկան էի և Նէննէլէ Հինգ :

ՄԱՔՍԻՄՈՍ

Ես Իրենէն ամենեւին չեմ յիշեր :

ՆԵՆՆԵԼԷ

Եւ ոչ ես զքեզ :

ՄԱՔՍԻՄՈՍ

Կը հասկցուի : Թո՛վմասը այո՛ : Զքեզ կ'ա-  
տէի վասն զի իմինէս աւելի գեղեցիկ փող-  
պատ մը ունէիր :

ՆԵՆՆԵԼԷ Նայելով իրեն :

Հիմա կրկին կը հատուցանես :

ՄԱՔՍԻՄՈՍ

Փողպատներո՛վ : Կարծեմ թէ չես հաւնիր  
փողպատներուս :

ՆԵՆՆԵԼԷ

Ինչո՞ւ : Ամբողջ զգեստին հետ կը յարմարին :

ՄԱՔՍԻՄՈՍ

Ըսել է թէ ամբողջ զգեստին չես հաւնիր :  
Քայց չեմ փոխեր :

ԹՈՄԻ

Եւ իրաւունք ունիս :

### ՏԵՍԻԼ ՏԱՄՆԵՐՈՐԴ

ՅՈՎՀԱՆՆԵՍ և ՎԵՐՊԵՆԻՆԵՐԸ, յետոյ ԱՆԴՐԵԱՍ :

ՅՈՎՀԱՆՆԵՍ իրեն սենեկէն կու գայ :

Մաքսիմոս :

ՄԱՔՍԻՄՈՍ

Հօրեղբայր :

Կը բրկուին :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Շատ աղէկ եմ, երբոր զքեզ քօվս կը տես-  
նամ :

ՆԵՆՆԵԼԷ և ԹՈՄԻ :

Իսկ դուք հո՞ս էք :

ԹՈՄԻ

Պատրաստ :

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՆԷՆՆԷԼԷԻ:

Տես նայէ մայրդ:

Նէննէլէ Յուլիայի սենեակը  
կ'երթայ: Թոմիի:

Եւ դու բոլոր տունը պտըտէ, տեսնալու հա-  
մար թէ սենեակները զոցուած են: Եւ շուտ:  
Թոմի կ'երթայ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Պուտա Բեշտ գործերդ լմնցուցի՛ր:

ՄԱՔՍԻՄՈՍ

Շատ լաւ կերպով: Ձեռնարկութիւնս թո-  
ղուցի և շահով:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Կը ցաւիմ որ իմ պատճառաւ....

ՄԱՔՍԻՄՈՍ

Աւելի լաւ է մէկհատիկ գործ մը և անով  
զբաղիլ, քան թէ տասը և մագոգի պէս եր-  
թալ գալ: Դու հոս կարգադրեցիր: Հեռա-  
գիրդ առի:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Պակասորդը ութ հարիւր հազար ֆրանք  
է: Կը թողում այս տունս՝ որուն արդէն ե-  
րեք հարիւր վաթսուն հազար ֆրանք կու տան:

Ախոռը, կառատունը, կահկարասին, սրա-  
հակները և գրքատունը մէջը, հաշուեցան  
ութսուն հազար, և հարիւր հազար Բրիան-  
ցայի ամբարնոցը՝ որ ինծի կէս միլիոնէն ա-  
ւելի արժած էր: Պարտատէրները հարիւրին  
եօթանասուն պիտի առնեն: Ինծի ոչինչ կը  
մնայ: Գիտեմ թէ Լաւրի, որ գլխաւոր պարտա-  
պահանջս էր, այնպէս զարմացաւ բարեմտու-  
թեանս վրայ, որ զիս, բառ առ բառ, ապուշ  
անուանեց սակարանին մէջ. և ուրիշ մը, այն  
ալ բարեկամս, և ինքն ալ հաճ և գոհ պար-  
տապահանջ, զարդարկոտ մը, բոլոր կեան-  
քիս անվհատ աշխատութեանը և նոյնչափ  
անվհատ լաւութեանս վրայ խօսելով, ելաւ  
ըսաւ, թէ՛ անխելք ջորի մըն եմ — այս ալ  
բառ առ բառ:

ՄԱՔՍԻՄՈՍ

Սպորտական վայելչարանութիւն:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Տունէն դուրս քաղած պտուղս այս է: Իսկ  
տանս մէջ....

ՄԱՔՍԻՄՈՍ

Իրաւ.... քեռայրդ:



## ՅՈՎՀԱՆՆԷՍ

Ոհ անոր վրայ չեմ խօսիր: Քեռայրս, երբոր գործերը կարգի դրուեցան, քոյրս ինձի չրկեց....

## ՄԱՔՍԻՄՈՍ

Հօրաքոյրս Իրենէն՝ միտքս կու գայ:

## ՅՈՎՀԱՆՆԷՍ

Տասը հազար ֆրանք ինձի բերաւ:

ՄԱՔՍԻՄՈՍ երեսի ծովաբանքով մը:

Քանի մը անգամ միլիոնատեր է, կարծեմ:

## ՅՈՎՀԱՆՆԷՍ

Կը հաշուեն թէ եօթը միլիոն ունի:

## ՄԱՔՍԻՄՈՍ

Անշուշտ: Բնական է:

## ՅՈՎՀԱՆՆԷՍ

Մի՛ խօսիր, ըրածը շատ է: Ասկէ դատ, քոյրս երէկ ըսաւ ինձի որ այս առաւօտ պիտի գար Նէննէլէն բարեւելու, որ իրեն սանն է, և այս բանս դիտմամբ մը կ'ըսէր: Արդէն կը սպասեմ որ իրեն զուամար մը պիտի բերէ:

## ՄԱՔՍԻՄՈՍ

Քեզի առաջարկած չէր որ առջի ժամանակներն ընտանիքդ իրեն քովը պահէ:

## ՅՈՎՀԱՆՆԷՍ

Այո՛: Եւ զրեթէ ընդունած էի, Սիւիս տունն փնտռելու աւելի դիւրութիւն ունենալու համար: Բայց ետքը....

## ՄԱՔՍԻՄՈՍ

Տունը գտնուեցաւ: Եթէ հաւնիս, կ'իմացուի: Առաջին օգնականս երէկ ինձի այս բանիս համար հեռագրեց: Սիւիսցի գեղացիներու տնակ մըն է, բայց ատենօք բարեկեցիկ մարդիկներու դիւղի տուն եղած էր: Երկու յարկ, իւրաքանչիւր յարկ վեց սենեակ, քաղաքէն դուրս գեղազուարճ տեղ մը, զիմացը մեծ մարգագետին մը: Տանտէրը անմիշտ պէս մօտը ագարակ մը գնեց և հոն գնաց բնակելու: Օգնականս կէս խօսքը կապած է, տարին վեց հարիւր ֆրանքի: Գետնայարկը երկու սենեակ են ինձի պիտի պահեմ, քու աշխատանոցդ հոն դնելու համար, և անոնց համար հարիւր ֆրանք պիտի հատուցանեմ: Քու պարտականութեանդ կը մնան հինգ հարիւր ֆրանք: Գործիդ կու դայ:

## ՅՈՎՀԱՆՆԵՍ

Խիստ աղէկ :

## ՄԱՔՍԻՄՈՍ

Նայէ որ ընտանիքդ հոս թողու զքեզ համոզելու համար չեմ՝ ըսեր : Կ'ենթադրուի որ անմիջապէս հեռոյ ըլլալը քեզի մխիթարու-թիւն է :

## ՅՈՎՀԱՆՆԵՍ

Ո՛հ ագոր համար չէ :

Գաբար, յետոյ վտազին ձայնով :

Գիտես ինչո՞ւ զանոնք հոս չեմ թողուր :  
Զեմ վստահիր :

## ՄԱՔՍԻՄՈՍ

Որո՞նչ չես վստահիր :

## ՅՈՎՀԱՆՆԵՍ

Իմիններուս : Եթէ գիտնայիր դու թէ կործանումը գալէն ետքը՝ ինչեր տեսայ տանս մէջ : Կ'ինս ունայնամիտ և թեթեւաբարոյ կ'երեւնայ քեզի . . . . Է՞հ :

## ՄԱՔՍԻՄՈՍ

Երբեք չըսի . . . .

## ՅՈՎՀԱՆՆԵՍ

Տունը փաստարան մը բերաւ ինծի, որ զիս համոզէ պարտատէրներուս նենգելու : Ինծի կ'առաջարկէր կեղծեալ մուրհակներ . . . . ա-մարանոցը ուրիշին անցընելուն համար . . . . կ'ուզէր ծախել այս սրահակներս, զաղտուկ, և երբոր ըսի իրեն որ այն ատեն խարդախ սնանկութիւն կ'ըլլար, դատաստան . . . . բանտ, գիտես թէ ինծի ինչ պատասխանեց : Պատասխանեց : Ժամանակին չեն հասնիր : Մեկնած կ'ըլլա՞ք :

## ՄԱՔՍԻՄՈՍ

Անտարակոյս :

## ՅՈՎՀԱՆՆԵՍ

Իսկ զաւակս, ինչ որ Յուլիան կ'առաջար-կէր ինծի ընելու՝ համոզուած է որ կատա-րեր ըմպուցեր եմ : Ո՛հ ինքը չի գիտեր և չի շփեր կ'իմացուի, և այն բանին համար ին-ծի խորհուրդ չէր տար, ապահով եմ. այլ այսպէս վերիվերոյ կը կարծէ թէ մէկ կող-մը դրուած ըլլայ գանձը . . . . և որ մը կը յարմարցնենք : Եւ նախատինքը ինծի չէ որ կ'ընէ : Իմ ի՞նչ հոգս է : Այլ սրտին նշանն է . . . . և գալիքին խոստումը :

## ՄԱՔՍԻՄՈՍ

Սպագային համար մենք կանք:

## ՅՈՎՀԱՆՆԵՍ

Դու թերեւս . . . . Սակայն ես: Չանոնք  
կործանեցի:

## ՄԱՔՍԻՄՈՍ

Հայրս զիս առանց փողի մը ձգեց տասնը-  
չորս տարուան, և զինքը կ'օրհնեմ:

## ՅՈՎՀԱՆՆԵՍ

Իշխանութիւն չունիմ: Աշխատութեան եզ  
մըն եմ, ուրիշ ոչինչ: Դու չես գիտեր թէ  
ինչ սուղի նստաւ ինձի այս օրերուս խտա-  
պահանջ ըլլալու ճիգը: Պիտի չկարենամ դի-  
մանալ: Երբեք իշխանութիւն չի բանեցուցի:  
Կարեւորութիւնը չէի տեսնար: Այնպէս կը  
գեղազարդէ հարստութիւնը ամէն բաները:  
Գէշ հայր մըն եմ, Մաքսիմոս:

## ՄԱՔՍԻՄՈՍ

Զո՛վ օդ, զո՛վ օդ: Կը տեսնաս:

ԹՈՄՏԻ ԶԱՅՆԸ նախասենեկէն:

Քայց ոչ . . . . եկէք, եկէք: Սմէնքն ալ զձեզ  
տեսնալով հաճոյք պիտի զգան:

## ՅՈՎՀԱՆՆԵՍ

Հիմա հրաժարական ողջոյնները:

## ՏԵՍԻԼ ՏԱՍՆԸՄԵԿԵՐՈՐԴ

Վերոյիշեալները, ԹՈՄՏԻ, ԼԱԻՐԻ տիկինը,  
յետոյ ՅՈՒԼԻԱ, յետոյ ՆԷՆՆԷԼԷ և ԼՈՒՍԻԱ:

## ԹՈՄՏԻ

Հայր: Լաւրի տիկինը:

## ԼԱԻՐԻ

Քարեւ մը միայն, բարեւ մը միայն:

## ՅՈՎՀԱՆՆԵՍ

Շնորհակալ եմ:

ԹՈՄՏԻ Յուլիայի դրան վրայ:

Մայր: Նէննէլէ:

## ԼԱԻՐԻ

Չեմ խօսիր, չեմ խօսիր, վասն զի ինձի  
չատ ցաւ կու տայ: Կը կորսնցնեմ իմ լա-  
ւագոյն բարեկամներս: Ի՞նչ սաստիկ տրտմու-  
թիւն: Մեկնողը բաժանումը չիմանար. բայց  
մնացողները: Ամբողջ գիշերը աչք չի գոցեցի:  
ՃԻԱԳՈՋԱ. ԴՅՂԱԿԱ տերեւոները.

ՄԱՔՍԻՄՈՍ

Ապագային համար մենք կանք:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Դու թերեւս . . . . Սակայն ե՛ս: Զանոնք  
կործանեցի:

ՄԱՔՍԻՄՈՍ

Հայրս զիս առանց փողի մը ձգեց տասնը-  
չորս տարուան, և զինքը կ'օրհնեմ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Իշխանութիւն չունիմ: Աշխատութեան եզ  
մըն եմ, ուրիշ ոչինչ: Դու չես գիտեր թէ  
ինչ սուղի նստաւ ինձի այս օրերուս խտա-  
պահանջ ըլլալու ճիգը: Պիտի չկարենամ դի-  
մանալ: Երբեք իշխանութիւն չի բանեցուցի:  
Կարեւորութիւնը չէի տեսնար: Այնպէս կը  
գեղազարդէ հարստութիւնը ամէն բաները:  
Գէշ հայր մըն եմ, Մաքսիմոս:

ՄԱՔՍԻՄՈՍ

Զո՛վ օդ, զո՛վ օդ: Կը տեսնաս:

ԹՈՄԻԻ ԶԱՅԵԸ նախասենեկէն:

Բայց ոչ . . . . եկէք, եկէք: Ամէնքն ալ զձեզ  
անսնալով հաճոյք պիտի զգան:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Հիմա հրաժարական ողջոյնները:

ՏԵՍԻԼ ՏԱՄՆԸՄԷԿԵՐՈՐԴ

Վերոյիշեալները, ԹՈՄԻ, ԼԱՌԻ տիկինը,  
յետոյ ՅՈՒԼԻԱ, յետոյ ՆԵՆԵԷԼԷ և ԼՈՒԻՍԱ:

ԹՈՄԻ

Հայր: Լաւրի տիկինը:

ԼԱՌԻ

Բարեւ մը միայն, բարեւ մը միայն:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Շնորհակալ եմ:

ԹՈՄԻ Յուլիայի շքան վրայ:

Մայր: Նէննէլէ:

ԼԱՌԻ

Զեմ խօսիր, չեմ խօսիր, վասն զի ինձի  
չատ ցաւ կու տայ: Կը կորսնցնեմ իմ լա-  
ւագոյն բարեկամներս: Ի՜նչ սաստիկ տրամու-  
թիւն: Մեկնողը բաժանումը չիմանար. բայց  
մնացողները: Ամբողջ գիշերը աչք չի գոցեցի:  
ՃԻԱԳՈՋԱ. ԴՈՇԱԿԵՍ տերեւները.

ՅՈՒԼԻԱ կը մտնայ:

ԼԱՌԻ

Յուրիա: Իմ գանձս: Երկու վայրկեան  
միայն, գքեզ ողջագուրելու ժամանակը:  
Կը դիկե զի՞քը:

ՅՈՒԼԻԱ

Ի՛նչպէս ազնիւ եղար:

ԼԱՌԻ

Իսկ Նէննէլէ՞ն:

Նէննէլէ Լուսիայի հետ կը մտնայ:

ԼԱՌԻ

Ահաւասիկ: Սիրունս:

Կը դիկե զի՞քը:

Չեմ կարող ըսել թէ ի՛նչ կը կորսնցնեմ:

ԹՈՐԻ

Իսկ ինձի: Ես ալ կը մեկնիմ:

ԼԱՌԻ

Չեղի ձեռքս: Մանաւանդ թէ երկու ձեռ-  
քերս ալ:

Թո՛մի երկուքն ալ կը պահնէ հոսէէ հոսէ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ տեսարանին հակառակ կողմէն,  
Մաքսիմսի:

Նայէ անոնց: Նայէ կնձն: Նայէ որդւոյս:  
Կը կարծե՞ս թէ իրենց վիճակը հասկնան:  
Դու չես գիտեր, դու չես գիտեր:

Նստած է բազմոցին վրայ: Արմուկ-  
նիւրը ծուկկրուն կոթնցուցած և գլու-  
խը ձեռքերուն մէջ:

ԼԱՌԻ

Կողդարտէ՞ն կ'անցնիք:

ՅՈՒԼԻԱ

Ոչ, Մոտանէն:

ԼԱՌԻ

Մե՛ղք, կողդարտը շատ նկարագեղ է:  
Նէննէլէի:

Դու երբեք Սիւիս գնացած ես:

Նէննէլէ

Երբեք:

ՄԱՌՍԻՄՍՍ կը ջնցէ քաղցրութեամբ Յով-  
հաննէսը:

Սիրտ ըրէ, հօրեղբայր:

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Դու չես գիտեր: Զիրե՛ք չէի ճանչնար:

Յանցանքը իմն է: Բայց յաջողութիւնը կը կուրցնէ: Ո՛հ շնորհքը, վայելչութիւնը, սիրունութիւնը ինչ բան կը ծածկեն: Մաքսիմոս, տեսնես պիտի: Զիրենք հո՞ս թողուլ: Երկզիմի զուարճասիրութեան կեանքի մը պիտի հետեւէին: Ա՛հ ոչ: Ինծի հետ, ինծի հետ: Եթէ սակայն բաւական ըլլայ:

ՄԱՐՍԻՄՈՍ

Ո՛հ Ի՛նչ կ'ըսես:

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Կը տեսնես: Անոնք մարդիկներ են որ չեն կրնար փոթորկին գիմակայել: Երակ չկայ: Հովին առաջին փշելուն՝ կ'երթան, կ'երթան:

### ՏԵՍԻԼ ՏԱՍՈՒԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Վերոյիշեալները, ԱՆԳՐԷՍՍ, յետոյ ԻՐԵՆԷ տիկինը:

ԱՆԳՐԷՍՍ Յովհաննէսի:

Կառքը հոս է:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ոտք ելլալով:

Մեկնելու ժամն է:

Մաքսիմոսի:

Չեկաւ:

Այէնքն ալ ոտքի ելած վերնազգեստները կը հագուին, հովանոցիկներ, գաւազաններ կը փնտռեն:

ԼԱԻՐԻ

Զձեզ զտնայու կու գանք:

ԹՈՄԻ

Խոստմունք: Աքսորականները մխիթարել:

ԼԱԻՐԻ Յովհաննէսի:

Չեղի միայն բան մը կ'ըսեմ. Գէշ:

ՅՈՒԼԻԱ

Իմ ծաղիկներս: Ծաղիկներս ո՞ւր են:

ԼՈՒՍԻԱ կու տայ Նէնէէլէի զլիարկը և փոշիապահը:

ՆԵՆԵՆԷԼԷ

Քոյրտիքս կը պարտէիր, խեղճ Լուսիա:

ԼՈՒՍԻԱ կ'ուզէ ձեռքը պահել, լալով:

ՆԵՆԵՆԷԼԷ

Լուռ կեցիր, լուռ կեցիր:

ԻՐԵՆԷ կը մտնայ մայր դռնէն:

Ա՛հ, դեռ զձեզ կը զանամ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Քոյրս :

ԻՐԵՆԷ

Վախ մը ունէի որ ժամանակին չհասնիմ :  
Կրնայի երթալ կայարանը . . . . բայց կը վախ-  
նամ թէ յուզուիմ : Ամուսինս հոն պիտի ըլ-  
լայ : Նէննէլէ : Քեզի քիչ մը շօքոյա բերի . . . .  
ճամբորդութեան համար :

ՄԱՔՍԻՄՈՍ

Բայց նայէ մէյմը : Ի՛նչ ընծայ : Ենորհա-  
կալ եղիք, շնորհակալ եղիր հօրաբրօշդ : Պա-  
տուական հօրաբրօշ :

ԻՐԵՆԷ ափշած :

Ո՞վ է : Ո՞վ է որ :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Մեր եզրօրդդին, Մաքսիմոս է :

ԻՐԵՆԷ

Ահ, մեծցեր ես :

ՄԱՔՍԻՄՈՍ

Ո՞րչափ ատենէ ի վեր :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Եւտ :

ՆԷՆՆԵԼԷ

Մնաս բարով, հօրաբրօշ :

ԻՐԵՆԷ

Կու գամ, կու գամ, ձեզի հետ կ'իջնամ :

ԼԱՌԻ

Եւտ պիտի դառնաք . . . . սիրտս կ'ըսէ ինծի :

Խօսակցելով կ'ելլան մայր դռնէն :  
Յովհաննէս կը նայի իրենց ելլալուն :

ՄԱՔՍԻՄՈՍ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ :

Մի վախնար : Նորէն կը սկսիս :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Յուսանք :

Ամենք կ'երթան :

Լուսիա միայն կը մնայ և կը նետուի  
թիկնաթոռի մը վրայ նեծկալալու :

Նէննէլէ վազելով կը դառնայ, Լուսիան թե-  
ւերուն մէջ կ'առնէ և հազար անգամ կը պագ-  
նէ երեսները :

ԼՈՒՍԻԱ

Նէննէլէ, Նէննէլէ :

ՆԷՆՆԵԼԷ

Լուս կեցիր, լուս կեցիր, լուս կեցիր :  
Կը փախի :

Վարագոյրը կ'իզմայ :

## ՀԱՆԳԻՍ ԵՐԿՐՈՐԴ

Սենեակ պարզ, բայց ոչ խեղճ, և ոչ բուրբ-  
վին անզարդ: Բիչ բարձր: Ձեղուն փայտէ, պա-  
տերը փայտէ: Հանդիսատեսին ձախակողմի պա-  
տին մէջ՝ մեծ պատուհան մը, շատ աւելի լայն  
քան թէ բարձր: Պէտք է որ փեղկերը կարե-  
նան բացուել և գոցուել: Դուրսը, մօտաւոր  
ծառեր: Խորը, երկու դռներ: Ձախակողմեանը  
կը հանէ պզտիկ նախասենեկի մը մէջ և անկէ  
սանդուղը: Մայր դուռն է: Ձախակողմեանը կը  
հանէ Յուլիայի սենեակը: Ասոնց միջեւ, պա-  
տին յեցած, փայտէ դարան մը՝ վրան խեցե-  
ղէններով: Հանդիսատեսին աջակողմի պատին  
մէջ, առաջին կողմանոցին բարձրութեամբը,  
դուռը որ կը տանի Նէննէլէի սենեակը: Ատոր և  
խորքին միջեւ, ստուլիկ մը՝ պատին կռթընած:  
Սենեկին մէջտեղ, կլոր ստուլ մը՝ գորգով մը  
ծածկուած: Գալարուն փայտէ ընկողմանիկ ա-  
թոռ մը՝ պատուհանին մօտ: Փայտէ աթոռներ:



### Տ Ե Ս Ի Լ Ա Ռ Ա Ջ Ի Ն

Նէննէկէ մէջտեղի ստուրին զիմացը կը կար-  
դայ նստած: ԹՈՄԻ, պատուհանին մօտ աթոռի  
մը վրայ հեծելաձեւ, կը ծխէ փայտէ անդղիա-  
կան կարճ ծխափող մը: ՅՈՎՀԱՆՆԵՍ մայր  
դռնէն կը մտնայ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Նէննէկէ:

Նէննէկէ

Հայր:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Երէկ իրիկուն ինծմէ ստակ ուղեցիր, ա-  
ղաչեր էի քեզի որ ինծի յիշեցնես այս ա-  
ռաւօտ:

Նէննէկէ

Ճշմարիտ է: Ձի համարձակեցայ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Ինչո՞ւ: Հիմա միտքս եկաւ և վեր ելայ որ  
բերեմ:

Կու տայ իրեն զրամեր:

Նէննէկէ

Շատ են:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Հարիւր ֆրանք: Մինչեւ ամսոյն վերջը  
կ'ունենաս:

Նէննէկէ

Լաւագոյն կը համարիմ քիչ քիչ ատեն  
ատեն:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Մեծ դումար:

Նէննէկէ

Չէ, սակայն . . . . վերջիններէն որ ինծի  
տուիր, կը պակսին երեսուն ֆրանք:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Կը պակսին . . . .

Նէննէկէ

Հաշիւներս ընելով պէտք էր մնացած ըլ-  
լար երեսուն ֆրանք և զանոնք չեմ գտնար:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Մոռցած պիտի ըլլաս հաշուի մաս մը նշա-  
նակելու:

## ՆԵՆՆԵԼԷ

Պէտք է այնպէս ըսել: Թէպէտ և կրկին  
մտածելով վրան . . . կամ զանոնք կորսըն-  
ցուցած պիտի ըլլամ. . . Ինչ որ ալ ըլլայ՝  
լաւագոյն կը համարիմ աւելի ստէպ քեզմէ  
ուզելու: Առ: Երկու ոսկի ունիմ:

## ՅՈՎՀԱՆՆԵՍ

Պահէ, ամբողջ պահէ: Պէտք է սորվիլ:  
Թոմիէն:  
Կը ձանձրանաս է՛հ, խեղճ Թոմի:

## ԹՈՄԻ

Անշուշտ, այս բունի պարագորդութեամբ:

## ՅՈՎՀԱՆՆԵՍ

Համբերութիւն կ'ուզէ:

## ԹՈՄԻ

Դու ազուոր ազուոր կ'ըսես ինծի, դու որ  
օրն ի բուն զբաղած ես:

## ՅՈՎՀԱՆՆԵՍ

Կը գտնանք, կը գտնանք:

Կը սկսի երթալ:

## ՆԵՆՆԵԼԷ

Վար կ'իջնաս: Նայէ, չորս օր կ'ըլլայ որ  
տունէն դուրս չես ելար:

## ՅՈՎՀԱՆՆԵՍ

Գործ ունիմ:

## ՆԵՆՆԵԼԷ

Եւ յողնած կերպարանք ունիս:

## ՅՈՎՀԱՆՆԵՍ

Ոչ: Ատիկայ չէ: Երբեք այնպէս աղէկ չէի  
եղած՝ ինչպէս հոս ըլլալնէս ետքը՝ այս երեք  
ամիսներուս մէջ: Ահ, այսօր հինգշաբթի է:  
Մաքսիմոս կու գայ:

ԹՈՄԻ յափրացողի մը ձայնով:

Այո՛:

## ՅՈՎՀԱՆՆԵՍ

Ուրեմն, կ'երթամ յետոյ այս իրիկուն՝  
երբոր դարձեալ մեկնի՝ ընկերելու հետը կա-  
յարանը: Գո՛հ ես:

## ՆԵՆՆԵԼԷ

Աղէկ է:

## ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

ՆԷՆՆԵԼԵ և ԹՈՄԻ

ԹՈՄԻ

Յայտնի է թէ իրեն համար բան մը փոխուած չէ: Կամ աւելի լաւի փոխուած է: Միլան կ'աշխատէր, հոս կ'աշխատի: Գլուխ ցաւցնող մը չկայ: Ընդարձակ զիւղի լաւ օդ: Իննին անկողին կ'երթայ: Կը քնանայ: Ի՞նչ կ'ընես:

ՆԷՆՆԵԼԵ

Կը սորվեմ:

ԹՈՄԻ

Ուրիշ կողմանէ, հարիւր հազար ֆրանք եկամուտ և եղած տեղերնիս՝ անգլիական ամարանոց մը, փոխանակ այս լալահառաչ տնակին, այն ատեն ես ալ աւելի բան մը չէի խնդրեր երկնքին և երկրիս ստեղծողէն:

ՆԷՆՆԵԼԵ

Տունը ի՞նչ նշանակութիւն ունի, երբոր գեղեցկութիւնը պատուհաններէն դուրս ըլլայ:

ԹՈՄԻ

Պէտք է գեղեցկութիւնը պճնազարդել: Բնութիւնը թերակատար արուեստագէտ մըն է: Եթէ ինծի մնար, կ'ուզէի հոս վարը պարտէզ մը՝ անպողարեր մեծ ծառերով: Եւ խոտը միշտ կտրուած: Եւ ծառերու բունբուն մէջ ամայի մենարան մը: Եւ չի տեսնալ մայրս հարթավայրին ճիշդ մէջտեղը, անարգ եռօտանիին վրայ նստած, պատկերակալը առջեւը, ուշագիր իրերուն գեղեցկութիւնը աղարտելու:

ՆԷՆՆԵԼԵ

Դեռ նկարելու վրայ է:

ԹՈՄԻ

Անպլայլակ: Այս ժամուս արդէն իր բամբակէ յիսներորդ Սպիտակ Լեռը՝ սկսեք է թրմելու անխօսի յիսներորդ լճին մէջ:

ՆԷՆՆԵԼԵ

Մայրս մինակ է:

ԹՈՄԻ

Բայց կը կարծես: Երկու եղբայրակից արուեստագէտներու հետ է: Très honorés

maîtresներ: Մեծամեծ ոճիրները առանց մեղ-  
սակցի չեն գործուիր: Սակայն Սպիտակ Լեռը  
ըրածներնուն հոգ շըներ և տհածեղու կեր-  
պարանքը չունի: Սվոնց նայէ: Կարծես թէ  
երեքն ալ մեքենապէս լարուած են: Գլուխ-  
նին վեր կ'առնեն՝ կտուց մը կերակուրին  
սպասող ճնճուկներու նման, կը պարուրեն  
աչքերնուն մէջ իրենց դաշտանկարի կտորը  
և կ'աճապարեն անճանաչելի ընելու զայն  
կտուրին վրայ: Այն երկուքը մօտէն տեսած  
ես երբեք:

ՆԵՆՆԵԼԵ

Մէկը այո՛: Այն ծերուկը: Երբեմն հոս  
կու գայ:

ԹՈՄԻ

Կը զրկեն զինքը: Ատեն ատեն մեր հնա-  
րադէտ մօրուն կ'անդրադառնայ թէ տունը  
գոյնի խողովակ մը, վրձին մը, հովահարը  
մոռցեր է, և միշտ ծերը կը վազէ: Բնաւ  
այն երիտասարդը չի շարժիր: Եւ այն ատեն  
նկարչական եռաձայնը կը փոխուի Հայեցո-  
ղական երկձայնիկի:

ՆԵՆՆԵԼԵ

Ի՞նչպէս կծու ես: Ի՞նչ ունիս:

ԹՈՄԻ

Ոչինչ:

ՆԵՆՆԵԼԵ

Ի՞նչ զգուանք սակայն:

ԹՈՄԻ

Ո՞ր ատեն է որ անդրադարձար այն դրա-  
մին գործը:

ՆԵՆՆԵԼԵ

Ի՞նչ դրամ:

ԹՈՄԻ

Երեսուն ֆրանքը որ քովէդ կը պակսի:

ՆԵՆՆԵԼԵ

Անցած օր:

ԹՈՄԻ

Ո՞ւր կը պահես զանոնք:

ՆԵՆՆԵԼԵ

Հոն, ստուիկին գորոցին մէջ:

ԹՈՄԻ

Անշուշտ չես կարծեր որ տեղեկութիւն  
կ'առնեմ օգուտ քաղելու համար:

ՃԻՆԳՈՋԱ. ԴՈՂԱԿԱ ՍԵՐԻՈՅԵՐԸ.

ՆԵՆՆԵԼԷ

Ո՛հ թումի:

Թո՛սի թեթեւ վարանու՛մէ մը ետքը:

Պէտք եղած ժամանակը քեզմէ կ'ուզեմ:

ՆԵՆՆԵԼԷ

Կ'ուզեմ:

Թո՛սի

Խեղճ Նէննէլէ:

ՆԵՆՆԵԼԷ

Բայց արդէն դու քուկինդ ունէիր:

Թո՛սի

Անցեալ ժամանակ: Մերձաւոր անցեալ:  
Բայց անցեալ:

ՆԵՆՆԵԼԷ

Քիչ բան կրնամ տալ: Կ'ուզեմ: Մնացա՛  
ծին վրայ կծծութին կ'ընեմ:

Գորոքը բանալու կ'ըլայ:

Թո՛սի փորձութեան յաղթելով:

Փակէ, փակէ: Եւ բանալիով միշտ դոց  
պահէ: Պէտք չէ մարդիկը փորձութեան մէջ  
ձգել: Արուեստագէտները սկար են:

Կ'ահնարիէ պատուհանէն դուրս:

ՆԵՆՆԵԼԷ

Գէշ մի մտածեր: Համոզու՛ած ես, ըսէ, որ  
արդեօք հայրս մէկ կողմ դրած չէր:

Թո՛սի

Գուցէ: Այնպէս կ'երեւնայ:

ՆԵՆՆԵԼԷ

Կը ցաւիմ:

Թո՛սի

Երեւակայէ:

ՆԵՆՆԵԼԷ

Եւ հիմա մտիկ ըրէ ինծի:

Թո՛սի

Ի՞նչ բան:

ՆԵՆՆԵԼԷ

Թէ արդեօք սորվեցայ: Արդեօք դիտեմ:  
Առ:

Գիրք մը կու տայ երես:

Աչքերովդ հետեւէ առանց հարցփորձ ը-  
նելու: Ասկէ սկսէ: Յօդը:

Թո՛սի

Յօ՛դը: Գու աշտպիսի բաներ կը սորվիս:

ՆԵՆՆԵԼԷ

Պիտի սորվեցնեմ, չեմ գիտեր:

ԹՈՄԻ

Չե՞ս գիտեր ինչ բան է՝ յօգը:

ՆԵՆՆԵԼԷ

Առաջ տար, դու ըստ:

ԹՈՄԻ

La, il.

ՆԵՆՆԵԼԷ

Գիտես թէ այն բառերը յօգեր են: Բայց չես կրնար ըսել ինձի անմիջապէս արձակ համարձակ թէ ինչ բան է յօգը: Եւ թերեւս ալ ստիկայ կարելի է — բայց մակբայը, բայց ձայնարկութիւնը: Ա՛հ:

ԹՈՄԻ

Տեսնանք:

ՆԵՆՆԵԼԷ

Յօգը բառ մըն է որ կրնայ հոլովուիլ:

ԹՈՄԻ

Հոլովելի, կ'ըստ:

ՆԵՆՆԵԼԷ

Բայց դասս ըսելու ելած չեմ. չեմ ուզեր զորքեղ զրածին պէս: Գիտութեանս վրայ կ'ուզեմ ապահով ըլլալ: Բառ մըն է որ կրնայ հոլովուիլ, որ երբոր դուռի անունի մը դիմաց կը նշանակէ, կ'որոշէ... այո՛, վերջապէս կը նշանակէ թէ այս արական է կամ իգական, եզակի կամ յողնակի: Օրինակի համար, il pero (տանձենի) և la mela (խնձոր): Il արական սեռի յօգ է, վասն զի pero արական է:

## ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԿ

ՄԱՔՈՒՄՈՍ և վերոյիշեալները:

ՄԱՔՈՒՄՈՍ կը մտնայ խորէն, առաջին աթոռին վրայ կողովիկ մը կը դնէ, և առանց տեսնուելու երկուքէն՝ կը կենայ մտիկ ընելու:

ՆԵՆՆԵԼԷ շարունակելով:

Եւ la սեռի յօգ է....

ԹՈՄԻ

Սեռ՝ չըսուիր, տեսակ կ'ըսուի: Սեռ գէշ տեսակ բառ մըն է:

ՆԵՆՆԵԼԵ

Իգական սեռի:

ՄԱՔՍԻՄՈՍ

Ի՞նչ բանի վրայ էք:

ՆԵՆՆԵԼԵ

Ո՛հ, դու հո՞ն էիր: Անգղիերէն սորվեցնե՛լու համար քերականութիւնը կը սերտեմ:

ՄԱՔՍԻՄՈՍ

Իտալերէն կը սորվեցնես:

ՆԵՆՆԵԼԵ

Չէ, գաղղիերէն:

ՄԱՔՍԻՄՈՍ

Եւ անգղիերէնը գաղղիերէն սորվեցնելու համար, իտալերէն քերականութիւնը կը սերտես:

ՆԵՆՆԵԼԵ

Վասն զի խօսիլ գիտեմ: Ինչ որ ինձի կը պակսի, սկզբունքներն են: Գիտնալու է թէ որո՞նք են այն բաները որ ամէն լեզուներու մէջ նոյն են: Կը հասկնամ:

ՄԱՔՍԻՄՈՍ

Ոչ:

ՆԵՆՆԵԼԵ

Անցած օր այնպէս ամօթով մնացի որ: Այն անգղիերէն դասին որ ինձի գտար, Ուսիլէ այրիին որդին:

ՄԱՔՍԻՄՈՍ

Գնացի՞ր հոն:

ՆԵՆՆԵԼԵ

Ապրուստս վաստկիլը ինձի հաւատալի չէր երեւնար:

ՄԱՔՍԻՄՈՍ

Ապրուստը մեծ բան է:

ՆԵՆՆԵԼԵ

Անտանկի տեղ մը: Ճամբան, տունը, սանդուղը, սենեակները, սուրբ հարց լիմպօսը: Եւ հեռօ՛ւ: Տեղատարափ կ'անձրեւէր: Ամենուրեք լիճեր: Աղէկ որ Թոմի հետս էր:

ՄԱՔՍԻՄՈՍ

Որպէս զի երկուքնի՞ր ալ թրջիք:

ՆԵՆՆԵԼԵ

Կառք մը բռնեց :

ԹՈՄԻ

Այդ բաները Մաքսիմոսի մի ըսեր, կը վշտանայ :

ՄԱՔՍԻՄՈՍ

Ինծի՞ : Ընդհակառակն : Հրապարակին մէջ կառքերուն դործը ի՞նչ է :

ՆԵՆՆԵԼԵ

Կը հասնիմ : Թոմին զիս կը բարեւէ : Սանդուղէն առխարխափ վեր կ'ելլամ : Սրտի բարախիւն մը ունէի որ : Կը զարնեմ : Այրին անձամբ կու գայ բանալու :

ՄԱՔՍԻՄՈՍ

Ի՞նչ է այնչափ կը դառնաս այն այրիին վրայ : Իրեն էրիկը ինքը չսպաննեց :

ՆԵՆՆԵԼԵ

Անիկայ տիպար այրին է : Մենդենէն :

ԹՈՄԻ Հափազանցութեամբ երեսը զարնելով :

Նէննէլէ՛, Տիկին մը որ քեզի կը վճարէ՛ :

ՄԱՔՍԻՄՈՍ Իրեն կը նայի, ետքը Նէննէլէի :

Առաջ երթանք :

ՆԵՆՆԵԼԵ

Այրին.... ներէ.... տիկինը, կը տանի զիս տեսակ մը ճաշարանի մէջ, ուր կերակուր կ'ուտեն, վասն զի կաղամբ կը հոտէր, և զիս վերէն ի վար կը զննէ.... կերպարանքով մը : Ետքը տարիքս կը հարցնէ :

ՄԱՔՍԻՄՈՍ

Ա՛յ :

ՆԵՆՆԵԼԵ

Ինչո՞ւ համար :

ՄԱՔՍԻՄՈՍ

Չքեզ եզածէդ աւելի ծեր ըրեր էի : Երիտասարդութիւնդ կրնար արգելք մը ըլլալ :

ՆԵՆՆԵԼԵ

Այրիս : Ազէկ որ իմացուցիր : Քիչ մնաց որ կռիւ ընէինք : Ինքը 26 տարի կու տար ինծի, ես կը պնդէի իմ 22իս վրայ : Չերկնցընեմ, կը կանչէ զաւակը :

ԹՈՄԻ

ՈՐԲԸ :



## ՆԵՆՆԵԼԷ

Որուն անունը Կասդոն է: Տասնըվեց տարուան խնոտ խաղրիկ մը: Եւ Կասդոն կ'երեւայ: Ես իմ՝ Օլէնտորֆոս կը բանամ ստուղին վրայ և սկսելու վրայ կ'ըլլամ: Եւ մայրը կ'ելլայ կը նստի զուկին քով և երեսիս աչքերը կը տնկէ իրբեւ շիտթելու համար զիս: Ես կը սկսիմ գաղղիերէն նախագասութիւն մը ըսել, անիկայ անգղիերէնի կը թարգմանեմ և Կասդոնի կրկնել կու տամ: Բայց նա նա քերականութիւնը, կանոնները, սահմանները կ'ուզէր: Տանջանք մը: Ակնթարթով մը իմ ազիտութեանս անդունդը շափեցի: Գիտին ինչ զիս բռնեց փախչելէն: Մութ սանդուղին գաղափարը, ուսկից վար չէի կրնար իջնալ վազելով: Ուրիշ բան չկար բայց ըսածին հոգ չընել և շարունակել անվեհեր, վարժապետիս զմեղինը, մորաքրոջս գլխարկը, մերձաւորին հովանոցը...

## ՏԵՍԻԼ ՉՈՐՐՈՐԴ

Վերոյիշեալները: 1<sup>0</sup>. ՆԿԱՐԻՉ, ծերուկ մը, երկայն մազեր, վիպական արուեստագէտի կերպարանք, առանց տեսնուելու կը մտնէ խորէն:

1<sup>0</sup>. ՆԿԱՐԻՉ, խօսելով դրեթէ հեգելով:

Ներողութիւն: Տիկնոջ հովանոցը:

ՆԵՆՆԵԼԷ

Է՞՛հ:

Ագշած կը դառնայ:

ԹՈՄԻ Ն. Ն.

Նկարիչը:

Նեննէլէ մեծածայն կը խնայայ, ինչպէս նաեւ Թոմին և Մաքսիմօսը:

1<sup>0</sup>. ՆԿԱՐԻՉ

Ներողութիւն: Արդեօք սխալեցայ: Տիկնոջ հովանոցը կը հարցնեմ:

ՆԵՆՆԵԼԷ միշտ ծիծաղելով:

Մօրս հովանոցը կ'ուզէ ըսել: Թոմի... կեցիր կեցիր, ես կ'երթամ կ'առնեմ: Կ'երթայ ալը:

ԹՈՄԻ նկարչին :

Ներեցեք, դէպքը բերաւ որ դուք կրկնէք մտնալու ատեն . . . .

10. ՆԿԱՐԻՁ

Կ'աղաչեմ, կ'աղաչեմ, կը հասկնամ: Բայց ատկինը զիս զրկած էր: Շողողուն արեւ մը կայ:

Նէննելի կը դառնայ հովանոցով և նկարչին կու տայ դայն:

Ահաւասիկ:

1° ՆԿԱՐԻՁ

Օրբորդ, շնորհակալ եմ: Պարոններ: Կ'երթայ:

## Տ Ե Ս Ի Լ Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ

ԹՈՄԻ, ՄԱՔՍԻՄՈՍ, ՆԵՆՆԵԼԻ, յետոյ ՄԱՐԹԱ և ԿՈՌԻՍԸ:

ՄԱՔՍԻՄՈՍ

Ո՞վ է:

ԹՈՄԻ

Մորս պատկերահաններէն մէկն է: Նոր-

վեկիացի մը: Արուեստագէտներու Ակմբին մէջ մայրս երկու նկարիչներ գտաւ և հիմա մէկտեղ կ'աշխատին:

ՄԱՔՍԻՄՈՍ

Նո՞յն պատկերին վրայ:

ԹՈՄԻ

Ոչ, այնչափով չեն գոհանար: Եւ ո՛չ մտածէ: Նկարածնին երեք պատկեր է: Իրականէն մէկտեղ կը շինեն, Սպիտակ Լեռը օրինակելով, բայց իւրաքանչիւրը իրենը կը շինէ: Աղէկ չի բացատրեցի՞:

ՄԱՔՍԻՄՈՍ

Այդ բանէն չեմ հասկնար:

ԹՈՄԻ

Չհաւնելու կերպ ունիս: Մայրս շահու նպատակաւ կ'ընէ, դիտես: Ոհ տանը համար հասոյթ մը պիտի ըլլայ:

ՄԱՔՍԻՄՈՍ

Չանոնք կը ծախէ՞:

ԹՈՄԻ

Այդ ուրիշ խօսք է: Պիտի ծախէ:

ՄԱՔՍԻՄՈՍ ՆԵՆՆԵՆԷԻ :

Ուստի, քանի՞ դաս տուիր :

ՆԵՆՆԵՆԷ

Միայն մէկ : Երէկ երկրորդը պիտի տայի, բայց զրեցի թէ անհանգիստ եմ :

ԹՈՄՍ

Հոյ է իսկ՝ որ իմ խորհրդովս զրեցիր, մանաւանդ թէ նամակը ես քեզի թելադրեցի : Ճշմարիտը այս է : Եթէ Մաքսիմոս չի հաճի, գիտնայ գէթ թէ որուն հետ է որ պիտի զարնուի :

ՄԱՔՍԻՄՈՍ

Եւ ստուգիւ Մաքսիմոս չի հաճիր : Բայց ոչ ոքի հետ կը զարնուի : Առաջուց գուշակուելու էր :

ՆԵՆՆԵՆԷ

Այնպիսի անյարմար մարդիկներու հետ :

ՄԱՔՍԻՄՈՍ

Տես, բուն այս բանս չէի ուզեր ըսել : Կը գուշակուէր որ առաջին փորձին՝ դու գործին ղժուարութիւնները պիտի ստուարացնէիր և պիտի վհատէիր : Այս՝ ամէն բաներու կը

հանդիպի : Գալով Ռուելլէ օրինոջ, եթէ ինչպէս որ կ'ըսես դու այրի ծնած չէ, մնացած է սակայն ութ ամիս ամուսնութենէ ետքը : Վասն զի իր էրիկը, ճարտարագէտ, հանքի մը մէջ, ուր կ'սիգուշի մը պայթումէն ետքը իջած էր, փուռումի մը տակ մեռեր է : այրին կ'ապրի ողորմելի ոտճիկով մը՝ որ կը ստիպէ զինքը կազմար ուտելու՝ և ոչ գետնասունկ, ասով մէկտեղ այն գետնասունկներն ալ եղածովը այնչափ անոյշ չեն բուրբ : Որդին Կասդոն կը կոչուի, որովհետեւ անունները սովորութիւն է դնել կեանքի առաջին օրերուն, այսինքն երրոր հաւասարապէս ամէնքնիս ալ գեղեցիկ և ազեղ ենք : Ես, եթէ երբեք որդիք ունենամ, զանոնք պիտի անուանեմ Յովսէփ կամ Կղեմէս կամ Բարդղիմէոս, հեղինական հակադրութիւններու վտանգէն փախչելու համար, և նաեւ արձակական իրերու մէջ բանաստեղծութիւնը գանալու տեսակ մը հակամիտութեան համար : Բայց կարելի չէ պահանջել որ ամէնքն ալ իմ իմաստութիւնս ունենան : Տարիքին վրայ հարցմունքը, մեկնեցի քեզի : Այն տուներուն մէջ, ուր ընդունելութեան սրահներ չկան, բնական է որ մայրը ճաշարանին մէջ

մնայ, նաեւ այն ատեն երբոր զաւակն ալ անգղիերէն սորվելու վրայ ըլլայ հոն՝ իտալացի գեղեցիկ օրիորդէ մը. և վերջապէս ինքը քերականութիւնը կ'ուզէր, որովհետեւ իրեն ժամանակները այնպէս կը սորվէին, որովհետեւ սորված է անիկայ և գիտէ:

ԹՈՄԻ

Ա. նստէ:

ՆԵՆՆԵԼԷ

Իսկ ես չեմ գիտեր:

ՄԱՔՍԻՄՈՍ

Ո՛հ Տէր Աստուած:

ՆԵՆՆԵԼԷ

Իբրաւ է: Բնաւ սորված չեմ: Դոսգան դաշեկէ մը անցայ անգղիացի դաստիարակուհիի մը և ասկէ գերմանացիի մը:

ՄԱՔՍԻՄՈՍ

Իշխանօրէն ըրեր ես բաներդ: Առանց աշխատութեան:

ՆԵՆՆԵԼԷ

Եւ ազէտին մէկն եմ:

ՄԱՔՍԻՄՈՍ

Դարձիր հոն և մէջէն շատ աղէկ կ'ելլաս:

ԹՈՄԻ

Բայց այո՛: Դաս զլուի երեք ֆրանք, շաբաթը երկու դաս, շաբաթը վեց ֆրանք կ'ըլլայ. ամիսը քսանըչորս ֆրանք: Գրեթէ խոհարարուհիի մը թոշակը:

ՄԱՔՍԻՄՈՍ

Նուազ, նուազ: Եթէ ամէն անգամ վերցընես կառքին համար ֆրանք ու կէս, ամիսը տասուերկու ֆրանք կը մնայ, որ զրեթէ վարձքն է շատ մը փոքրիկ գործաւորուհիներու՝ որոնք ոտքով կ'երթան նաեւ անձրեւին ատեն:

ԹՈՄԻ

Պո՛ւմ:

ՄԱՔՍԻՄՈՍ

Ի՞նչ ըսել կ'ուզես:

ԹՈՄԻ

Ոչինչ: Պու՛մ: Թնդանօթի հարուած մը:

ՄԱՔՍԻՄՈՍ

Եւ դու գո՛հ կ'ըլլաս հօրդ կռնակէն ապրելով:

ՃԻՍԳՈՋԱ. ԴՈՇԱԿԷՍ ՍԵՐԻՍՈՆԵՐԸ.

ԹՈՄԻ

Աշխարհք գալէս ետքը ուրիշ բան չեմ ըրած, և հանրութեան համարումը միշտ վայլեր եմ:

ՄԱՔՍԻՄՈՍ

Համարումը:

ԹՈՄԻ

Այո՛, պարոն: Եւ եթէ կ'ուզես որ հետո քրօթէն խօսիմ, ըսեմ նաեւ պատճառներն ալ: Մարդս հացով միայն չսպրիր:

ՄԱՔՍԻՄՈՍ

Դուրս հանէ կերակուրդ:

ԹՈՄԻ

Աշխարհքիս մէջ մարդիկ կան որ յստակ իմացականութեան գործն ունին, որ ըսել է կատարելագործել զգացումները, պահպանել վայելչական աւանդութիւնները:

ՄԱՔՍԻՄՈՍ

Գերեզմանին պահպանները:

ԹՈՄԻ

Մէկ խօսքով, ցուցնել գեղեցկութիւնը:

ՄԱՔՍԻՄՈՍ

Թշուառութեանս: Եւ ունիս դու այն պաշտօնը:

ԹՈՄԻ

Ունէի երբոր հարուստ էի:

ՄԱՔՍԻՄՈՍ

Իրա՞ւ կ'ըսես: Ուրեմն, եթէ դու չըլլայիր և եթէ քու նմաններդ չըլլային, այս խեղճ աշխարհքս... — Սակայն գեղեցկութիւնը մեր մէջն է: Եւ աւելի իմ մէջս կայ քան թէ քուկդ, և աւելի կատարեալ, և աւելի յստակ, Ինծի այն լիճը գեղեցկութեան զգացում մը կու տայ որ և իցէ ժամուն և ինչ վիճակի մէջ որ գտնուիմ: Վայելու համար՝ քեզի կարեւոր է որ քնացած ըլլաս լաւ անկողինի մը մէջ, լաւ հագուած ըլլաս, բերանդ գլանիկով մը թիկնաթուի մը վրայ նստած: Քու գեղեցկութիւնդ ուրեմն մեծագոյն մասամբ անկողնագործը, դերձակը, կահերու վաճառականը և ծխախոտի խանութը կ'ընէ:

Նեանէլէի:

Ինծի ականջ դիր, դարձիր հոն:

ԹՈՄԻ ուժղնութեամբ:

Չեմ ուզեր:

## ՆԷՆՆԵԼԷ

Թոմի:

ԹՈՄԻ

Հոգեշահ Ակադեմիային որ ջանացիր մեր տանը մէջ մտցնելու՝ վերջ ապուռ ժամանակն է: Թէ քոյրս աշխատի, եթէ գտնայ, իմ ուղածս ալ այն է: Ես ալ ետեւէ եմ որ աշխատիմ: Մի խնար որ քու ձեռնարկութիւններդ թողուցի: Անուանի զրազանք մը ինծի տուած էիր: Ներկայ ըլլալ գործաւորներու որ սառնապատ լեռ մը կը ծակեն: Բանուկ ճամբայ մը զիս ստեղծողին զրկելու: Գուրսը կարծրապինդ սառոյց և ներսը խաւարամած Աւերիկէն:

ՄԱՔՍԻՄՈՍ

Ես տարիէ մը ի վեր կը դիմանամ հոն:

ԹՈՄԻ

Դու, դու: Եւ ամիսը իննսուն ֆրանք:

ՄԱՔՍԻՄՈՍ

Կերակրով և բնակութեամբ տանս մէջ: Պէտք էի վճարել ուրիշ ընթերակայի մը որ ընթերակայ ըլլար քեզի և արուեստը սորվեցներ քեզի:

ԹՈՄԻ

Խոնաւ և թանձր ծուխ մը... մերկանդամ և քրտնաթոր մարդիկ: Պատկերազարդ օրագրի պատկերներու բաներ: Տասը օրէն վերջը երեք հատ զգեստ մաշեցուցեր էի:

ՄԱՔՍԻՄՈՍ

Ո՛հ յայտնի է քանի որ ճերմակ կը հագուէիր:

ԹՈՄԻ

Պէտք էի զդեստեղէններս ալ փոխել: Հաւ գործ:

Կը դառնայ կը նստի պատուհանին մօտ: Իրեն և ինծի համար յարմար աշխատութիւն մը կ'ուզեմ:

ՄԱՔՍԻՄՈՍ

Ի՞նչ բանի:

ԹՈՄԻ

Մեր վիճակին:

ՄԱՔՍԻՄՈՍ

Դու շատոնց գտած ես: Անզդիական ծխափող մը, անզդիական աղէկ ծխախոտ, պատուհանին մօտիկ աթոռ մը և ճիշդ տեղը ես:

ՆԵՆՆԵԼԷ

Չեմ թողուր որ եղբորս հետ այդպէս խօսիս :

ՄԱՔՍԻՄՈՍ

Հայրդ վարն է, էհ :

ՆԵՆՆԵԼԷ

Այո :

ՄԱՔՍԻՄՈՍ

Կ'երթամ բարեւելու :

Կը սկսի երթալ : Մուտքին վրայ կը հանդիպի Մարթայի՝ որ կ'ընկերէ վայելչաշուք պզտիկ կուռի մը հետ, որ ձեռքը նամակ մը ունի : Մարթա շուտ մը դուրս կ'ելլայ : Կուռմը Մարտինոսի քանի մը խօսք կ'ըսէ որ չի լսուիր :

ՄԱՔՍԻՄՈՍ

Ի՞նչ : Պարոն Ռոզաննի որդի՞ն : Ահա հոն է : Նայէ, թովմաս : Քեզի համար գործ կայ հոս :

Թոյի կը վազէ, տոմսակը կ'անէ և կը կարգայ :

ՄԱՔՍԻՄՈՍ

Ահ, իրենէ :

ՆԵՆՆԵԼԷ

Քեզի ըսի արդէն թէ անունս Նէննէլէ է :

ՄԱՔՍԻՄՈՍ

Ներէ, անունդ իրենէ է, ինչպէս եղբորդ՝ թովմաս : Ես յանցանք չունիմ, բայց այս այս է և չեմ կրնար ուրիշ կերպով զձեզ անուանել : Փաղաքշականները կ'ատեմ : Կ'ուզէի ըսել որ այն կողովին մէջ Առվէի վեց կարմրախայտ կայ, այս գիշեր Շամոնիի մէջ որսացուած, պատուական : Նախաճաշ ձեզի հետ կ'ընեմ :

Կ'երթայ :

ՏԵՍԻԼ ՎԵՅԵՐՈՐԻ

ԹՈՄԻ, ՆԵՆՆԵԼԷ, ԿՈՌԻՄԸ, յետոյ ՄԱՐԹԱ :

ԹՈՄԻ տոմսակը կարգաց և զնաց ստուլին վրայ զրեւու : Առաջին թերթ մը կը պատռէ, ուրիշ մը նորէն կը սկսի, զլսուել շարժումներով որ կ'արտայայտեն ներքին զգացումներու հակապատկեր : Մի և նոյն միջոցին Նէննէլէ կ'ըսուի առաւ : Մայր դունէն կը կանչէ :

Մարթա :

Կասկածոտ կերպով կուռին կը նայի :

ՄԱՐԹՍ. կը մտնայ: Շատ համեստութեամբ  
հագուած գեղջկուհի մըն է:

ՆԷՆՆԵԼԷ

Ա. : Նախաճաշի համար կարմրախոյտ  
ձկներ են:

Մարթա կ'ելայ կողովով:

ԹՈՄԻ վերջացուց գրելը և կը կանչէ կուռմը:

Եկուր հոս:

Պատուհանին մօտ դինքը կը տանի,  
ցած ձայնով կը խօսի հետը, նա կը  
պատասխանէ իրեն նոյն կերպով:

ՆԷՆՆԵԼԷ կը սկսի երթալ աջակողմէն  
եղլալու համար:

ԹՈՄԻ

Կեցիր մի երթար, գիտես:

ՆԷՆՆԵԼԷ

Ոչ, սիրելիս, հետաքրքիր չեմ:

ԹՈՄԻ

Եղաւ:

Կու տայ տոմսակը կուռմին:

Գնա:

ՆԷՆՆԵԼԷ:

Գիտնաս որ ես նախաճաշին չեմ ըլլար:

Պարոն Դատարարակին հետ չեմ ուզեր գըտ-  
նուիլ:

ՆԷՆՆԵԼԷ թերահաւատ:

Ա. :

ԹՈՄԻ

Ուրիշ կողմանէ, ինծի հրաւերք մը եկաւ,  
ձիշդ ժամանակին:

Լուսին:

ՆԷՆՆԵԼԷ

Նայէ որ տասուերկուք է, եթէ կ'ուզես  
երթալ հագուիլ:

ԹՈՄԻ

Կը սպասեմ որ մայրս մտնայ: Հետը խօ-  
սելիք ունիմ:

ՆԷՆՆԵԼԷ

Դու: Հրաշք:

ԹՈՄԻ

Ինծի եղած հրաւերքը մէկին է: Եւ կ'եր-  
թամ ինչպէս որ կը գտնուիմ: Մարդիկնե-  
րու déjeuner մը:



ՆԵՆՆԵԼԷ ԿԸ ԸՌԷ:

ԹՈՄԻ

ՉԷՆ ՀԱՆԱՏՈՒՐ:

ՆԵՆՆԵԼԷ

ՉԷ: ՉԵՄ ՀԱՆԱՏՈՒՐ:

ԹՈՄԻ

ԱՅՆ ԱՏԵՆ ԸՎԷ:

ԿԸ ՍԿԻ ԵՐԹԱԼ ՂԵՎ Ի ԱՂ:

ՆԵՆՆԵԼԷ

ԹՈՄԻ: ԵՐԿՈՒՔՆԻՍ ՄԷԿՈՆԳ ԿԵՆԱՆՔ: ԵՐԿՈՒՔՆԻՍ ՄԷԿՈՆԳ ԿԵՆԱՆՔ: ՇԱՍ ԱԷՍՔ ՈՒՆԻՄ ՈՐ ԴՈՒ ՀԵՍՍ ԸԼԼԱՍ: ԱՅՆԱԿԷՍ ՂԻՍ ԵՐԵՍԷ ԹՈՂՈՒՄ ԿԸ ՂԳԱՄ: ԱՅՆԱԿԷՍ ՂԻՆԱԹԱԻ:

ԹՈՄԻ

Ի՞ՆՂ ԿԱՅ ՀԻՄՏԿ: Ի՞ՆՂ ՈՒՆԻՍ:

ՆԵՆՆԵԼԷ

ՉԵՄ ՂԻՍԵՐ: ՄԻՐԱՆ, ԿՈՐԾԱՆՈՒՄԸ, ԹԷՍՄԱՆ յԱՆԿԱՐԾԱՀԱՍ, ՂԻՍ ՈՂ ՎՀԱՏՈՆԳՈՒՅԵՐ ԷՐ և ՈՂ ԼՔՈՒՅԵՐ: ԵՒ յԱՅՍՆԻ Է ԹԷ Կ՛ԵՐԵՒԱԿԱՅԷԻ ԽԵՂՃՈՒԹԻՒՆԸ, ԿԸ յԻՂԷՆ: ԽԵՂՃՈՒԹԻՒՆԸ չԵԿԱՒ: ՄԱՆԵՐ ՂՐԿՈՒՄՆԵՐ, չԵՄ ԿԱՐԾԵՐ ԹԷ ՀԱՍ ՄԻՆ ԱԼ ՈՒՆՆԱՆՔ: ԹԵՐԵՍ

ԱՅՍ Է: ՉԵՄ ՂԻՍԵՐ, չԵՄ ՂԻՍԵՐ: ՄԵՐ ԿԵՆԱՆՔԸ, ԱՄՐՈՂՂ ԿԵՅԱԾՈՂԸ, ԿԱՍԿԱԾԵԼԻ ԵՐԵՆՈՅԹՄԸ ՈՒՆԻ: ԻՆԾԻ Կ՛ԵՐԵՆԱՅ ԹԷ ՈՂ ՈՔ ԻՐԵՆԱԿՆ Է: ԻՆԾԻ Կ՛ԵՐԵՆԱՅ ԹԷ ՀԱՅՐՍ ՂԻ ՀՐԱՄԱՅԵՐ ԻՆՂԱԷՍ ՈՐ ԱԷՍՔ Է... ՄԱՅՐՍ... ԿԸ ԱՏԵՆՆԵՍ ՂԻՆՔԸ: ԴՈՒ, ԴՈՒ ՈՐ ՄԻՐԱՆ ԱՅՆՔԱՆ ԻՆԾԻ ՀԱՏԵԼԻ ԷԻՐ...

ԹՈՄԻ

ՏԱՐՐԵՐ ԵՄ:

ՆԵՆՆԵԼԷ

ՈՂ: ԵՒ ՏԻՂԴ ԱՅՍ Է: ՏԱՐՐԵՐ ՉԵՍ: ԵՒ ՀՈՍ, ԱՅՍ ԱՏՆԱ ՄԷՂ, ԱՅՍ ԿԵՆԱՆՔՈՎ... ԱՂ ՉԵՐԹԱՐ: ԿԸ ՂԳԱՄ ԲԱՆ ՄԸ ՈՐ ԻՐ ՆՈՒԼՐԱԿԱՆ ՂՐՈՂՄԸ ԿԸ ԿՈՐՍՆՅՆԷ: ՉԵՄ ՂԻՍԵՐ ԻՆՂԱԷՍ ԸՍԵՄ ՔԵՂԻ:

ԹՈՄԻ

ՄԱՔՍԻՄՈՍՐ ՕՐԻՆԱԿ Կ՛ԱՌՆԵՄ:

ՆԵՆՆԵԼԷ ԿԸ ՂԱՆՈՒԻ ԱՌՈՂԻՆ ՄՈՍ:

Ի՞ՆՂ ՂԱՐՂԱՀՈՍՈՒԹԻՒՆ:

ԿՈՒՄԻՆ ԲԵՐԱԾ ԱՌՄԱԿԻՆ ԱՄՆԱՐԱՆԸ Կ՛ԱՌՆԷ և ՂԵՍԻՆ ԿԸ ՆԵՄԷ:

ԹՈՄԻ

ԷՅ, ԸՐԱԾԴ Ի՞ՆՂ Է:

ՆԵՆՆԵԼԷ

Միայն պահարանն է . . . մի վախնար :  
Ահա մայրս :

Կ'երթայ վազելով զեզ ի իր  
սենեկին դուռը :

Քու սեղանակիցներդ մաքուր շեն հոտիր :  
Կ'երթայ :

**ՏԵՍԻԼ ԵՐԹՆԵՐՈՐԳ**

ԹՈՄԻ, ՅՈՒԼԻԱ մանալով նկարչի արկղիկ մը  
վար կը դնէ :

ՅՈՒԼԻԱ

Ուրիշ անգամ այս հաճոյքն ընէիր ինծի  
և չընդունէիր բարեկամներս բարձրաձայն  
ծիծաղներով, երբոր անոնք ինծի ծառայու-  
թիւն մը ընելու կամակատարութիւնն ունին :

ԹՈՄԻ

Իրմէ ներողութիւն խնդրեցի :

ՅՈՒԼԻԱ

Ըսաւ ինծի, բայց բան մը չի հասկցաւ  
և դարձաւ բոլորովին խռոված : — Ի՞նչ ա-  
նոյշ բուրումն : Իմ սրուակս առեր ես :

ԹՈՄԻ

Մի ըսեր, մայր : Կ'անիրաւիս :

ՅՈՒԼԻԱ

Ինչո՞ւ համար :

ԹՈՄԻ

Կ'ապահովցնեմ զքեզ որ կ'անիրաւիս :

ՅՈՒԼԻԱ

Ա՛հ :

Կը հասկնայ :

Տեսայ որ կուտմը դուրս կ'ելլար : Ա՛յո՛ :

ԹՈՄԻ

Բայց ի՞նչ կուտմ :

ՅՈՒԼԻԱ

Յայտնի է թէ չի ճանչցուիր : Ժընէվի և  
չՐջականերուն ամէնէն աւելի գեղեցիկ հա-  
մազգեստն է : Կ'ուզե՞ս տեսնել :

Կը բանայ արկղիկը ուր ուրուանկարը կայ :

ԹՈՄԻ

Ի՞նչ բան :

ՅՈՒԼԻԱ

Իմ այս առաւօտուան ուրուանկարս : Մէկ

ձեռքէն հանեցի նախագիծը: Յաիշտակուած էի: Այն Հելմէր Սգրիլը մեծ վարպետ մըն է: Միւսը, ծերը, չհաշուուիր, չափաւոր արուեստական մը ունի, բայց ճշմարտին առջեւ կը տեսնէ ինչ որ կայ: Չի թափանցեր, չի գիտեր քաղել հանել:

Յուցնելով էր նկարը:

Աչք մը տուր այն երկնքին: դու ըսէ թէ օդը չի դողար: Մտածէ որ գիշերօթիկ աշակերտուհիի մը պէս կը նկարէի: Դեռ Հելմէրին կարողութիւնը չունիմ, ոչ, բայց կը զգամ որ պիտի համնիմ հոն: Ինքը ապահովուց գիտ: Երեւակայէ որ այս ուրուանը կարս կ'ուզէր հետը տանիլ: Ինծի մեծ խօսք մը ըսաւ: Դուք կը սկսիք այս օրէն, ըսաւ ինծի, վասն զի կը սկսիք դադտնին դուրս հանել: Բացատրութիւններ ունի որ: Կ'ըսէ որ նկարչութիւնը գաղտնիքին թափանցողութիւնն է, որ դէպ ի զգայարանքներուն չի դառնար այլ հոգիներուն: Իրօք ինքը կ'այլակերպէ: Իրեն դաշտանկարները կը թռչին: Ա՛վէն բաները թեւ ունին:

ԹՈՍԻ

Կանգ առ: — Կրնամ ինծի հարիւր ֆրանք տալ:

ՅՈՒԼԻՍ

Ի՞նչ կ'ըսես:

ԹՈՍԻ

Թէ ինծի կրնաս հարիւր ֆրանք տալ: Առանց կատակի, ինծի կարեւոր են:

ՅՈՒԼԻՍ

Բայց չունիմ: Ինչ որ քիչ մը խնայողութիւն ըրած էի, ամէնը գնաց: Ինծի համար չէ, գիտես: Միայն արհեստական Ակումբին մուտքին մտքսը կ'արժէ ինծի 180 ֆրանք: Կրնայի հօրմէդ ուզել, վասն զի վերջապէս իմ զուարճութեանս համար չէ որ հոն մտայ: Չիս ճանչցնելու համար էր: Պէտք եղաւ որ պատկեր մըն ալ գնեմ:

ԹՈՍԻ

Պատկեր մը:

ՅՈՒԼԻՍ

Յայտնի է: Արուստտ-Հոսվմեակակնին վաւերիչը նկարելու մոլութիւնը ունի: Անպիտան բաներ: Այլ եթէ կ'ուզէի այն հանդէսին՝ որ ամէն օտարականներուն ձեռքն է՝ հաճելի ըլլալ, պէտք էր անկէց անցնիլ: Արդէն Սի-

ւիսցինները պիտի չըլլան որ զիս նկարչու-  
թիւամբ հարստացնեն: Բայց դ՞ո՞ւ: Քու տա-  
տուերկուն հազար ֆրանքդ:

ԹՈՍԻ

Երէկ իրիկուն վերջին հազարը կորսըն-  
ցուցի: Մինչեւ հիմա ջուրին երեսն էի, բայց  
երէկ իրիկուն այնպիսի անբաղդութիւն մը  
եղաւ.....

ՅՈՒԼԻԱ

Ո՛ւր, ո՛ւր: Օպրֆի տունը:

ԹՈՍԻ

Հարկաւ: Ո՛ւր կ'ուզես որ ըլլայ:

ՅՈՒԼԻԱ

Բնիկ ո՞՞ւս է:

ԹՈՍԻ

Յայտնի է:

ՅՈՒԼԻԱ

Եւ իրաւցնէ ամուսին մը ունեցած է:

ԹՈՍԻ

Ի՞նչ հարցում:

ՅՈՒԼԻԱ

Ի՞նչ տարիք կրնայ ունենալ:

ԹՈՍԻ

Երեսունուերկուք:

ՅՈՒԼԻԱ

Քառասունըհինգ կ'ըսեն: Կ'ըսեն թէ ու-  
րիշ ամուսին մը կը փնտռէ:

ԹՈՍԻ

Ակումբին զրոյցներն են:

ՅՈՒԼԻԱ

Գէշ կ'ընես կը խաղաս:

ԹՈՍԻ

Միակ վայելուչ եղանակն է ինծի պէս  
մարդու մը նորէն վիճակ մը հայթայթելու:  
Սուղի կը նստի ինծի, զիտես, յամառիլ:  
Տուր ինծի այն հարիւր ֆրանքը:

ՅՈՒԼԻԱ

Չունիմ, կ'ըսեմ: Գուցէ վաղը:

ԹՈՍԻ

Ինչո՞ւ վաղը և այսօր չէ:

ՅՈՒԼԻԱ

Յարմար առիթ մը կայ, բայց հայրդ պիտի  
ձեռնդռն. յոչպէս տերևոները.

չուզէ և ոչ ալ Նէննէլէն, որովհետեւ ինքն  
է որ այս տանս մէջ կը հրամայէ :

ԹՈՄԻ

Ի՞նչ կը մտնայ Նէննէլէն : Յարմար ա-  
ռիթը որն է :

ՅՈՒԼԻԱ

Այս իրիկուն Ակումբին մէջ նուագահան-  
դէս կայ՝ ամառնային պզտիկ Յուցահանդէ-  
սին բացման համար : Ես ղրկեցի տասուերկու  
հատ մը ուրուանկարներ : Հելմէր Սղրիլ շատ  
պնդեց որ նուագահանդէսին ալ երթամ :  
Կ'ուզէ զիս ներկայացնել Կուրիլի, հռչա-  
կաւոր փարիզացի վաճառականին որ ասկէ  
կ'անցնի :

ԹՈՄԻ

Խենթ է :

ՅՈՒԼԻԱ

Եւ ստուգիւ իրեն ոչ ըսի : Մեզք, որով-  
հետեւ Հելմէր կ'ապահովցնէ իմ բոլոր ու-  
րուանկարներս ծախելու :

ԹՈՄԻ

Շողակրատանք :

ՅՈՒԼԻԱ

Չեմ տեսնար թէ ինչ զէշութիւն կրնայ  
ըլլալ :

ԹՈՄԻ

Հօրս հետ կ'երթայիր :

ՅՈՒԼԻԱ

Ո՛հ խեղճ մարդը, իրիկունը յոգնած է :

ԹՈՄԻ

Այն ատեն ոչ :

ՅՈՒԼԻԱ

Խօսքի վրայ կորսնցուցիր :

ԹՈՄԻ

Ի՞նչ : Փող մըն ալ պարտական չեմ : Բայց  
այսօր կը զգամ թէ կը յաջողիմ :

ՅՈՒԼԻԱ

Հո՞ն կը դառնաս :

ԹՈՄԻ

Նախաճաշի հոն եմ :

ՅՈՒԼԻԱ

Ինքը Օւլոֆն ալ կը խաղայ :

ԹՈՄԻ

Երբեք: Մանաւանդ թէ շախորժիր:

ՅՈՒԼԻԱ Թոմիի աչքը մտնալու համար:

Ի՛նչ սրտազրաւ կերպարանք: Կարծես թէ Մասդրոյ Լուգայի աստուածածին մըն է: Ստէպ առաւօտը կ'անցնի ասկէ՛ անգլիական զոյգ մը նժոյգ կառավարելով: Խորհրդաւոր և հիացական կերպ մը ունի:

ԹՈՄԻ

Ձիս դաշնակից ունենալու համար զիս կը խարես: — Ի՛նչ ցած բան է որ մտածելու և ընելու վրայ ենք դու և ես:

ՅՈՒԼԻԱ

Ինչո՞ւ ցած:

ԹՈՄԻ

Ձե՛ս հասկնար: Ըսել է թէ ինձմէ աւելի վաւ ես. վասն զի ես կը հասկնամ և...  
 Ձեռքը կ'երկեցնէ:

Յիսուան, երթանք:

ՅՈՒԼԻԱ

Իբրեւ թէ Ակումբը բարոյական սեղ մը չըլար: Ամբողջ օտարական գաղութը հոն

կ'երթայ: Հելմէր առաջարկեր էր դալու զիս առնելու և նորէն բերելու: Բայց ասիկայ իմ գործիս չի գար: Չէ թէ գէշ բան մը կայ. այլ տեսակ մը բաներու մէջ արտաքոյ կարգի չըլահայեաց եմ: Ծերն ալ պիտի գար:

ԹՈՄԻ

Ժամը քանի՞ն է նուագահանդէսը:

ՅՈՒԼԻԱ

Իննէն կէս զիշեր: Ո՛հ ա՛յ բոլորովին հրաժարեցայ: Հօրդ պիտի ըսեմ, որպէս զի վերջէն զիս չի կշտամբէ առիթը կորսնցնելու համար: Բայց առանց վրայ աալու: Գալով դրամին....

Թղթապանակը զրգանէն կը հանէ:

Երկու ոսկի կու տամ. քեզի:

ԹՈՄԻ

Եւ երեք ֆրանք կառքին համար, չեմ կրնար հոն փոշոտած հասնիլ:

ՅՈՒԼԻԱ կու տայ երեք ֆրանքը:

Ա.:

ԹՈՄԻ

Ենորհակալ եմ:

ՅՈՒԼԻՍ

Սակայն թէ որ վաստկիս կէս կ'ընենք:

ԹՈՄԻ

Լաւ:

## ՏԵՍԻԼ ՈՒԹԵՐՈՐԳ

ՄԱՔՍԻՄՈՍ և վերոյիշեալները:

ՄԱՔՍԻՄՈՍ

Թողմաս....

Յուշեային:

Ո՛հ ի՞նչպէս ես, հօրաքոյր:

ՅՈՒԼԻՍ

Վայրենի մարդը, լեռներէն իջած է:

ՄԱՔՍԻՄՈՍ

Հիմա հօրդ հետ քու գործերուդ վրայ խօսեցանք: Ինծի ըսաւ թէ դատարկ կենալով կը ձանձրանաս:

ԹՈՄԻ

Խօսք է:

ՄԱՔՍԻՄՈՍ

Աւելի լաւ: Գաղափար մը ունիմ:

ԹՈՄԻ

Ետքէն ինծի կ'ըսես, հիմակ....

ՄԱՔՍԻՄՈՍ

Ոչ, պէտք է որ շուտ մը ըսեմ: Եթէ գործիդ կու գայ, կը ջանամ այսօր իսկ յարմարցնելու: Իրիկունս դարձեալ կը մեկնիմ: Ես հոս Ժընէվ բարեկամ մը ունիմ որ շոգեշարժ մեծ սղոցարանի մը սէրն է: Գիտեմ թէ գրագիր մը փնտռելու վրայ է:

ԹՈՄԻ

Շնորհակալ եմ, ոչ:

ՅՈՒԼԻՍ

Փայտակոտորի՛ մը գրագիր:

ՄԱՔՍԻՄՈՍ

Բայց ի՞նչ փայտակոտոր:

ՅՈՒԼԻՍ

Սղոցել, կոտրել:

ՄԱՔՍԻՄՈՍ

Եւ ի՞նչ է թողմասը: Աւատրիոյ տան իշխան մը:

## ԹՈՎՄԱՍ

Քու միտքերդ կը հասկնամ, զանոնք արդէն կարդացի տպագրուած, բայց հիմակ անոնց վրայ վիճարանելու ժամանակ չունիմ: Ինծի déjeunערի կը սպասեն:

## ՄԱՔՍԻՄՈՍ

Ա՛հ: Այն կապիկին տոմսակը հրաւէրք մըն էր:

## ՅՈՒԼԻԱ

Կապիկ: Եթէ լսէին ըսածդ: Օպլոֆի կուսմը:

## ՄԱՔՍԻՄՈՍ

Օպլոֆի՞:

Այն ջլթիկին քով նախաճաշի՞ հրաւիրուած ես:

## ԹՈՄԻ

Մաքսիմոս:

## ՄԱՔՍԻՄՈՍ

Ասիկայ մաքուր բառն է որ կ'ըսեմ: Եկ'երթաս հո՞ն:

## ԹՈՄԻ

Անչուշտ:

Կը սկսե երթալ:

ՄԱՔՍԻՄՈՍ մէկ թեւէն կը բռնէ:

Հոս կեցիր: Հօրաքոյր, հաճէիր վայրկեան մը անդին երթալու:

Թոմիին որ կը շանայ թեւը աղատել:

Նայէ զգեստդ կը պատուես:

## ԹՈՄԻ

Թող գիս:

## ՄԱՔՍԻՄՈՍ

Բայց այ՞: Ինչուան որ չուզեմ շես ելար: Հօրաքոյր:

## ՅՈՒԼԻԱ

Աղմուկ մի հանէք, ձեզ տեսեմ, աղմուկ մի հանէք: Տէր Աստուած:

## ՄԱՔՍԻՄՈՍ

Կ'աղաչեմ զմեզ առանձին թողուս: Բաներ ունիմ ըսելու որ ինքը միայն կրնայ լսել:

## ՅՈՒԼԻԱ ԹՈՄԻ:

Կ'երթամ հօրդ հետ խօսելու

Կ'երթայ մայր դռնէն:



## ՏԵՍԻԼ ԻՆՆԵՐՈՐԳ

ՄԱՔՍԻՄՈՍ և ԹՈՄԻ:

ՄԱՔՍԻՄՈՍ

Եւ անմիջապէս քեզմէ ներու մն կը խնդրեմ՝  
բռնութիւն բանեցընելուս համար. բայց ինծ-  
մէ աւելի ուժով էր: Գիտե՛ս թէ ով է Օւ-  
լոֆը: Պատասխան չեա տար: Ես կ'ըսեմ՝  
քեզի: Կին մըն է որ ոստիկանութեան հսկո-  
ղութեան ենթակայ եղաւ:

ԹՈՄԻ

Քաղաքական միջազգային ոստիկանու-  
թեան:

ՄԱՔՍԻՄՈՍ

Ոչ: Այդ՝ ինքն է որ կ'ըսէ.... ոչնչական-  
ները ամբաստանելով, որովհետեւ ձայնը ե-  
լած էր և հարկ էր մէջէն ելլալու ճամբայ  
մը գտնալ: Կարծուած պարոն Օւլոֆը....

ԹՈՄԻ

Ինչէ՞ն կարծուած: Իր ամուսինն էր:

ՄԱՔՍԻՄՈՍ

Անշուշտ: Եւ արժանաւոր ամուսին: Միայն  
թէ Օւլոֆ չէր կոչուեր, այլ Պորքի: Օւլոֆ  
երկրի մը անունն է: Պարոն Պորքի Օտեսսայի  
մէջ երկդիմի տուն մը բռնած էր: Հարստա-  
նալով, լաւ համարեցաւ վաճառականական  
անունը փոխելու: Չորս տարի առաջ երրոր  
մեռաւ, Ժընէվի ռուս եկեղեցիին հարիւր  
հազար ֆրանք թողուց, Օտեսսայի լրագիր-  
ները անոր կեանքը և հրաշքները պատմե-  
ցին: Գիտէ՞իր ասիկայ:

ԹՈՄԻ

Կ'իմացնեմ քեզի, որ, եթէ յանկարծ տա-  
րակոյս մըն ալ ունեցած էի, ճշդիւ այն կ'ը-  
նես ինչ որ պէտք է զիս համոզելու համար  
որ հոն երթամ:

ՄԱՔՍԻՄՈՍ

Ճիշդ: Գործակից վատասիրտներուն ա-  
պաստանարանն է այդ: Կ'ուզեն որ կարենան  
ըսել թէ շարութիւնը հեճուկի համար ըրին:

ԹՈՄԻ

Եթէ ամիսը երկու հարիւր յիսուն ֆրան-  
քին համար, որ կու տաս հօրս, որն որ նուէ-

բական աշխատութեամբ կը հատուցանէ քեզի, դու կը կարծես թէ կրնաս տիրապետել հոս ներսը:

## ՄԱՔՍԻՄՈՍ

Հորդ կու տամ, ինչ որ տալու էի որ և է մէկուն: Բարերար մը չեմ, կրնամ ուրեմն խօսիլ: Եւ եթէ ըլլայի ալ, նոյնպէս կը խօսէի, որովհետեւ կ'արհամարհեմ ձեր չափազանց փափկանկատութիւնները: Գործը բռնաւորութեան վրայ չէ, թէպէտ և, եթէ պէտք ըլլար, կը դգամ որ զքեզ քու քսան տարիներովդ կրնայի փակել բռնի սենեկի մը մէջ և շօթուլ որ դուրս ելլաս:

## ԹՈՍԻ

Ի՞նչ իրաւունքով:

## ՄԱՔՍԻՄՈՍ

Սոյն իրաւունքով որ կու տան ինծի քու կիներէդ աւելի ուժեղ երկու բազուկներ աւելի առողջ զլսի մը հրամանին տակ: Եթէ տեսնայի զքեզ որ ատրճանակի հարուած մը պարպելու վրայ ես քեզի դէմ, ամէնքն ալ ինծի իրաւունք պիտի տային՝ ատրճանակը ձեռքէդ խլելու՝ թէպէտ և գաւազանով ալ

հարկ ըլլար ծեծկուիլ: Քու յարաբերութիւններդ այն տիկնոջ հետ, քեզի և ուրիշներուն բազմհարուածեան ատրճանակէ մը աւելի վնասակար կ'ըլլան: Եւ զքեզ զինաթափ կ'ընեմ:

## ԹՈՍԻ

Սոյն տիկինը ճանչնալս երկու տարի կ'ըլլայ, երբոր Դեննիսի մրցանքին Ժընէվ եկայ: Հրաւէրքով եղած ամէնընտիր հաւաքում մըն էր: Ինքը՝ սպորտական երիտասարդութեան ծաղիկէն շրջապատուած առաջին կարգին մէջն էր:

## ՄԱՔՍԻՄՈՍ

Ոչ տեղացի: Աշխարհաքաղքըցի ամբոխը:

## ԹՈՍԻ

Երեք ամիս առաջ զինքը նորէն տեսայ: Մեծ տիկնոջ մը վարձուներն ունի: Իր անունը ամէն բարերարական գործերու զուլի կ'երեւնայ: Իր առունը անսողտանելի վայելչութեան օրինակ մըն է: Հոն կը խաղան, որովհետեւ խաղը, բարելաւ մարդիկներու մէջ, կը յայտնէ զբամէն այն անջատումը որ գերազանց որեարի նշանն է: Դու այս բա-

ներս չես կրնար ըմբռնել: Ինքը չի խաղար: Կամակատարութեան համար ազատ կը թողու որ խաղան, վասն զի կը սիրէ տունը մարդ ունենալ: Եւ կրնամ ըսել քեզի որ հոն հանդիպեցայ այնպիսի մարդիկներու՝ որոնց մինչեւ անգամ գլուխ կը ծռէիր:

## ՄՈՒՅՄԻՄՈՍ

Ո՛չ, ո՛չ, ո՛չ: Գլուխ մէկուն ալ չեմ ծռեր: Անոնց բարեւը կ'առնէի, կրնայ ըլլալ: Բայց հարուստ մարդիկներու: Անոր քով յաճախող հարուստները ապուշներ են՝ ուրիշ ոչինչ: Բայց աղքատ մը որ հոն կը մտնայ կ'ելլայ՝ չի կրնար ըլլալ բայց ստահակ մը:

## ԹՈՄԻ

Աղքատներուն համար անաչառ ես:

## ՄԱՐՍԻՄՈՍ

Վասն զի դանձը աւելի կը յարգեմ: Կը կարծես թէ զքեզ ճանչնայի՞ եթէ դու դեռ միլիոնատէր ըլլայիր: Չձեզ առաջները երբեք փնտռեցի՞, զքեզ և քուկիներդ: Ի՞նչ հոգս է աղքականութիւնը: Արեան ձայնին ականջ չեմ դներ, կամ ականջ կը դնեմ այն ատեն միայն երբոր կը խօսի կռիւներու, վիշտերու

և յաղթութիւններու լիակատար մասնակցութեան մը մէջ: Ա՛հ: Երբք ամիս առաջ, երբոր զքեզ, երիտասարդ, հանձարեզ և պետքի հասարակաց օրէնքին վերադարձած տեսայ, ինչպիսի՞ յոյսեր տածեցի վրադ: Եթէ աղքատ ծնած ըլլայիր, կրնայիր դու շատ պատուական մարդ մը ըլլալ: Եթէ գիտնայիր դու թէ ինչ բան մէկդի նետելու վրայ ես: Եկուր հոս, որ զքեզ վերստին խրատեմ: Թթու խօսքերը թողունք: Քեզի պարտականութեան վրայ չեմ խօսիր, կը խօսիմ երջանկութեան վրայ: Բայց կը կարծես որ իմ վայլած կեանքս քու վայլած կեանքիդ հետ կարենայ բաղդատուել: Բայց միայն կամենալու հրճուանքը: Եւ յաղթելու: Ո՛ւր կը մնայ Գեննիսի մրցանքները: Չեր աշխարհքը ընկուզի կճեպ մըն է: Չեր զուարթութիւնը շամբաներ շիշի մը մէջ կը կայանայ: Կը կարծես դու թէ երբեք ծիծաղած ըլլաս: Ա՛յն ծիծաղիլը որ գոհունակութիւն կու տայ և փռնդացողի պէս ուղեղը կը թեթեւցնէ: Գուք կը ժպտիք և կը ծաղրէք, ահա բոլոր եղածը: Չեր զուարթութիւնը պոտիկ երակէ դուքս կ'ելլայ: Յաջողութիւնը զձեզ չի ցնծացներ, ձախորդութիւնը զձեզ օրտաթափ կ'ընէ: Միայն ձեզի նման մարդիկներու վրայ կը

ծիծաղիք: Անոնց որ ձեզի նման չեն, այսօր այլ եւս չէք ծիծաղիր, վասն զի ձեզի վախ կ'ազդեն: Մենք կը ծիծաղինք մեր վրայ, ձեր վրայ, յաջող և ձախող պատահարներու վրայ: Դուք կաթսային փրփուրը կ'առնէք, լաւ արգանակը խորն է: Շատ աւելի բաներ կը տեսնայ շրջող փերեզակ մը իրեն գաւառը պտըտելու ժամանակ, քան թէ դուք աշխարհքս պտըտելու ժամանակ: Կը տրտնջաք որ բոլոր երկիրներն իրարու կը նմանին, և չէք անդրադառնար որ ամէն մարդիկ տարբեր են:

ԹՈՄԻ

Այո՛, հարստութեան ծաղրաբանութիւնը:

ՄԱՔՍԻՄՈՍ

Սակայն հարստութիւնը՝ հոն դուրսը նայէ: Հոն է, պատուհանէն դուրսը: Այն մարգագետիններն են, այն անտառները, այն լիճը և այն այգեստանները: Հարստութիւնը իրերուն է:

ԹՈՄԻ

Իայց հիմակուհիմա կը նեղուիս զանոնք ստանալու համար:

ՄԱՔՍԻՄՈՍ

Կը ջանամ ես իմ անձիս բաւական ըլլալու: Կենաց օրէնքն է ուրիշին ծախքովը չապրել: Ոչ ողջերուն, և ոչ մեռածներուն:

Դադար:

Ինչո՞ւ կ'երթաս այն սուենը: Նոյն այն անկեղծութեամբ որով կը հարցընեմ քեզի պատասխան տուր ինձի: Բռնի այլ ևս զքեզ բռնել չեմ ուզեր: Կը թողում զքեզ ազատ արձակ: Ինչո՞ւ կ'երթաս հոն: Միթէ սիրահարուած չե՞ս այն կնկանը:

ԹՈՄԻ

Ո՞վ գիտէ:

ՄԱՔՍԻՄՈՍ

Երեսիս ըսէ . . . անանց ծիծաղելու:

ԹՈՄԻ

Կ'երթամ հոն բաղդ փնտուելու: Այս է:

ՄԱՔՍԻՄՈՍ

Խաղի՛: Խաղի . . . որ . . . կը յայտնէ, դրամին անջատումը . . . Ինչպէս ըսիր քիչ մը առաջ: Ա՛հ, որ գերազանց մարգիկներու նշանն է:

ՃԻԱԳՈՋԱ. Ինչպէս տերեւները.

ԹՈՄԻ

Իմ վրայօքս չէի խօսեր :

ՄԱՔՍԻՄՈՍ

Կը հասկցուի :

ԹՈՄԻ

Եթէ դու կը կարծես որ ես ինքզինքս չեմ քամակեր :

ՄԱՔՍԻՄՈՍ

Իսկ ես :

ԹՈՄԻ

Բայց ես ինձմէ չեղայ, ինչ որ եմ :

ՄԱՔՍԻՄՈՍ

Կրնաս նորէն ինքզինքդ շտկել :

ԹՈՄԻ

Կամենալ չեմ կրնար :

ՄԱՔՍԻՄՈՍ

Կռթռնէ մէկու մը որ կամենայ քու տեղդ :

ԹՈՄԻ

Քեզի, օրինակի համար :

ՄԱՔՍԻՄՈՍ

Եւ իրօք ես կրնամ :

ԹՈՄԻ

Իրարու միտքը չենք հասկնար :

ՄԱՔՍԻՄՈՍ

Քու քրոջդ :

ԹՈՄԻ

Նէննէլէի՞ : Քու շատ համարում ունիս Նէննէլէի վրայ :

ՄԱՔՍԻՄՈՍ

Կարծեմ թէ այո՞ :

ԹՈՄԻ

Հետաքրքրաշարժ բան :

ՄԱՔՍԻՄՈՍ

Շատ համարում և շատ կարեկցութիւն :

ԹՈՄԻ

Կարեկցութիւն ինչո՞ւ համար :

ՄԱՔՍԻՄՈՍ

Վասն զի քու յարարերութիւններդ, յայտ-

նի է թէ իրեն օգտակար պիտի չըլլան: Եւ կրնան արգելք ըլլալ իրեն լաւ ամուսնու թեան մը:

ԹՈՍԻ

Ահ, ահ, ահ, շարժառիթը: Ես ալ այն կ'ուզէի ըսել, ա՛յնքան եռանդ իմ բարոյական փրկութեանս համար:

ՄԱՔՍԻՄՈՍ

Երբոր ես միտքս դրած ըլլայի քրոջդ հետ կարգուելու... եթէ դու վկայուած և նշանակուած ալ ըլլայիր իրբեւ աշխարհքիս ամենէն աւելի գարշելի անարգ արարածը, ես սակայն ինչ որ ալ ըլլար՝ քրոջդ հետ կը կարգուէի:

ԹՈՍԻ

Եթէ զքեզ ուզէր:

ՄԱՔՍԻՄՈՍ

Ո՛հ անշուշտ:

ԹՈՍԻ

Եւ եթէ չուզէր զքեզ: Է՞՛հ: Եթէ չուզէր: Ի՞նչ կերպարանքով կը ներկայանար հոն քու կամօք: Ըսէ: Եթէ չուզէր: Եւ զքեզ պիտի

չուզէ: Տարբեր ցեղէ մարդիկ ենք: Մնաս բարով:

ՄԱՔՍԻՄՈՍ անոր թեւը կը մտնայ, հեգնական:

Կ'ըսեն թէ Օւլտֆը երկրորդ էրիկ մը փնտուելու հետ է: Պէտք ես ներկայանալ:

ԹՈՍԻ

Տես: Գաղափար մըն է:

կը տեսնէ Նէննէլէի մտնալը:

Նէննէլէ:

## ՏԵՍԻԼ ՏԱՄՆԵՐՈՐԴ

ՆԵՆՆԵԼԷ և ՎԵՐՈՅԻԶԵԱՆԵՐԸ:

ՆԵՆՆԵԼԷ իրեն սենեկէն կու գայ:

ՄԱՔՍԻՄՈՍ

Արդիլէ եղբայրդ, որ կ'երթայ կորսուելու: Ես ինչ որ կըցայ ըրի:

ՆԵՆՆԵԼԷ

Ես ալ:

ԹՈՍԻ

Դ՞ու:

ՆԵՆՆԵԼԷ

Գացած տեղդ զիտեմ: Գեղեցիկ արդիւնք:  
Ամէն առաւօտ հոս վարէն կ'անցնի, իրեն  
մանկըւերիով: Չեմ դիտեր թէ ով է: Բայց  
եթէ չի համարձակեցար ինծի ըսելու թէ  
հրաւէրքը իրմէ կու գար, մեծ բան մը պէտք  
չէ ըլլայ: Զիս խոտորեցնելու համար, ստե-  
լու պէտքը զգացիր:

## ՏԵՍԻԼ ՏԱՄՆԸՄԷԿԵՐՈՐԴ

Վերոյիշեալները, ՅՈՒԼԻԱ և ՅՈՎՀԱՆՆԷՍ:

ՅՈՒԼԻԱ

Նէննէլէ, պատրաստէ ամենէն աղուոր ար-  
դուղարդդ: Այս իրիկուն զքեզ Ակումբին  
նուազահանդէսին կը տանիմ:

ՆԵՆՆԵԼԷ

Ե՛ս:

ԹՈՄԻ

Ի՞նչ:

ՅՈՒԼԻԱ

Միտքս եկած չէր: Մտածողը հայրդ եղաւ:

Ինծի վայելուչ չէր երեւնար առանձին եր-  
թայս: Թոմիին ընկերակցութիւնը բաւական  
չէ: Մինչդեռ ընդհակառակն օրիորդի մը  
պաշտպանութեան տակ... Եւ իրաւունք  
ունի:

ԹՈՄԻ

Նէննէլէ պիտի չերթայ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Ի՞նչ է ըսածդ:

ԹՈՄԻ

Ներուձն կը խնդրեմ, բայց դու չես ճանչ-  
նար....

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Ի՞նչ բան: Բացատրէ:

ԹՈՄԻ

Ընկերութիւն մը չէ այն....

ՅՈՒԼԻԱ

Յարգելի ընկերութիւն մը չէ՞:

Յովհաննէսի:

Մաքսին հարցուր որ տարիներէ ի վեր  
ժէնէ վը կը ճանչնայ:

ԹՈՄԻ

Ձըսի....

ՅՈՒԼԻԱ

Մաքսին հարցուր: Մաքսին հարցուր:  
Մաքսիմոսի:

Դու ըսէ:

ՄԱՔՍԻՄՈՍ

Ահ իրաւ: Մաքսը ես եմ: Երբեք չեմ յիշեր  
որ դու զիս այդ կերպով բանաստեղծական  
կ'ընես: Զուարթ և շատ յարգելի ընկերու-  
թիւն մըն է:

ՅՈՒԼԻԱ Յովհաննէսի:

Կը տեսնաս:

ԹՈՄԻ:

Իսկ դու....

ԹՈՄԻ

Ես Նէննէլէի վրայ կը խօսիմ:

ՆԵՆՆԵԼԷ

Իմ վրան միայն:

ԹՈՄԻ

Եւ ընկերութեան խնդիր չէ:

Յովհաննէսի:

Եթէ դու հրաման տուիր որ մայրս հոն  
մտնայ, նշան է....

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Հրաման չի տուի: Գործը ըլլալէն ետքը  
ինծի ըսաւ: Ըսաւ թէ ստակի ծախս չկայ,  
թէ հարկ էր որպէս զի կարենայ իր նկար-  
ները ծախել:

ԹՈՄԻ

Եւ իրօք, մայրս արուեստագէտ մըն է:  
Եռանդով ինքզինքը տուած է.... կ'արտա-  
դրէ....

ՆԵՆՆԵԼԷ

Դու այդպէս կը խօսիս:

ԹՈՄԻ

Եւ արուեստագէտներուն քով յաճախելը  
կրնայ իրեն նպաստել առաջ երթալու: Բայց  
Նէննէլէն:

ՆԵՆՆԵԼԷ

Եթէ մայրս կրնայ, կրնամ նաեւ ես ալ:



Թէ տարրերու թիւն կայ՝ չեմ տեսնար : Կամ  
գէշ բան է հոն երթալը և

Թոմիի :

իրեն համար ալ պիտի հակառակէիր դու . . . .  
կամ գէշ բան չէ, և հետը կ'ընկերեմ :

ՄԱՔՍԻՄՈՍ

Կը հաստատեմ : Կը հաստատեմ :

ԹՈՍԻ ՆԵՆՆԵՂԷԻ :

Շատ աղէկ գիտես . . . .

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Ի՞նչ գիտէ Նէննէլէն . . . . Ես ալ պէտք է  
գիտնամ : Լոռի թեամբ անցնիլները չեմ ըն-  
դունիր : Դուրս հանէ :

ԹՈՍԻ

Կ'ուզեմ ըսել որ մեր վիճակը . . . .

ՅՈՒԼԻԱ

Մեր վիճակը քեզի համար ալ կայ . . . . և  
դու կը յաճախես վայելչասէրներուն քով :  
Եւ ի՞նչ վայելչասէրներ :

ՅՈՎՀԱՆՆԵՍ ափշած :

Թոմի :

ՅՈՒԼԻԱ

Այսօր նախաճաշի չե՛րթար մի Օւլոֆի  
տիկնոջ :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Ո՛չ է :

ՅՈՒԼԻԱ

Է գեղանի . . . .

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Քեզի չեմ հարցներ :

Մաքսիմոսի և Թոմիի :

Այս Օւլոֆ տիկինը ո՛վ է :

Լոռի թիւն :

Չէք պատասխաներ . . . . ո՛չ մէկերնիդ : Տա-  
նը մէջ միայն ես եմ որ կ'անգիտանամ :

Նէննէլէ մեծ ուժեղնութեամբ :

Ո՛հ հայր : Պէտք է նայիս . . . . պէտք է  
նայիս . . . .

ՅՈՒԼԻԱ

Պատկառանքով խօսէ :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Ի՞նչ կ'ուզես որ տեսնամ իմ պատենէս :

Առաւօտունէ մինչեւ իրիկուն հոն եմ . . . . և  
դեռ . . . .

ՆԵՆՆԵԼԷ

Պէտք է անկէ դուրս ելլաս, պէտք է հրա-  
մայես: Չես տեսներ: Ամէն բան այս տանս  
մէջ կը քայքայուի:

ՅՈՒԼԻՍ

Բայց ի՞նչ է: Բայց ի՞նչ կը քայքայուի:  
Բայց ըսելու բա՞ն է:

ՅՈՎՀԱՆՆԵՅՍ

Լսէ:

ՅՈՒԼԻՍ

Հանդարտ կ'ապրէինք . . . . ես կ'աշխա-  
տիմ . . . . կը քայքայուի:

ՅՈՎՀԱՆՆԵՅՍ

Լսէ:

ԹՈՄՐ Մաքսիմոսի:

Գոհ ես է՛հ:

ՄԱՔՍԻՄՈՍ

Ո՛հ շատ:

ՆԵՆՆԵԼԷ

Հրամայել . . . . Հրամայել: Ի՞նչ փոյթ դրա-  
մը: Սպասուհի կ'ըլլամ եթէ հարկ է . . . .  
Բայց դու, բայց դու, քու ձեռքդ կ'ուզէ:  
Այս տեղ կ'ուզէ: Միլան կ'ուզէր:

ԹՈՄՐ

ՆԷՆՆԵԼԷ:

ՅՈՎՀԱՆՆԵՅՍ

Թող զինքը: Իրաւունք ունի: Մաքսիմոս,  
ինչ որ կ'ըսէի քեզի Միլան, կը յիշես: Աշ-  
խատանքի եզ մը և ոչ ուրիշ բան: Կործա-  
նեցի զիրենք . . . . և չի կրցայ զինել զիրենք  
կործանման դէմ:

ՆԵՆՆԵԼԷ

Հայր . . . .

ՅՈՒԼԻՍ Թոմի:

Ահա: Ահա . . . . շահածնիս:

ՅՈՎՀԱՆՆԵՅՍ

Մաքսիմոս, կ'ըսէի քեզի . . . . գէշ հայր  
մըն եմ . . . .

ՆԵՆՆԵԼԷ

Ոչ, ոչ, ոչ . . . .

## ՅՈՎՀԱՆՆԵՍ

Եւ դու պիտի ըլլայիր երեսիս զարնողը....

Նէննէկէ անոր փաթթուելով:

Ոչ, ոչ.... Ներէ ինծի: Ոչ, ներէ:

ԹՈՄԻ Մաքսիմոսի:

Այսօր կը տանիս զիս բարեկամիդ: Պաշտօնը կ'ընդունիմ:

ՅՈՒԼԻԱ ԹՈՄԻ և Մաքսիմոսի:

Այն աղջիկը մէկհատիկ է բաները խոշորցնելու:

ՅՈՎՀԱՆՆԵՍ զգուստիւրաբար Նէննէլէի:

Այո՛, սիրելիս.... այո՛, սիրելիս, զիս կը սիրես, գիտեմ.... պիտի փորձեմ.... կը տեսնաս.... թող զիս.... հիմա, թող զիս.... դեռ ուրիշ բան ալ կայ.... կ'ուզեմ.... գիտնալ.... ամէն բան.... պէտք է որ թոմին....

ՄԱՐՍԻՄՈՍ

Թովմաս.... ինչպէս կ'ըսէ կինդ, վայելչասէրներէն հրաժարեցաւ: Ետքը քեզի կը բացատրեմ: Գալով Ակումբին....

## ՅՈՒԼԻԱ

Բայց ո՞վ կը մտածէ այլ եւս Ակումբին: Ճիշդ, զուարճանալու փափագ ունիմ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Ինչո՞ւ չէր ուզեր թոմին որ Նէննէլէ....

ՄԱՐՍԻՄՈՍ

Իրաւունք ունէր.... երբոր ձեր ունեցած վիճակներնուդ վրայ կը խօսէր: Նէննէլէ դասեր կը փնտռէ և երբոր գիտնալու ըլլան թէ կը զրօսնու.... ալ զանոնք գտնալը դժուար կ'ըլլայ:

ՄԱՐԹԱ խորէն կ'երեւայ:

Նէննէկէ պատրաստ, Մարթային:

Պատրաստելո՞ւ կու գաս: Ես կը բաւեմ: Գնա:

Դարանէն անձեռոցներ կ'առնէ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ Մաքսիմոսի:

Այսօր երկայն բարակ քեզի հետ կը խօսինք:

ՄԱՐՍԻՄՈՍ

Երբոր ուզես:

ՅՈՎՀԱՆՆԵՍ Կ'ԵՐԹԱՅ ՄՈՂՅՈՂ նստելու  
պատուհանին քով:

ՄԱՔՍԻՄՈՍ ՆԷՆՆԵԼԷԻ:

Կրնամ օգնել քեզի:

ՆԷՆՆԵԼԷ

Եթէ կ'ուզես:

Կը պատրաստեն երկուքը մէկտեղ:

ՅՈՒԼԻԱ ԹՈՎԻԻ:

Հիմա պէտք է որ տոմսակ մը գրեմ:

ԹՈՄԻ

Ես ալ: Սակայն... ո՞վ կը տանի: Շուտ  
մը կարեւոր է:

ՅՈՒԼԻԱ

Ես կը մտածեմ:

Կ'ԵՐԹԱՅ իր սենեակը:

ԹՈՄԻ կը նստի ստուղին առջեւ զրեւու:

ՆԷՆՆԵԼԷ Մաքսիմոսի:

Վաղը դասերը նորէն կը սկսիմ:

ՄԱՔՍԻՄՈՍ

Քեզի կը հաւատամ:

ՆԷՆՆԵԼԷ

Իսկ ուրիշներուն:

ՄԱՔՍԻՄՈՍ

Շատ գեղեցիկ: Երբոր օգը շուտով մը կը  
շակուի....

Վարագոյրը կ'իզատայ:

**ՀԱՆԴԵՍ ԵՐՐՈՐԴ**

Նոյն երկրորդին տեսարանը :

**ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ**

ՅՈՒԼԻԱ, յեռայ ՆԵՆՆԵԼԷ :

ՅՈՒԼԻԱ, ՆԵՆՆԵԼԷԻ շրան վրայ :

ՆԵՆՆԵԼԷ :

ՁԱՅՆ ՆԵՆՆԵԼԷԻ

Մայր :

ՅՈՒԼԻԱ

Ստորիկին բանալին ինձի տուր :

ՆԵՆՆԵԼԷ կը մտնայ :

Ո՞ր ստորիկին :

ՅՈՒԼԻԱ կը ցուցնէ պատին կռթընածը:

Այն:

ՆԵՆՆԵԼԷ

Ի՞նչ ընելու համար:

ՅՈՒԼԻԱ

Ինձի տուր:

ՆԵՆՆԵԼԷ

Ներէ: Ի՞նչ ընելու:

ՅՈՒԼԻԱ

Ստակ առնելու համար:

ՆԵՆՆԵԼԷ

Վճարելու հաշիւ մը կայ: Հոս եմ:

ՅՈՒԼԻԱ

Հաշիւ մը չկայ: Ինձի համար: Քեզի՛ ըրա՜ծիս համար՝ պիտի տամ:

ՆԵՆՆԵԼԷ

Ոչ անտարակոյս: Ինչ որ կ'ուզես կրնաս հօրմէս խնդրել և իմ գիտնալիք բանս չէ: Սակայն անոնք տանը համար են, ինձի յանձնուած են և ասնը համար կը մնան:

ՅՈՒԼԻԱ

Հոս ներսը սանտիկինը դժւ ես:

ՆԵՆՆԵԼԷ

Ոչ: Եւ ճշդիւ ասոր համար չեմ կրնար տրամագրել ինչ որ ինձի չի պատկանիր:

ՅՈՒԼԻԱ

Եթէ քեզմէ Թոմին ուզելու ըլլար:

ՆԵՆՆԵԼԷ

Ութ օր առաջ է որ իրեն տուի:

ՅՈՒԼԻԱ

Ըսածս այդ է:

ՆԵՆՆԵԼԷ

Բայց թէ որ այսօր ըլլար այլ չէի տար: Ուրիշներուն տկարութիւնը յանդիմանեցի: Հիմա տկարը ես չեմ ուզեր ըլլալ:

ՅՈՒԼԻԱ

Միթէ կը կարծես որ նոյն խակ Թոմին ծաղրական չի՞ գտնար քու բռնած կերպերդ:

ՆԵՆՆԵԼԷ

Տեսայ որ համախոհ էք: Իրեն խորհրդակիցը եղած ես:

## ՅՈՒԼԻՍ

Խորհուրդ տալու քիչ բան կայ: Ապաշնորհ գործ մը յանձն առաւ և անոր կը զբաղի: Կը տարակուսին:

## ՆԵՆՏԵԼԷ

Ոչ: Չեմ հասկնար թէ ինչու կը զգուշանայ ինձի հետ զանուելու: Կարծես թէ ինձմէ բան մը կը ծածկէ: Եթէ կ'աշխատի, իր պարտքը կ'ընէ: Համոզուած եմ որ հոս ամէն մարդ պէտք է խստիւ կատարէ ինչ որ իրեն կ'իյնայ:

## ՅՈՒԼԻՍ

Եւ քեզի կ'իյնայ ինձի դաստիարակուհիի պաշտօն կատարել էհ: Ութ օրէ ի վեր է քզանցէս չես գատուիր: Այդպէս պատուիրեց մեր ամենուս տէրը, պարոն Մաքս:

## ՆԵՆՏԵԼԷ

Ուրիշ ըսելիք ունիս ինձի:

## ՅՈՒԼԻՍ

Ունիմ ըսելու որ եթէ պարոն Մաքսը քեզի համար ամէն կատարելութիւններու օրինակն է, պէտք է իր հետը ամուսնանալ և երկդիմութիւններու վերջ տալ:

## ՆԵՆՏԵԼԷ

Եւ ասկէ զատ ուրիշ չունիս: Հայրս ահա վեր ելլալու վրայ է: Միտքդ իրեն հասկցուր: Կը մտնայ սենեակը:

## ՅՈՒԼԻՍ

Լիրբ:

## ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

ՅՈՎՀԱՏՆԵՍ և ՅՈՒԼԻՍ:

ՅՈՎՀԱՏՆԵՍ ձեռքը ծըրարով մը:

Քեզի համար բերի այս բանը:

## ՅՈՒԼԻՍ

Ի՞նչ է:

ՅՈՎՀԱՏՆԵՍ

Չեմ գիտեր:

## ՅՈՒԼԻՍ

Ահ իմ ուրուանկարներու մնացորդը պիտի ըլլայ: Անոնք որ չի ծախուեցան:

ՅՈՎՀԱՏՆԵՍ

Ծախեցի՞ր ասոնցմէ:

Առաստը փրցնելու կ'ըլլայ:

ՅՈՒԼԻԱ կը խնայ խրոխտ կերպով:

Ի՛նչ հարցում: Ակումբին մէջ գնուելիք պատկերներուն ցուցակին մէջն էի: Այդպէս մի քաշեր կ'աւրես:

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Տուր ինծի մկրատը:

ՅՈՒԼԻԱ

Եւ հանգոյցը քակէ: Առասանը կրնայ գործածուիլ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Ի՛նչ խնայող տանտիկին:

Քակելու կ'ըսայ:

ՅՈՒԼԻԱ

Նէննէլէն է միայն որ զիտէ խնայողութիւն ընել:

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Ոհ: Գրողը տանի ագահութիւնը:

Կ'առնէ ստոյիկին վրայն մկրատը և կը կտրէ: Քանի՞ հատ էին:

ՅՈՒԼԻԱ

Տասուերկուք:

ՅՈՎՀԱՆՆԷՍ կը համրէ:

Երեք, վեց, ինը... || մէնքն ալ հոս են:

ՅՈՒԼԻԱ

Անկարելի բան է:

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Համրէ:

ՅՈՒԼԻԱ

Սխալ մը եղած պիտի ըլլայ: Յուցակին մէջն էի: Հելմէր ինծի ըսաւ: Վերստին զըրկեն առնեն պիտի: Կը տեսնաս:

Ուրուանկարները դարանին վրայ կը դնէ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Եթէ կը կարծես թէ զիս վշտացնէ:

ՅՈՒԼԻԱ

Ահա անյաջողութեան մը առաջին երեւոյթին՝ այլ ևս վրաս հաւատք չունիս:

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Սակայն բնաւ ունեցած չեմ: Եւ շնորհակալ կ'ըլլամ Աստուծոյ որ արուեստագետ մը չես:

ՅՈՒԼԻԱ

Ոհ այդպէս է: Այն տտեն զիտցած ըլլաս որ պէտք է ձեռք առնեմ դարձեալ իմ իրա-



ուռնքներս: Քու կինդ եմ: Տանը վարչու-  
թիւնը ինծի կը պատկանի:

ՅՈՎՀԱՆՆԵՒՍ

Գարձեալ առնել: Միլան՝ մեծ բաներու  
համար մատակարարը Անդրէասն էր՝ որ հա-  
շինները ինծի հետ կ'ընէր, և պատիկներու  
համար Լուսիան էր՝ որ Նէննէլէէն կախումն  
ուռնէր:

ՅՈՒԼԻՍ

Վասն զի օրիորդ մը պէտք է սորվի....

ՅՈՎՀԱՆՆԵՒՍ

Հրամեր ես: Եւ սորվեցաւ:

ՅՈՒԼԻՍ

Ուրեմն ենթարկուած պիտի ըլլամ Նէն-  
նէլէի:

ՅՈՎՀԱՆՆԵՒՍ

Մէկու մըն ալ ենթարկուած չես: Ես են-  
թարկուած եմ:

ՅՈՒԼԻՍ

Եթէ սկահակ մը սուրճի պէտք ունենամ,  
Նէննէլէէն հրաման պիտի խնդրեմ:

ՅՈՎՀԱՆՆԵՒՍ

Մարթային ըսէ: Մինչեւ հիմա հրաման  
ինչորեցի՞ր:

ՅՈՒԼԻՍ

Ինչուան որ կը կարծէի և կրնայի կարծել  
զիս օգտակար ուրիշ ճամբաներով, զոհ էի:  
Ինծի ինկած բաժինը կու տայի: Չէ՞:

ՅՈՎՀԱՆՆԵՒՍ

Այո՛ այո՛:

ՅՈՒԼԻՍ

Այլ եթէ ուրիշ բանի չեմ ծառայեր, տնա-  
րարութիւն կ'ընեմ, ինչպէս կ'ըսես:

ՅՈՎՀԱՆՆԵՒՍ

Ո՛վ կ'արգիլէ զքեզ որ նկարես:

ՅՈՒԼԻՍ

Հաւատք կ'ուզէ: Կ'ուրախանան եթէ չեն  
զներ ուրուանկարներս: Շատ լաւ: Այն ա-  
տեն, հոս արկղը, հոս հաշուեգիրքը, կապոյտ  
զոգնոց մը և marche:

ՅՈՎՀԱՆՆԵՒՍ

Տէր ողորմես: Նոր նեղութիւններ մի տաք  
ինծի:

ՅՈՒԼԻՍ

Քու կի՞նդ եմ: Տանտիրուհի՞ն եմ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Իսկ ես.... Ի՞նչ եմ:

ՅՈՒԼԻՍ

Պատճառ մը չէ՞ բնութեան կարգը վերվար  
ընելու համար: Կը տեսնաս Նէննէլէն ինչ  
կ'ընեմ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Մէկդի թող Նէննէլէն, ազնիւս, մէկդի  
թող:

ՅՈՒԼԻՍ

Հարկաւ: Որովհետեւ կը վախցնէ զքեզ,  
որովհետեւ ձայնը կը բարձրացնէ: Բայց ես  
ալ ձայն մը ունիմ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Ո՛հ գիտեմ թէ ունիս:

ՅՈՒԼԻՍ

Եւ պիտի լսէ օրիորդիկը:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Ինծի նայէ: Արդէն գլուխս վրաս չէ: Յոգ-

նած եմ, յոգնած, յոգնած: Հիւանդանամ  
պիտի եթէ ինծի ուրիշ նեղութիւններ տաք:  
Դու չես գիտեր, ոչ ոք գիտէ թէ երեք ամսէ  
հետէ ինչ կեանք կը վարեմ: Ոչ ոք: Ա՛ն վար-  
չութիւնը, հաշիւները, գրամը, բայց, կ'ա-  
ղաչեմ, տանը մէջ տհաճութիւններ չըլլան:

ՅՈՒԼԻՍ

Ո՛հ եթէ պայմանը այդ է: Դու կ'ըսես  
Նէննէլէի:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Այո՛: Ես կ'ըսեմ:

ՅՈՒԼԻՍ

Շուտ մը:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Ողորմած Աստուածը կրնար ներշնչել մէ-  
կուն գնելու այն քու....

ՅՈՒԼԻՍ կը կանչէ:

Նէննէլէ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Հիմակ:

ՅՈՒԼԻՍ

Պէտք է երկաթը ձեռքի քանի որ տաք է:

Պիտի անսնատ թէ ինչ կարգ կանոն կը դնեմ  
հոս ներսը: Եւ առանց կծծի ըլլալու:

### Տ Ե Ս Ի Լ Ե Ր Ր Ո Ր Գ

Վերայիշեալները և ՆԵՆՆԵԼԵ:

ՆԵՆՆԵԼԵ

Կանչեցիր: Մարտիրոս եկա՞ւ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Դեռ չէ:

ՆԵՆՆԵԼԵ

Կառախումբը իննին կը հասնի: Տասնը-  
մէկ է:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Ո՛հ երէկուան և այս առաւօտուան փոթո-  
րիկով: Գուցէ լեռան վրայ ձիւնած ըլլայ:  
Կորսնցուցած պիտի ըլլայ կառախումբը:

ՆԵՆՆԵԼԵ

Կը հեռագրէր:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Կամ իրեն գործերուն համար քաղքին  
մէջ բռնուած պիտի ըլլայ:

ՆԵՆՆԵԼԵ

Ոչ, նախ հոս կու գայ:

ՅՈՒԼԻՍ

Հայրդ կ'ուզէր ըսել քեզի....

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Թող ինծի:

Մէկքի կ'առե ՆԵՆՆԵԼԵ:

Նէննէլէ, մայրդ կը փափագի ասկէ ետքը  
ինքը ընելու տանը վարչութիւնը:

ՆԵՆՆԵԼԵ

Եւ դու իրեն կու տամ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Օրինաւոր փափագ մըն է:

ՆԵՆՆԵԼԵ

Իրաւ է: Շուտ մը ընելիք բան է: Ահա-  
ւասիկ հոս:

Կ'երթայ դէպ ի ստուիկը  
արհղիկը բանալու համար:

ՅՈՎՀԱՆՆԵՍ կ'երթայ իրեն մօտ, կամացուկ:  
Չի դժկամակիս:

ՆԵՆՆԵԼԵ

Ոչ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ Ի՝ Վ.

Խաղաղութեան համար :

ՆԵՆՆԵԼԷ

Այո՛ :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Ժպտէ երեսիս, սիրելիս, ժպտէ :

ՆԵՆՆԵԼԷ

Ի՞նչպէս բարի ես :

ՅՈՎՀԱՆՆԵՍ Ի՝ Վ.

Եւ... ուշ գիր նորէն :

ՆԵՆՆԵԼԷ

Մի վախնար :

Յուշայի :

Հոս կայ վաթսուներեք ֆրանք և երեսուն հարիւրեակ : Հոս ծախքերու գիրքը, և ասոնք մատակարարողներուն գրքոյկներն են :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Կ'իմացնեմ ձեզի որ կիրակի օր երկուք-նիդ ալ Շամունի կը տանիմ :

ՅՈՒԼԻԱ

Ժամանակն էր :

ՆԵՆՆԵԼԷ

Ի՞նչ ընելու համար :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Մաքսիմոսի հետ որոշուած բան է : Մաքսիմոս կիրակի օր իր երկաթուղիի առաջին գծին բացման հանդէսը կը կատարէ : Յոգնած եմ : Երկու օրուան զով ողը ինծի աղէկ կ'ընէ : Պէտք ունիմ անոր :

ՆԵՆՆԵԼԷ

Դու : Իսկ մե՞նք :

ՅՈՒԼԻԱ

Սագի ձագերը կը տանին իրենց մայրերը չուր խմելու :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Ես ինքս մինակ չեմ գուարճանար :

ՆԵՆՆԵԼԷ :

Ծախքին համար մտմտուք մի ունենար :

ՆԵՆՆԵԼԷ

Ա՛յնչափներ կ'երթան որ :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Կծծի : Այս մտողին վրայ վստահացիր :

ՃԻԱԳՈՋԱ. ԴՈՂՎԷՍ ՄԵՐԵԼՈՅԵՐԸ .

Ըսածս գիտեմ: Երբոր Մաքսիմոսը գայ՝ զրկէ  
զինքը վարը աշխատանոցս:

Կը սկսի երթալ:

ՆԵՆՆԵԼԷ

Լաւ:

Յովհաննէս կ'երթայ:

ՏԵՍԻԼ ԶՈՐՐՈՐԴ

ՆԵՆՆԵԼԷ և ՅՈՒԼԻՍ:

ՆԵՆՆԵԼԷ

Պիտի մոռնայի: Ատիկայ գլորոցին բանալին  
է: Լաւ է որ գոց պահես:

ՅՈՒԼԻՍ

Ի՞նչ ըսել կ'ուզես:

ՆԵՆՆԵԼԷ

Անցեալ շարաթ պակսեցաւ ինծմէ երեսուն  
Փրանգ: Երեք օր առաջ անդրադարձայ որ  
այլ ևս չունիմ այն ոսկիէ հիւսուածիկը որ ին-  
ծի իրենէ հօրաքոյրս ընծայեր էր: Միլանէն  
ապահովապէս բերի զանիկայ: Բայց հոս ըլ-  
լալնէս հտըք՝ ալ ինծի պէտք չէր եղած գործա-

ծելու զայն: Ով գիտէ որչափ ատեն է որ  
անհետացեր է: Երէկ չէ մէկալ օր կարգի  
դրեր էի քոմոյին դարակը, և, անդրադառ-  
նալու համար թէ արդեօք մէկը կը դպչի,  
ամէն բանին տեղը լաւ նշանակեր էի: Եւ  
երէկ տեսայ որ պակսած էր լուսանկարներու  
այն արծթէ շրջանակը: Կը յիշես:

ՅՈՒԼԻՍ

Կարծեմ, այո՛: Տձեւ բան մը: Ես չէի  
հաւնած:

ՆԵՆՆԵԼԷ

Անով հանդերձ...

ՅՈՒԼԻՍ

Այն ածանկեկ ծառաներով:

ՆԵՆՆԵԼԷ

Մարթան հաւատարիմ է:

ՅՈՒԼԻՍ

Շատ բաներ նոյն վայրկենին չեն գտնուիր  
և յետոյ դուրս կ'ելլան:

ՆԵՆՆԵԼԷ

Երէկ չէ մէկալ օր դրի իրեն տեղը:  
Թեթեւակի հեղնական:  
Քեզի բնաւ բան մը պակսած չէ՛:

ՅՈՒԼԻՍ

Ինչէ՞ն կը ժպտիս :

ՆԵՆՆԵԼԷ

Կը հարցնեմ որ երբեք անդրադարձեր  
ես . . . .

ՅՈՒԼԻՍ

Ո՛հ ով գիտէ որչափ բաներ : Բայց ես կը  
վստահիմ ամէն բանի և ամենուն : Չիս տղայ  
մը անդամ կրնայ խարել :

ՆԵՆՆԵԼԷ

Իրաւ :

## ՏԵՍԻԼ ՀԻՆՓԵՐՈՐԴ

Վերոյիշեալները, ՅՈՎՀԱՆՆԵՍ, ՀԵԼՄԵՐ ՍՊՐԻԼ :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Յուրիս : Նայէ, հոս պարոն մը կայ որ  
զքեզ կը հարցնէ :

ՅՈՒԼԻՍ փութալից :

Հելմէր :

ՀԵԼՄԵՐ

Ներողութիւն կը խնդրեմ անյարմար ժա-  
մուն համար :

Յուլիայի՛ ակնարկելով Յովհաննէսը :

Պարոն Ռոզանի՛ : Պատիւ կ'ընէք ինձի :

ՅՈՒԼԻՍ

Ի՞նչպէս : Չես . . . . Ո՛հ. Յովհաննէս : —  
Հելմէր Սպրիլ, մեծ վարպետ մը :

ՀԵԼՄԵՐ

Պատիւ է ինձի :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Շնորհակալ եմ :

ՅՈՒԼԻՍ ՆԵՆՆԵԼԷԷ :

Հելմէր Սպրիլ :

Հելմէրի :

Ամուսինիս աղջիկը : Գիտէ՞ք թէ բոլոր ու-  
րուանկարներս ինձի ես ղրկեցին :

ՀԵԼՄԵՐ

Ճիշտ ազոր համար կու գամ : Ո՛ր են :

ՅՈՒԼԻՍ

Ահաւասիկ :

Կը տանի Հելմէրը դարանին մօտ :

ՅՈՎՀԱՆՆԵՍ կամացուկ Նէննէլէի:

Վարպետ Թնչ բանի:

Նէննէլէի ի. Վ.

Նկարիչ մըն է: Իրարու մէջ մէկզմէկ վարպետ կ'անուանեն:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Արդէն ուրիշ անգամ եկած է:

Նէննէլէի

Տունը երբեք:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Կը հաւնիս դու:

Նէննէլէի

Ոչ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Ես ալ չէ....

Ներեցէք: Ես վար պիտի իջնամ:

Հեմերի:

ՀԵԼՄԵՐ

Կ'աղաչեմ, կ'աղաչեմ:

Կ'երթայ Յովաննէս:

## ՏԵՍԻԼ ՎԵՅԵՐՈՐԻ

ՅՈՒԼԻԱ, ՀԵԼՄԵՐ և ՆԵՆՆԵԼԷի:

Նէննէլէի ստուղիկին վրայէն գէրք մը կ'առնէ և կ'երթայ կը նստի պատուհանին անկիւնը:

ՀԵԼՄԵՐ

Ակումբին ցուցակին մէջ յիշատակուած պիտի ըլլային: Բայց ժընէվական ժողովակը չուզեց ճանչնալ: Կը դովին, բայց կ'ըսեն թէ դուք միայն երեք ամսէ ի վեր հոս էք և թէ կրնաք սպասել:

ՅՈՒԼԻԱ

Սպասել: Ես արուեստը պիտի ձգեմ:

ՀԵԼՄԵՐ

Սրբապիղծ բաներ մի ըսէք: Արուեստը չի ձգուիր: Արեան մէջ է: Բաղդովի, մէկ բարեկամս զանոնք տեսաւ, սիրազարուեցաւ և ինծի յանձնեց որ գնեմ:

ՅՈՒԼԻԱ

Բողո՞րն ալ:

ՀԵԼՄԵՐ

Հիմակուհիմայ մէկ.... կամ երկուք: Եր-

կուք, երկուք: Ակումբին քարտուղարին հետ  
պայմաններուն վրայ պիտի խօսիմ: Այս բա-  
ներուս վրայ մեր մէջը չի կրնար խօսուիլ:

ՅՈՒԼԻԱ

Լսեցիր, Նէննէլէ:

ՆԵՆՆԵԼԷ

Կարծեմ: Այո՛:

ՅՈՒԼԻԱ

Երկու ուրուանկար ծախեցի: Կ'ախորժիմ  
որ դու գիտնաս:

ՆԵՆՆԵԼԷ

Ո՞վ գնեց զանոնք:

Հելտեր թեթեւ շուարուսով:

Իմ մէկ հայրենակիցս: Արուեստի մեծ սի-  
րող մը:

ՆԵՆՆԵԼԷ

Ա՛հ: Ա՛հ:

Հելտեր կամացուկ Յուլիայի:

Այլ ևս չէք տեսնուիր: Երկու առաւօտ հոս  
վարը եկայ:

ՅՈՒԼԻԱ Ի. Վ.

Ինքը եղաւ:

ՆԵՆՆԵԼԷ:

Ինձի հաճոյք մը ընէիր, Նէննէլէ, վար  
իջնալու, ուր որ կը պահեմ նկարչութեան  
գործիքներս, և գոյներու մեծ դարանին մէ-  
ջէն առնէիր ինձի այն տախտակիկը որ հա-  
զիւ ուրուագծուած պիտի գտնաս: Զգուշա-  
ցիր թաց է:

ՀԵԼՄԵՐ

Եթէ կարենայի ես:

ՆԵՆՆԵԼԷ կ'ելլայ առանց խօսք ըսելու:

## ՏԵՍԻԼ ԵՍԹԵՐՈՐԴ

ՅՈՒԼԻԱ և ՀԵԼՄԵՐ:

ՅՈՒԼԻԱ

Չեզի փոքրիկ յիշատակ մը ունիմ: Սպա-  
սեցէք:

Կը վազէ իր սենեակը:

Հելտեր կը նայի ուրուանկարներուն:

Հարիւր ֆրանքով:



ՅՈՒԼԻԱ կը դառնայ կենդանագիրով մը, ձեռն  
cabinet, արժթէ շրջանակի մը մէջ, ազնիւ  
թղթով փաթթուած, կու տայ զայն Հելմէրի:  
Վարպետին և բարեկամին:

## ՀԵԼՄԷՐ

Ձեր կենդանագիրը: Ի՛նչպէս աղուոր է:  
Ի՛նչպէս աղուոր էք: Եւ ի՛նչ ընտիր շրջանակ:  
Ի՛նչպէս աղէկ կը շրջանակէ զձեզ արծաթին  
ցուրտ սպիտակութիւնը: Սիրուն բան մը:  
Շնորհակալ եմ:

Ձեռքերը կը հարուրէ:

## ՅՈՒԼԻԱ

Շուտ մը թուղթի մէջ փաթթեցէք և մէկ  
կողմ գրէք.... շուտ որ ինքը չի տեսնայ:

Կը փաթթէ պատկերը ազնիւ թուղթի  
մէջ: Հելմէր գրպանը կը դնէ զայն:

Ութ օրէ ի վեր միշտ ինծի հետ գուրբ  
կ'ելլայ, հետս կ'ընկերէ ամէն տեղ: Միւս  
առաւօտ զձեզ տեսայ, կ'ուզէի իջնալ,  
բայց.... ինքն ալ կու գար: Կեանք մը որ:

## ՀԵԼՄԷՐ

Վարժուեցայ ձեզի հետ աշխատելու: Եթէ  
զձեզ չի տեսնամ, տիեզերքը կ'անհետանայ,  
իրերը այլ ևս ոչ ձայն ոչ գոյն ունին և ինծի  
ալ բան մը չեն հաղորդեր:

## ՅՈՒԼԻԱ

Ի՞նչ ընենք:

## ՀԵԼՄԷՐ

Գտեր էի այնպիսի գեղեցիկ տեղ մը: Լճին  
միւս ափունքը: Հողեյոյզ և շքեղ թագստոց  
մը:

## ՅՈՒԼԻԱ

Վրան մի խօսիք:

## ՀԵԼՄԷՐ

Կարելի՞ բան է որ չի յաջողիք վայրկեան  
մը ազատ ըլլալու: Կ'ուզէի որ տեսնայիք  
զայն:

## ՅՈՒԼԻԱ

Ո՛ւր է:

## ՀԵԼՄԷՐ

Ահ, ոչ: Ես զձեզ հոն կ'ուզեմ տանիլ:

## ՅՈՒԼԻԱ

Անկարելի է ձեզի հետ:

## ՀԵԼՄԷՐ

Իմ ամէն խաղաղութիւնս ինծմէ առիք:

ՅՈՒԼԻԱ

Պէտք չէ ականջ դնեմ այդ խօսքերուն :  
Հեռու է :

ՀԵԼՄԵՐ

Ոչ : Կու գայ նաեւ ծեր ընկերս : Յոյս կու  
տաք :

ՅՈՒԼԻԱ

Կը բաղձայի : Աւելին մի խնդրէք : Ազատ  
չեմ :

ՀԵԼՄԵՐ

Բայց ընաւ դուրս չե՞րթար օրիորդը :

ՅՈՒԼԻԱ

Շարաթը երկու անգամ քաղաքին մէջ  
դաս ունի :

ՀԵԼՄԵՐ

Ե՞րբ : Վաղը :

ՅՈՒԼԻԱ

Վաղը ունի :

ՀԵԼՄԵՐ

Ակումբը կը սպասեմ ձեզի : Ո՞ր ժամուն :

ՅՈՒԼԻԱ

Ոչ, ոչ, վաղը չեմ ուզեր :  
Հելմեր

Ինչո՞ւ :

ՅՈՒԼԻԱ

Ուրբաթ օր է : Երբեք :

ՀԵԼՄԵՐ

Շարաթ օր :

ՅՈՒԼԻԱ

Դաս չունի :

ՀԵԼՄԵՐ

Կիրակի :

ՅՈՒԼԻԱ

Կիրակի : Կիրակի թերեւս կարենամ ....  
Հոս է որ կու գայ : Բարձր խօսէ :

ՀԵԼՄԵՐ

Իրապաշտները չեն ուզեր հասկնալ որ  
խորհրդական պատկերը ....

## ՏԵՍԻԼ ՈՒԹԵՐՈՐԴ

ՆԵՆՆԵԼԵ և վերայիշեալները:

ՆԵՆՆԵԼԵ կը մտնայ առանց խօսելու և կ'երթայ կը նստի ուր որ էր առաջ:

ՅՈՒԼԻԱ

Ի՞նչ ըրիր:

ՆԵՆՆԵԼԵ

Տախտակիկ մըն ալ չկար, ոչ ուրուագծուած, ոչ ուրուագծելի:

ՅՈՒԼԻԱ

Ձի դտար: Պզտիկ դարակին մէջ:

ՆԵՆՆԵԼԵ

Ինծի ըսած էիր մեծին, բայց պզտիկին մէջն ալ նայեցայ:

ՅՈՒԼԻԱ

Տարօրինակ է... վասն զի:

ՆԵՆՆԵԼԵ

Ո՛հ, մայր:

ՀԵԼՄԵՐ

Կրնամ տանիլ ուղղակի այս ուրուանկարներս:

ՅՈՒԼԻԱ

Ինչպէս կ'ուզէք: Թուղթի մէջ փաթթեմ զանոնք:

Կ'առնէ երկու ուրուանկարներ:

Այս երկուքը:

ՀԵԼՄԵՐ

Ամէնքն ալ աղուոր են: Դուք ընտրեցէք:

## ՏԵՍԻԼ ԻՆՆԵՐՈՐԴ

ՄԱՔՍԻՄՈՍ և վերայիշեալները:

ՄԱՔՍԻՄՈՍ

Շատ ուշ մնաց:

ՅՈՒԼԻԱ

Օ Մաքս:

ՄԱՔՍԻՄՈՍ

Բարի լոյս, հորաքոյր:

ՆԵՆՆԵԼԵ:

Ի՞նչպէս ես:

ՆԵՆՆԵԼԵ

Քեզի կը սպասէի:

## ՄԱՔՍԻՄՈՍ

Հազար արկածներ:

Կը տեսնայ Յուզիան ձեռքը  
երկու ուրուանկարներով:

Քու նկարներդ են անոնք:

ՅՈՒԼԻԱ

Պիտի չի հաւնիս:

ՄԱՔՍԻՄՈՍ

Յուշուր: Կը հաւնիմ:

ՅՈՒԼԻԱ

Իրաւ:

ՄԱՔՍԻՄՈՍ

Իրաւցնէ կը հաւնիմ: Չեմ գիտեր թէ դու  
իրրեւ դովեստ պէտք է առնես:

ՀԵԼՄԵՐ

Արուեստը կը զգացուի, չի պատճառա-  
բանուիր:

ՄԱՔՍԻՄՈՍ

Ներեցէք, պարոն, ես կը պատճառաբա-  
նեմ: Ինծի հաճելի է նկարչութիւնը որ չեմ  
հասկնար և ինծի հաճելի է վասն զի չեմ  
հասկնար:

ՀԵԼՄԵՐ

Քաղտնիքին թափանցողութիւնը:

## ՄԱՔՍԻՄՈՍ

Ե՛հ:

ՀԵԼՄԵՐ

Կ'ըսեմ՝ գաղտնիքին թափանցողութիւնը:

## ՄԱՔՍԻՄՈՍ

Ահաւասիկ: Չեր ըսածը եթէ նկարչու-  
թեան մէջ ըլլար, հաւնէի պիտի: Յստակա-  
խօս պատկերները՝ միշտ անոնք են: Ա-  
նոնք կը հրամայեն: Անտառ մըն է: Մար-  
գազետին մըն է: Եւ ես միշտ տրամադիր  
չեմ ախորժեղու անառէ մը և մարգազե-  
տինէ մը: Ընդհակառակն ասոնց մէջ, ինչ  
որ կ'ուզեմ կը տեսնամ, նոյն վայրկեանուան  
քմահաճոյքին համեմատ: Ես կը հրամայեմ:

ՆԵՆՆԵԼԷ

Կեցցես Մաքսիմոս: Լաւազոյն նկարները  
պատերուն վրայի աղտերն են:

ՀԵԼՄԵՐ

Ո՛հ:

## ՄԱՔՍԻՄՈՍ

Իրաւ է, իրաւ է: Առաւօտը արթննալուս  
ձեռքով. յմշպէս տերեւները.

անոնց կը նայիմ և կը տեսնեմ ամպեր, ուղ-  
տեր, քարայրներ, ինքնակալ մը, անուշեղէն  
մը....

ՅՈՒԼԻԱ արհամարհական :

Խնայողական արուեստ :

Ստուլին վրայ թերթ մը թուղթ կը տարածէ :

ՀԵԼՄԻՐ

Վայրկեան մը :

Կենդանագիրը կը հանէ գրպանէն :

Կը դնեմ նաեւ....

ՅՈՒԼԻԱ կամայ մը :

Ձգուչացէք :

Հիմեր ծրարը կը շինէ :

ՄԱՔՍԻՄՈՍ

Կը կարծէի թէ չհասնիմ : Հոս ալ գարշե-  
լի օդ մը շըբամ :

ՆԵՆՆԵԼԷ

Այո :

ՅՈՒԼԻԱ ստուլին դիմաց Հելմերը ծածկելու  
համար :

Երէկ և այս գիշեր :

ՄԱՔՍԻՄՈՍ

Ո՛հ, հոն վերը : Աղէտներ : Աւիէն յորդած,  
երկու կամուրջ կործանած, տուններ փլած,  
երեք անձեր հոսանքին մէջ թաւալած....

ՆԵՆՆԵԼԷ

Մեռած :

ՄԱՔՍԻՄՈՍ

Ո՛հ : Ո՛վ որ կ'իյնայ : Կէս վայրկեանի մէջ :  
Խղդուելու ժամանակ անգամ չի մնար : Ժայ-  
ռէ ժայռ և կոճղէ կոճղ զարնուած....

ՅՈՒԼԻԱ Հելմերի որ ծրարը շինեց :

Ինծի : Բռնեցէք : Կը կապեմ ես :

ՆԵՆՆԵԼԷ

Երբոր կիրակի օր Շամունի կ'ելանք՝ կը  
աեսնենք հեաքերը :

ՄԱՔՍԻՄՈՍ

Ահ, գալ՞ու էք ուրեմն :

ՅՈՒԼԻԱ

Իմ կողմանէս մտածեցի որ չի գամ :

Կը սկսի կապել ծրարը զոր  
Հելմեր ձեռքը կը բռնէ :

ՆԵՆՆԵԼԷ

Ի՞նչպէս: Դու էիր որ կը պնդէիր:

ՅՈՒԼԻՍ

Առաջին վայրկենին առաքինութիւն ծախելը ինծի ախորժելի չէ: Կ'անդրադառնամ և յետոյ որն է լաւը այն կ'ընեմ:

ՆԵՆՆԵԼԷ

Անշուշտ:

Ծրարէն կենդանադիրը կը սահի կ'իջայ:

ՄԱՔՍԻՄՈՍ ՀԷԼՎԵՐԷ:

Նայէ:

Վեր կը վերսեւէ դայն:

ՅՈՒԼԻՍ ձեռքէն կը լաւէ:

ՆԵՆՆԵԼԷ տեսաւ և ծիծաղ մը կը փրցնէ:

ՄԱՔՍԻՄՈՍ ՆԷՆՆԵԼԷԷ:

Ի՞նչ կայ:

ՆԵՆՆԵԼԷ ծիծաղելով:

Ոչինչ:

ՅՈՒԼԻՍ Թուղթի մէջ կը փաթթէ և կը կապէ արտորնօք:

Սանկ: Ասկէ վերջը ալ չի փախչիր:

ՀԷԼՎԵՐԷ:

Չեղի: Մինչև պարտէզին մուտքը հետերնիդ կ'ընկերեմ:

ՀԵԼՎԵՐ

Շնորհակալեմ: Օրիորդ: Պարոն:

Կ'երթան Հիմեր և Յուլիա:

### ՏԵՍԻԼ ՏԱՄՆԵՐՈՐԷ

ՄԱՔՍԻՄՈՍ, ՆԵՆՆԵԼԷ, յետոյ ՅՈՒԼԻՍ:

ՄԱՔՍԻՄՈՍ

Կը բացատրեն ինծի:

ՆԵՆՆԵԼԷ

Չզուանք կ'ազդէ ինծի, զզուանք, զզուանք: Այն գեղեցիկ պարոնիկին, որ իրեն շորս կողմը կը քծնի, զնել տուաւ երկու մրտտ կտաններ: Հասկցաւ որ գնողը նա էր... նոյն խոկ ինքը ինքզինքը մատնելու փափագէն կը մեռնէր: Վարժարանի աշակերտի պատճառանքով մը զիս դուրս ղրկեցին: Չեմ գիտեր թէ ինչ մերենայեցին, սակայն ինքը, ինքը որ առաջ խենթ էր երթալու կիրակի օր Շամունի և տեսակ մը գիտողութիւններու համար զիս կտցեր էր, յետոյ... իմացար... խոհեմութիւնը: Ա՛հ, Ի՞նչ ցած հոգի: Եւ ես շարաթ մը անցուցի պաշապան շան

։ մզտօվե յդճ

ԳՂԳՆԳՂ

։ Լոկ մր մաս մսՂ ։ ԴՄ

ՈՍՈԿՈՅՈՂ

։ մզտօվե ոգն մր ուտմ Լոմի ղվկրսժ յդ  
քորտմտ ղնտկտո ԻՂ ։ մտղիտույ ոգն ոժտվՂ

ԳՂԳՆԳՂ

։ Լոժժն ղրվթրատմտնչ

ՈՍՈԿՈՅՈՂ

։ Ետրսղ վրդրտ ոչքտքմտկ

ԳՂԳՆԳՂ

։ Ժօղեմտ ոգ տքջղտոլտՂ

ՈՍՈԿՈՅՈՂ

․․․ յվղտույ մի

մսժմզ ոչքն մի ։ ղվնկտոժ մի ճչր Եմտմվ  
։ ղվտոտր մի ԵգտիչՂ ։ ղտղիտույ մի մժտվր  
Եմտմվ ։ մրնեկ ուտր Ետնղտ ԻՂ ։ ոժնրտմտի  
յվ յ ուղղջղտնղտու յվ Լոժժ քտտն մտրվ  
Ե ջեղոլ տուն չ ժտչե ։ վղրս մր Երսնտե  
նղտեմզե ոչկողն ուղթրսնղրտի մս ։ վրսժ  
։ վնրսնղտմոլ չրքղվ Լո ուտմի վկրսժ ԻՂ

։ ղվնկտուկ ոչժտր ոչքտտ ոչքտտ մս մնզղմտօտն  
։ տն Եսն մվնտղտվե չթՂ ։ Ետնղ ովեսն ԴՂ

ԳՂԳՆԳՂ

։ Ետնղտն մի տչրտիմի տուն Եղրվթրամրտտ  
։ Լոտ Եսն ։ Լոժժ մտղմի վն Եմտղտղտ վնքժ  
Ետմի Եդքտտր մի մս Դղվ ԵԼոժ ։ չ մզնրսնսթ  
տչետ Լոմի Եմզղտմ տուն ովե ։ միտոգտ  
ոլթղտգի յվ մս Ետղտրվկ ։ Եվիմստ մի

ՈՍՈԿՈՅՈՂ

։ Լոմի ոգքտտր մի Դղվ ։․․․ ուրվոժտՂ ։ Լոմի  
ոգքտտր մի Դղվ ։ Ժղտիեու Դղվ ։ ղրվթրսն  
։ Կղմտի Դղվ ։ մտրգմզ յդ մր կտչ կվեե  
կտնղտնտ յ քտրսմտ վնքժ չթ մտվմտրնչ  
չոժ ։ ղքմսրտմվի մի ովե Եգն մս Ետղտր  
։ մտն մի ղնտվՂ ։ ճչր մղտտ ։ ճչր մղտտ ։ Ժղտղ  
։ ոգտ մի ճչր մղտտ Ժղտղտն ։ մնզղղրվթրսն  
։ մզկտտտի քտրսմեմտ վնքր ճչր վղսմտտժ  
։ Եղտմ տղԵ ։ ղտղտգտ մի մժղչրտ յ ղքտօվե մժ  
։ ղքրՂ ։ ԵՂ ։ Ետղտգտ չն ժտչԵ ։ Ետղտօվե չն  
։ ԺտչԵ ։ Լոմի Երսնղտոլ ոչկողն վնքժ ոլկտուկ  
․․․ չղմկ ղրվթրսղտնտն մղտղթրսղվժ  
։ Ետտ ոլրսմտր մս ։ մր կվճտ ովիտոտն յվ  
։ Եչ ողնտկտրգմզկ ։ վմ մղտմ ողտիմմտք  
ոլՂ ։ Եսնղմտտտի մղտտնտն Եսնտ յ վղտտ

## ՄԱՔՍԻՄՈՍ

Իրեն պաշտօնին կը զբաղի՝

## ՆԵՆՆԵԼԻ

Կարծեմ թէ: Սմէն առաւօտ կ'ելլայ կ'երթայ, նախաճաշին կու գայ, կը դառնայ դուրս կ'ելլայ, մինչեւ կերակուրին ժամը: Սակայն սփռոչ կերպարանք ունի: Շատ ջանացի որ իրեն զուարթ կամք մը ներգործեմ: Չանացի իրեն համար կամենալ: Կ'ըսէիր ինձի որ մը՝ որ կամքը ամէն բանի կարող է:

## ՄԱՔՍԻՄՈՍ

Եթէ ազէկ գործածուի:

## ՆԵՆՆԵԼԻ

Կը կարծես դու որ կրնաս միշտ ձեռք բերել ինչ որ կամենաս:

## ՄԱՔՍԻՄՈՍ

Գրեթէ միշտ: Ժամանակով և լուրթեամբ:

## ՆԵՆՆԵԼԻ

Կը համարին թէ ես ալ կարենամ:

## ՄԱՔՍԻՄՈՍ

Կարծեմ թէ այո՛: Այն սահմաններուն մէջ

որ անտեղի չէ: Յայտնի է թէ եթէ ուզես դու զօրաւոր մարդ մը ընել թո՛ւմին... որ վայելչութեան այնպէս զերազանց զգացում մը ունի: Եւ ասկէ գատ, դեռ քու հոգւոյդ մէջ բնազդումները... կամ աւելի լաւ՝ սովորութիւնները և ողջմտութիւնը հակառակամարտ կը կուռին:

## ՆԵՆՆԵԼԻ

Միտքս չես հասկնար:

## ՄԱՔՍԻՄՈՍ

Ինչ որ ալ ըլլայ, մի յոգնեցներ կամքը, ունայն բաներով: Ո՛վ որ կ'ուզէ կորսուիլ թող որ կորսուի: Ի՞նչ կ'ուզես ընել քու մօրուիդ հետ օրինակի համար: Ես կը կարծեմ թէ հայրդ զինքը կըռեր և դատեր է, և կը խնդրէ մէկ բան միայն, որ զինքը իրեն աշխատութեան շարքիլէ:

## ՆԵՆՆԵԼԻ

Ազատամբռութիւնը չիս զգար...:

## ՄԱՔՍԻՄՈՍ

Կ'ուզես ազատամբռիլ տերեւներուն դէմ՝ զոր հովը ցիրուցան կ'ընէ: Բունէ գանոնք եթէ կրնաս: Այնչափ շնորհազեղութիւն ունին,



և այնչափ վայելչութիւն, և չես գիտեր ուր կ'երթան կը լինան : Այն մարդիկը չեն լինար : Ոչ ոք վերջնական անզգամութիւնը պիտի ընէ երբեք, կը թռչըտին վատութենէ վատութիւն և կ'անհետանան ընդհանրական վատութեան մէջ : Օրուան մէկը, կը դառնաս, և այլ ևս չկան :

ՆԵՆՆԵԼԷ

Թոմիին վրայ ալ այսպէս կը մտածես :

ՄԱՔՍԻՄՈՍ

Դեռ չեմ գիտեր : Այս առաւօտ՝ իրեն վըրայ տեղեկութիւններ ունենալու համար՝ կ'ուզէի բարեկամիս երթալ : Բայց այն յապաղումով : Հեռագրեցի իրեն վերջին կայարանէն, որ հեռագրէ հոս ինծի : Կ'իմանանք :

ՅՈՒԼԻԱ Խորէն ներս կը մտնայ :

ՆԵՆՆԵԼԷ հաղիւ թէ զինքը կը տեսնայ :

Մաքսիմոս :

Նայէ որ հայրս կը սպասէ քեզի աշխատանոցին մէջ :

Մաքսիմոս կը սիսի երթալ :

Հաղիւ թէ բան մը գիտնաս, եկուր ինծի ըսէ, է՞հ :

Մաքսիմոս կ'երթայ :

### ՏԵՍԻԼ ՏԱՍՆԸՄԷԿԵՐՈՐԴ

ՅՈՒԼԻԱ և ՆԵՆՆԵԼԷ :

ՅՈՒԼԻԱ

Զինքը զրկեցիր որպէս զի հետս մինակ մնաս :

ՆԵՆՆԵԼԷ

Ոչ : Հայրս ըսած էր որ զինքը իրեն զրկեմ :

ՅՈՒԼԻԱ

Կրնանք իմանալ այն անպաաշած քրքիջին պատճառը :

ՆԵՆՆԵԼԷ կը սիսի երթալ :

ՅՈՒԼԻԱ

Հոս եկուր :

ՆԵՆՆԵԼԷ

Մայր, աւելի լաւ է որ թողու զիս երթամ :

ՅՈՒԼԻԱ

Ինչ որ կը մտածես գիտեմ : Աշխարհքիս մէջ արծըթէ միայն մէկ շրջանակ մը կայ :

ՆԵՆՆԵԼԵ

Այդ բաներուն վրայ չի խօսինք: Շատ գուեհիկ ստորին բան է: Քեզի բան մը չեմ ըսեր, բան մըն ալ չեմ ուզեր գիտնալ:

ՅՈՒԼԻՍ

Կարծեցիր թէ քուկինդ ըլլայ է՞:

ՆԵՆՆԵԼԵ

Թող որ երթամ: Չի խօսինք: Խորշում կը զգամ:

ՅՈՒԼԻՍ

Կը կասկածէիր: Ինծի քու ազուր հարցունսորձդ ըրիր:

ՆԵՆՆԵԼԵ

Իմա էր, զանիկայ ճանչցայ: Անոր վրայ խօսելէն առաջ կը կասկածէի: Խօսելէն ետքը ապահով եղայ: Երէկ, անցնելու ատենս, տեսայ որ սենեակս մտար: Պարտէզ իջայ, քեզի կասկած չտալու համար սկսայ երգել: Դու գլուխդ դուրս կարկառեցիր վարագոյրներուն մէջէն: Քանի մը վայրկեանէն ետքը նորէն վեր ելայ, տեսայ որ բացուած էր դարակս, և ամէն բան հասկցայ: Ուղեցի անոր վրայ հետդ խօսիլ՝ ցուցնելու համար որ ի-

մացեր եմ: Երբեք այս խօսքիս վրայ այլ ևս պիտի չի դառնայի:

ՅՈՒԼԻՍ

Կը հնարես: Ստոյգ չէ որ ես սենեակդ մտայ:

ՆԵՆՆԵԼԵ

Թո՞մին դուրս ելլելդ տեսաւ:

ՅՈՒԼԻՍ

Դուռը բացած պիտի ըլլամ զքեզ փնտռելու համար:

ՆԵՆՆԵԼԵ

Եթէ քեզի հաճելի էր՝ կրնայիր անի ինձմէ ուղել:

ՅՈՒԼԻՍ

Հաճելի չէր:

ՆԵՆՆԵԼԵ

Իրաւցնէ: Այն բանին որուն համար պիտի գործածէիր....

ՅՈՒԼԻՍ

Ի՞նչ բանի պիտի գործածէի: Հիմա ուրիշ բան մըն ալ ելաւ մէջտեղ: Ի՞նչ բանի պիտի

գործածէի : Երախտագիտութիւնս կ'ուզէի  
ցուցնել անոր՝ որ աշխատեցաւ արուեստը  
ինծի սորվեցնելու : Իմս էր շրջանակը որուն  
մէջ պատկերս ազուցի : Տես որ կ'ըսեմ՝ քեզի,  
այնչափ անմեղ բան է : Իմ մէկ կենդանա-  
գիրս էր : Դու և ոչ գիտէիր :

ՆԵՆՆԵԼԵ

Կը հասկցուէր :

ՅՈՒԼԻԱ

Դո՛ւ շատ բաներ կը հասկնաս :

ՆԵՆՆԵԼԵ

Շատ, չի կարծածէ՞դ աւելի :

ՅՈՒԼԻԱ

Անտարակոյս : Ժամանակէ մը ի վեր է որ  
Հետքերուս ետեւէն ես : Գեղեցիկ յարգանք :  
Զանդբաղառնալ կը ձեւացնէի՝ այն խեղճ  
մարդէն որ քու հայրդ է ակնածելով :

ՆԵՆՆԵԼԵ

Է՛հ :

Դասն ժպտա :

ՅՈՒԼԻԱ

Բայց հիմա որ յանդգնեցար կասկածիլ

վրաս, կ'ուզեմ որ ինչուան խորը հասնինք :  
Լոյս, լոյս :

ՆԵՆՆԵԼԵ

Ոչ, մայր, ոչ : Կռիւններ չի հանենք :

ՅՈՒԼԻԱ

Զէ, չէ, պէտք է մէջտեղ ելլայ : Ապացոյց  
կ'ուզէ : Զիս կ'ամբաստանն՞ս : Ապացոյց :  
Հայրդ պիտի գատէ :

ՆԵՆՆԵԼԵ

Կ'աղաչեմ :

ՅՈՒԼԻԱ

Կը վախնաս, է՛հ :

ՆԵՆՆԵԼԵ

Վախնա՞լ :

ՏԵՍԻԼ ՏԱՍՈՒԵՐԿՈՒԵՐՈՐԴ

ԹՈՄԻ և վերոյիշեալները :

ՆԵՆՆԵԼԵ

Ոհ, Թոմի : Եկուր, եկուր : Աւելի աղէկ  
ժամանակին չէիր կրնար դալ :

Յուլիայի :

Կը վստահէ՞ս Թոմիին վրայ :

ՅՈՒԼԻՍ

Ի՞նչ ըսել է :

ԹՈՄԻ

Ի՞նչ եղաւ :

ՅՈՒԼԻՍ

Եղածը այն է՝ որ քոյրդ կ'ամբաստանէ  
զիս թէ իրեն դարակները խառներ եմ : Կ'ըսէ  
որ երէկ զիս տեսեր ես, առնել . . .

ՆԵՆՆԵԼԷ

Ոչ, առնել, ոչ : Սենեակս մտնալդ կը  
ժխտէիր դու : Ըսի՛ թէ Թոմին ելլալդ տե-  
սեր է :

ԹՈՄԻ

Սակայն ի՞նչ խնդիրներ են ասոնք : Մէկդի  
Թողունք, ես բան մը չեմ գիտեր :

ՆԵՆՆԵԼԷ

Ո՛հ, Թոմի : Մի փախփխիւր պատասխա-  
նելէ : Կ'ուզեն որ կարենամ ըսել թէ ստեցի :  
Երէկ հոս քեզի հանդիպեցայ երբոր պար-  
տէղէն վեր կ'ելլայի : Հարցուցի քեզի . . . կը  
յիշեմ թէ շատ անտարբեր ձայնով ըրի, վասն  
զի զքեզ կասկածի մէջ ձգել չէի ուզեր : Հար-

ցուցի քեզի թէ մայրս տեսա՛ր : Չէի ուզեր  
սենեակը մտնալ և զինքը գեռ հոն գտնալու  
վտանգի մէջ դնել զիս : Այս բանս զիս շատ  
վարանքի մէջ կը ձգէր : Եւ դու ինձի պա-  
տասխանեցիր . . .

ԹՈՄԻ միշտ անայլայլակ մնաց օղը նայելով :

ՆԵՆՆԵԼԷ սեւեռելով իրեն վրայ :

Իրաւ չէ՞ :

ԹՈՄԻ

Չեմ՝ յիշեր :

ՅՈՒԼԻՍ յաղթական :

Ա՛հ :

ԹՈՄԻ կամացուկ Յուլիայի :

Լա՛է :

ՆԵՆՆԵԼԷ

Եւ չես ալ յիշեր որ դու էիր ինձի առա-  
ջին կասկածը արթնցնողը . . .

ԹՈՄԻ

Ի՞նչ կասկած :

ՆԵՆՆԵԼԷ

Ոհ, մոռցած պիտի ըլլաս, Թոմի : Ա՛յնքան  
սկար յիշողութիւն մը ունիս :

ՃԻԱԳՈՋԱ. ԴՈՂԱԿԵՍ տերիւմները .

ԹՈՄԻ

Վերջացնենք, է՛հ:

ՆԵՆՆԵԼԷ

Ոչ, ոչ, կշռելու համար թէ մինչեւ ուր  
կը հասնի իմ հնարողութիւններս, այս ալ  
պէտք է ըսուի: Ութ օր առաջ, ճիշդ անցած  
հինգշաբթի, քեզի երեսուն ֆրանքի վրայ խօ-  
սեր էի....

ԹՈՄԻ

Դու կ'երազես....

ՆԵՆՆԵԼԷ

Մայր, քեզմէ ներողութիւն կը խնդրեմ,  
սուտղրուց մըն եմ:

ՅՈՒԼԻԱ

Կը տեսնամ:

ԹՈՄԻ կամացուկ Յուլիայի:

Կ'ազաչեմ քեզի....

ՅՈՒԼԻԱ

Ինծի բաւական է, բաւական.... Սորվիս  
պիտի.... բաւական է....

Կ'երթայ էր սենեակը:

## ՏԵՍԻԼ ՏԱՍՈՒԻՐԵՔԵՐՈՐԴ

ԹՈՄԻ, ՆԵՆՆԵԼԷ յետոյ ՄԱՔՍԻՄՈՍ:

ՆԵՆՆԵԼԷ լռութենէ մը ետքը:

Խեղճ Թոմի: Ո՛րչափ քեզի սուղի նստած  
պիտի ըլլայ:

ԹՈՄԻ յուզուած հագիւ զսպելով արցունք-  
ները և մեծ դառնութեամբ:

Երկրիս վրայ ամէնէն աւելի սիրական անձը  
դու ես:

ՆԵՆՆԵԼԷ

Գիտեմ:

ԹՈՄԻ

Բան մը մի՛ ըսեր ինծի:

Կ'երթայ կը նստի ստուղիկին առջեւ  
և դուրսը վրան կը կոթնցնէ:

ՄԱՔՍԻՄՈՍ խորէն ձեռքը թղթով մը:

Նէննէլէ:

ԹՈՄԻ

Ո՛հ:

Եւսուր կ'ըլլայ և երթալու:

ՆԵՆՆԵԼԵ ԹՈՒԹԻ :

Հոս կեցիր, հոս կեցիր, կը զրկեմ զինքը :

ԹՈՍԻ կը դառնայ կը զնէ գլուխը սասլին վրայ :

ՆԵՆՆԵԼԵ կ'երթայ Մաքսիմոսի, կը քաշէ զինքը մէկդի, և կ'ըսէ իրեն կամացուկ :

Վայրկեան մը զմեզ թող :

կը նայի իրեն :

Ի՜նչպէս տո՛գոյն ես : Ի՞նչ հանդիպեցաւ :

ՄԱՔՍԻՄՈՍ հեռագիր մը կու տայ իրեն :

կարգա : Այն բարեկամէս է որուն քով եզրայրդ տեղաւորեր էի :

ՆԵՆՆԵԼԵ կը կարգայ անեցուն ցաւալից զարմանքով :

ՄԱՔՍԻՄՈՍ նորէն կ'առնէ հեռագիրը :

Մէկ օր միայն գնացեր էր հոն :

Բայց մը կ'առնէ դէպ ի թոմի :

ՆԵՆՆԵԼԵ

Իրեն մի խօսիր : Թող զիս . . . . Հօրս ըսիր :

ՄԱՔՍԻՄՈՍ

Խրախօյս չունեցայ :

ՆԵՆՆԵԼԵ

Վար իջիր . . . իջիր հոն վարը, մարգա-  
դեանին վրայ : Ետքը կը կանչեմ զքեզ :

ՄԱՔՍԻՄՈՍ

Այո՛ :

կ'երթայ :

### ՏԵՍԻԼ ՏԱՄՆԸՉՈՐՍԵՐՈՐԴ

ԹՈՍԻ և ՆԵՆՆԵԼԵ՛ :

ՆԵՆՆԵԼԵ ԹՈՒԹԻՆ կ'երթայ, գլուխը վեր կը վերցնէ և կը պահէն զինքը :

Ի՞նչ պիտի ըլլայ քեզի : Ի՞նչ պիտի ըլլայ մեզի :

ԹՈՍԻ

Ի՞նչ կ'ուզէր քեզմէ Մաքսիմոս :

ՆԵՆՆԵԼԵ

Իրեն այն մէկ բարեկամին նամակը կար-  
դալ տուաւ ինծի : Մէկ օր միայն հոն գնա-  
ցեր ես :

ԹՈՍԻ վեր կ'ելլայ և կը հեռանայ :

Ճիշդ է : Այնպէս է :

## ՆԵՆՆԵԼԷ

Հոս կեցիր . . . հոս մօտս կեցիր . . . որ  
խօսինք :

## ԹՈՄՒ

Ի՞նչ բանի կը ծառայէ :

## ՆԵՆՆԵԼԷ

Ոհ բանի մը չի ծառայեր : Քիչ մը աւելի  
տանջուելու համար : Մայրս գիտէր :

ԹՈՄՒ կ'ակնարկէ զլսող այն :

## ՆԵՆՆԵԼԷ

Քու խորհրդակիցդ էր :

## ԹՈՄՒ

Կուահեց :

## ՆԵՆՆԵԼԷ

Ես ոչ : Երբեք կուահած պիտի չըլլայի :  
Տունէն դուրս եղած ժամերուդ՝ ո՞ւր կ'եր-  
թայիր դու : Կ'ուզե՞ս ըսել ուր կ'երթայիր :  
Ոհ, կրնաս խօսիլ, գիտես : Աղջիկ մըն եմ  
որուն կրնայ զուրցուիլ եղածը : Այն տիկնոջ  
կ'երթայիր : Անոր սիրահարուած ես :

ԹՈՄՒ կ'ակնարկէ ոչ :

## ՆԵՆՆԵԼԷ

Մէկ օր միայն դիմացար : Կը յոգնեցնէ՞ր :  
Նուստացած կը զգայիր զքեզ է՞ : Ինչպէս  
ես առաջին դասիս : Քեզի խեղճ և զուհիկ  
բան մը կ'երեւար : Կամ արդեօք սկիզբէն  
կը մտածէիր արդէն որ պիտի չի դիմանայիր  
այն աշխատութեան :

## ԹՈՄՒ

Եթէ գիտնայիր դու որ քու ձայնիդ հըն-  
չիւնը միայն ի՞նչ վիշտ կը պատճառէ ինծի :

## ՆԵՆՆԵԼԷ

Կը հաւատամ, ես իսկ իմ անձիս այնչափ  
վիշտ եմ : Մենք երկուքնիս մէկտեղ շատ կե-  
ցանք : Եւ ի՞նչ աղէկ : Եթէ կորսուիս, ինծի  
համար ալ լմնցած է : Առաջին անգամ է որ  
քու խորհուրդներդ չեմ գուշակեր : Իրարու  
միտքը ա՛յնչափ կը հասկնայինք : Երբ հայրս  
նորէն կարգուեցաւ, կը յեշես, խօսք մը չը-  
սինք . . . երբեք . . . ոչ իրեն վրայ, ոչ անոր  
վրայ : Միայն զիս ամէն առաւօտ կը տանէիր  
չըջագայութեան : Ա՛յնչափ իրարու միտքը կը  
հասկնայինք : Բարի էիր :

ԹՈՄԻ

Դիւրին:

ՆԵՆՆԵԼԵ

Բարի ես:

ԹՈՄԻ շառն կը ժպտի:

ՆԵՆՆԵԼԵ

Սկիզբէն արդէն կը մտածէիր, ըսէ, որ այն աշխատութեան պիտի չկարենայիր դիմանալ: Այն ատենէն ի վեր է երբոր ըսիր Մաքսիմոսի թէ կ'ընդունիմ գայն:

ԹՈՄԻ

Ինչո՞ւ կը յամառիս:

ՆԵՆՆԵԼԵ

Չեմ գիտեր: Ինծի կ'երեւնայ թէ ամէն բան այն կէտին վրայ է:

ԹՈՄԻ

Չեմ հասկնար:

ՆԵՆՆԵԼԵ

Ինծի կ'երեւնայ որ բոլոր ապագան հոն է: Ինծի կ'երեւնայ որ ամենէն աւելի կարեւոր հարցմունքն է որ կրնամ ընել քեզի: Անի-

կայ քեզի չեմ կրնար բացատրել: Այնպէս կու գայ ինծի:

ԹՈՄԻ

Տարօրինակ է որ կը հարցնես ինծի բան մը որ այս օրերս շատ անգամ մտքէս անցաւ: Կ'ուզես ըսել, թէ վայրկեան մը գոնէ կրցայ կամենալ:

ՆԵՆՆԵԼԵ

Թերեւս: Այո: Գոնէ վայրկեան մը:

ԹՈՄԻ

Դժուարին: Երբոր ընդունեցայ, դիմանալ կամենալու համոզուած էի... Սակայն, թէ որ տեսար զիս, իսկոյն նստայ գրեցի տոմսակ մը՝ զրկելու համար հոն ուր ինծի նախաճաշի կը սպասէին: Եւ մինչդեռ կը գրէի, կը լսէի ներսէս հեղնական ձայն մը. կեցցես: Բաց դուռ մը պահէ: Եւ ափշած էի որ այն որոշողութեան առանց ճիգի տեղիք տուի: Ես ինծի կ'ըսէի. Բարեպատեհ մամուլն պիտի կամենամ: Կը հաշուէի թէ իրերը զիս գրաւեն: Գնացի հոն: Տէրը ինծի բոլոր գործատունը այցելել տուաւ: Աղուոր: Նրբին և ապահով ուժերու կազմած մը: Ետքը տարաւ զիս իրեն



աշխատանոցը և ինձի գրեյ տուաւ երկու կամ երեք նամակ.... ոչինչ բաներ: Վրաս բան մըն ալ տպաւորութիւն չըրաւ: Ոչ յոգնութիւն մը, ոչ յափրանք մը:

ՆԵՆՆԵԼԷ:

Եւ ոչ ալ եռանդ մը:

ԹՈՄԻ

Եւ հետեւեալ օրը չի գարձայ:

ՆԵՆՆԵԼԷ:

Մաքառեցա՞ր:

ԹՈՄԻ

Ոչ: Չորոշեցի բնաւ որ չի դառնամ: Չի գարձայ:

ՆԵՆՆԵԼԷ:

Իրերը զքեզ չէին գրաւած:

ԹՈՄԻ

Ոչ:

ՆԵՆՆԵԼԷ:

Պէտք է իրերու տալ ինքզինքը: Ի՞նչ միտքդ գրեր ես ընելու:

ԹՈՄԻ

Չեմ ուզեր մտածել վրաս:

ՆԵՆՆԵԼԷ

Կրնաս քեզի հրամայել որ չի մտածես:

ԹՈՄԻ

Մտածութիւնը միշտ այն կէտին վրայ է, բայց ուրիշներ կը թողում որ անոր դիմացը անցնին: Խոր պատկերներ չունիմ: Կը տեսնամ զիս ինչպէս հայլիի մը մէջ: Ինչպէս թէ տեսնայի անտարբեր անձ մը: Գիտեմ թէ ինչ պիտի հանդիպի: Բան մը պիտի չընեմ որ հանդիպի, բան մը պիտի չընեմ որ չհանդիպի: Կը թողում զիս հոսանքին:

ՆԵՆՆԵԼԷ Իբրեւ շարունակելով իր մէկ մտածութիւնը:

Աւզէի հոսանքին, յորդութեան պահուն.... որ և ոչ խղճուելու ժամանակ կու տայ: Ժայռէ ժայռ և կոճղէ կոճղ զարնուած....

ԹՈՄԻ

Ի՞նչ կ'ըսես:

ՆԵՆՆԵԼԷ

Ոչինչ: Մաքսիմոսին խօսքեր միտքս կու գան.... դու հոսանքի անուն տուիր.... և.... Ուշ մի գներ: Ինձի կը վերաբերի:

ԹՈՄԻ

Հայրս.... տեղեկացած է:

ՆԵՆՆԵԼԷ

Դեռ չէ:

ԹՈՄԻ

Մօրս հետ կենակցութիւնը քեզի անտա-  
նելի է Է՛հ:

ՆԵՆՆԵԼԷ

Ո՛հ: Ասկէ ետեւ:

ԹՈՄԻ

Գիտակցութիւն չունեցող մէկն է: Պիտի  
զլորի ինծի նման, անկումէ անկում....

ՆԵՆՆԵԼԷ

Դու այլ ևս իրեն վրայ գէշ չես կրնար խօ-  
սիլ: Իրեն հետ միտքանած ես:

ԹՈՄԻ

Զիս այնչափ կ'անարգես:

ՆԵՆՆԵԼԷ չի պատասխաներ:

ԹՈՄԻ

Եւ գեռ ալ չես գիտեր: Եթէ գիտնայիր....

Պէտք է քեզի ամէն բան ըսեմ: Կ'ուզես:  
Ինչպէս երբեմն անցած ժամանակները:

ՆԵՆՆԵԼԷ

Ըսէ, այո՛.... Եւ մէն բան ըսէ ինծի: Ոյժ-  
մըն է ամէն բան ըսելը: Ո՛րչափ որ քեզի  
ժանրի կը նստի այնչափ աւելի պէտք է խօ-  
սիս: Ո՛վ գիտէ: Շուտ ըսէ.... Թոմի:

ԹՈՄԻ

Միտքս կու գայ Մեղասոգադիոյի երգ մը-  
Սրտէն փախած ձայն....

ՆԵՆՆԵԼԷ

Ո՛հ խեղճութիւն:

ԹՈՄԻ տխրամած և բուռն:

Կնոջ մը ստակ պարտական եմ: Կը հաս-  
կընամ: Շատ մը: Իրմէ չի խնդրեցի դա-  
նօնք....

ՆԵՆՆԵԼԷ

Մի անմեղադիր ըներ գրեզ:

ԹՈՄԻ

Իրաւ է: Ճշմարտութիւնը պէտք է ըսել  
ամբողջ: Զարը և բարին: Զանօնք ընծայեց

ինծի... վրայ տուաւ... կը կորսնցնէի,  
կ'ուզէի ըրած մնասա հանել... կեանքիս  
տասը տարին կու տայի գտնալու համար...  
և դտայ հոն զանոնք դիւրին դիւրին: Ամէն  
բան դիւրին եղաւ իմ կեանքիս մէջ: Ամէն բան  
դիւրին սկիզբէն, և շարունակաբար, և միշտ.  
դիւրին ապրելը, դիւրին ծանօթութիւնները,  
դիւրին հեշտութիւնները, դիւրին մեծարան-  
քը և բարեսիրութիւնը, դիւրին բարեպաշ-  
տութիւնը, դիւրին մղութիւնները... բան  
մը միայն դժուարին... կամքը, բայց ինծի  
կարեւոր չէր: Մինչև երեք ամիս առաջ, ինծի  
համար կամքը կը կոչուէր կամ սովորութիւն  
կամ քմահաճոյք... այն օրը որ պէտք եղաւ  
կամենալ...

ՆԵՆՆԵԼԷ

Ժանգոտած էիր:

ԹՈՄԻ

Ո՛հ միայն ժանգոտած ըլլար... կը պակ-  
սէր անիւր, կը պակսէր կազմածը:

ՆԵՆՆԵԼԷ

Զես կրնար կամենալ և ոչ չարը:

ԹՈՄԻ

Ո՛հ չարը... Թող որ ինքը ընէ: Անիկայ  
ինծի համար ուզողը կայ:

ՆԵՆՆԵԼԷ

Ո՞րչափ պարտական ես:

ԹՈՄԻ

Անօգուտ է:

ՆԵՆՆԵԼԷ

Եթէ գրէինք հօրաբրոջս որ այնչափ հա-  
րուտ է:

ԹՈՄԻ

Փողպատի գնդասեղ մը պիտի զրկէ ինծի:

ՆԵՆՆԵԼԷ

Մաքսիմուէն կ'ուզեմ:

ԹՈՄԻ

Ապահովապէս կու տայ քեզի: Բայց յետո՛յ:  
Նորէն պիտի սկսիմ: Ուստի լաւագոյն է  
վերջնական կերպով մէկ անգամէն ընկզմիլը:

ՆԵՆՆԵԼԷ փեռեկած աչքեր սեւեռելով իրեն վրայ:

Ընկզմիլը:

ԹՈՄԻ ծիծաղելով:

Ջուրին մէջ չէ, գիտես.... Համարեցար  
թէ զիս սպաններու համար կը խօսիմ: Մէկդի:  
Անոնցմէ չենք:

ՆԵՆՆԵԼԵ

Չէ էհ:

ԹՈՄԻ

Միլիոններու մէջ ընկզմիլը: Կը հատու-  
ցանեմ: Կը կարգուիմ հետը:

ՆԵՆՆԵԼԵ սոսկացած:

Դու այն կնոյ հետ կը կարգուիս:

ԹՈՄԻ

Տրուած խոստում է: Ութ օրէն:

ՆԵՆՆԵԼԵ

Կ'երգնում որ ութ օրէն հետը չես կար-  
գուիր:

ԹՈՄԻ

Ո՛վ կրնայ արգիլել:

ՆԵՆՆԵԼԵ

Կը տեսնաս:

ԹՈՄԻ

Նայէ որ եթէ Մաքսիմոս ինծի խօսք մը  
միայն ըսէ....

ՆԵՆՆԵԼԵ

Ոչ....

ԹՈՄԻ

Եւ միանգամայն խորհուրդ կու տամ քեզի  
որ հօրս բան մը չըսես: Օգուտ մը չունի: Ա-  
ւելորդ է ժամանակէն առաջ զինքը տրամեցը-  
նելը: Եթէ զիտնալու ըլլայ.... ակնթարթի  
մը մէջ տունէն կ'ելլամ կ'երթամ: Ազատ եմ:  
Գործը ըմնայէն ետքը.... Ժընէվ կը ձգենք  
.... և կը գիտնայ:

ՆԵՆՆԵԼԵ

Հիմակ ո՛ւր կ'երթաս:

ԹՈՄԻ

Հոն:

ՆԵՆՆԵԼԵ

Երթաս բարով, Թոմի:

ԹՈՄԻ

Դու այլ ևս ինծի խօսք պիտի չի դարձնես էհ:

ՆԵՆՆԵԼԵ

Ըսածդ չէս գիտեր: Երթաս բարով, Թոմի:  
Երթաս բարով, խեղճ Թոմի:

ԹՈՄԻ կ'ելլայ շտապով:

ՃԻՍԳՈՋՍ. ԴՈՂՄԷՍ տերհւժները.

## ՏԵՍԻԼ ՏԱՍՆԸՀԻՆԳԵՐՈՐԴ

ՆԵՆՆԵԼԻ ԵՄՈՅ ՄԱՔՍԻՄՈՍ:

ՆԵՆՆԵԼԻ կը մնայ սեւեռուն, անշարժ, կան-  
գուն ստուղին քով: Անդիտակից շարժումով ստու-  
ղին վրայ մատուցներովը կը զարնէ: Կը նայի  
իրեն դիմացը, պարապույթեան մէջ:

Ամէն բան կ'երթայ... Ամէն բան կ'եր-  
թայ... ամէն բան դնաց: Լմացաւ:

Կրկին և կրկին կ'անցընէ մեկ ձեռքը դնուն  
ժայ էրբեւ մազերը փայփայելով:

Այս իրիկուն:

ՄԱՔՍԻՄՈՍ

Տեսայ որ կ'ելլար: Չի կանչեցիր զիս:

ՆԵՆՆԵԼԻ

Իրաւ է: Ներէ: — Գիտես: Կը կարգուի  
այն կնոջը հետ:

ՄԱՔՍԻՄՈՍ

Չի կրցա՞ր միտքը փոխել:

ՆԵՆՆԵԼԻ

Չի փորձեցի անգամ: Այսպէս կը կործա-  
նի այս տունս: Քայքայումը:

ՄԱՔՍԻՄՈՍ

Եղբայրդ ամբողջ տունը չէ:

ՆԵՆՆԵԼԻ

Ո՛չ մնացածը: Մայրս ինքն ալ ուրիշ ճամ-  
բայէ կ'երթայ: Այսօր բանե՛ր տեսայ: Խրատ-  
ներով լեցուն օր մը:

ՄԱՔՍԻՄՈՍ

Իսկ հայրդ:

ՆԵՆՆԵԼԻ

Այո: Իրաւ:

ՄԱՔՍԻՄՈՍ

Որ այնքան ողջամիտ է, այնպէս բարի:

ՆԵՆՆԵԼԻ

Ստոյգ է: Եւ կ'ուզէի ձեռնամած անոր  
դիմաց ծունկ չոգիլ, որ տեսնար թէ ինչ սէր  
ունիմ վրան: Սակայն վայրկեաններ կան,  
որոնց մէջ բոլոր ճշմարտութիւնները կ'երեւ-  
նան մերկ և անողորմելի: Եւ հարկ է ճանչնալ  
զանոնք: Ինքն ալ տկար է:

ՄԱՔՍԻՄՈՍ

Ոչ:

ՆԵՆՆԵԼԻ

Իրողութիւններուն յաղթող և սիրտերուն

Իշխող զօրութիւնը շունի: Գու իրմէ հազար  
անգամ ուժով ես:

ՄԱՔՍԻՄՈՍ

Զեմ կարծեր: Ես ձեռնարկող զօրութիւնն  
ունիմ: Ինքը գիմացող: Որ ամենէն դժուա-  
րինն է, այն որ նուազ գոհունակութիւն կու  
տայ:

ՆԵՆՆԵԼԷ

Օ՛ Մաքսիմոս, եթէ գիտնայիր դու թէ ինչ-  
պէս խիզճս կը դարնէ այս բաներս քեզի ը-  
սելուս: Այնպէս չնչին բաներ են: Բայց պէտք  
է որ գիտնաս դանձք, վասն զի դու միայն  
կը մնաս այն խեղճուկին:

ՄԱՔՍԻՄՈՍ

Ե՞ս միայն:

ՆԵՆՆԵԼԷ

Կը տեսնեն: Այս առաւօտ տանը վարչու-  
թիւնը ձեռքէս առաւ, մօրս տալու համար:  
Ժպտելս կու գայ, մտածելով որ կը պատմեմ  
քեզի.... Այնչափ հեռու եմ ասկէ: Զեռքէս  
առաւ.... և զինքը չեմ յանդիմաներ. բայց  
յետոյ, շուտ մը եկաւ ինքզինքը անմեղատիր  
ընելու, և կամացուկ մը ըսելու որ դարձեալ  
հսկեմ.... Է՛հ: Է՛հ: Է՛հ:

ՄԱՔՍԻՄՈՍ

Ի՞նչպէս խրոխտ ես:

ՆԵՆՆԵԼԷ

Ո՛հ ոչ: Զինքը այնչափ բարձր կը բռնէի:  
Անոր ամէն պզտիկ ստուերը կը խոցէ զիս  
աւելլի քան թէ ուրիշներուն յանցանքները:  
Գիտեմ ինչ որ կը վաստկի.... սկզբան ճիշդ  
ճիշդ գացինք, բայց յետոյ ամսէ մը ի վեր  
շատ աւելի կը ծախսենք.... և իրեն ըսի....  
և խնտաց: Ասոնք իմ չնչին, չնչին բաներս  
են որ կը մտածեմ և կ'ըսեմ, բայց իրեն հա-  
մար ծեփը կը փչրի, ուրիշներուն համար մեծ  
կտորները կ'իյնան: Քայքայումը:

ՄԱՔՍԻՄՈՍ

Կ'ուզե՞ս կի՞նս ըլլալ, իրենէ:

ՆԵՆՆԵԼԷ

Ո՞րքմութիւն չեմ ընդունիր:

ՄԱՔՍԻՄՈՍ

Զե՞ս ուզեր:

ՆԵՆՆԵԼԷ

Ոչ:

ՄԱՔՍԻՄՈՍ

Զե՞ս կրնար սիրել զիս:

ՆԵՆՆԵԼԻ

Այդ չէ: Չեմ կարծեր թէ դու զիս սիրես... այնպէս: Չեմ կարծեր թէ դու երբեք իջած ըլլաս հոգւոյս ներսը:

ՄԱՔՍԻՄՈՍ

Ոհ, մինչեւ խորը:

ՆԵՆՆԵԼԻ

Իրան:

ՄԱՔՍԻՄՈՍ

Ի՞նչ բան է որ այնպէս կը ծիծաղի բիբիդ խորը:

ՆԵՆՆԵԼԻ

Քեզի կ'երեւնայ թէ կը ծիծաղի: — Եւ սակայն շնորհակալ եմ քեզի, զիտես, Մաքսիմոս:

Երկայն դադար:

Այս իրիկունն Շամունի կը դառնան:

ՄԱՔՍԻՄՈՍ

Բանի: Շատ դործ ունիմ: Ինչո՞ւ համար կը հարցնես:

ՆԵՆՆԵԼԻ

Բանի մը համար չէ: Սապէս:

ՄԱՔՍԻՄՈՍ կ'երթայ դէպ ի դուռը:

ՆԵՆՆԵԼԻ

Կը թողնու զիս:

ՄԱՔՍԻՄՈՍ

Այո: Պէտք ունիմ վար իջնալու և պտըտելու:

ՆԵՆՆԵԼԻ

Կ'ուզես որ հետդ իջնամ:

ՄԱՔՍԻՄՈՍ

Ոչ: Մինակ ըլլալու պէտք ունիմ:

ՆԵՆՆԵԼԻ

Սրդողանձ կ'երթամ:

ՄԱՔՍԻՄՈՍ

Ոչ: Կը շրջագայիմ հոն վարը:

ՆԵՆՆԵԼԻ արամուլթեամբ:

Չի հասկցաւ:

Կ'ելլայ:

Վարագոյրը կ'իջնայ:

## ՀԱՆԴԵՍ ՉՈՐՐՈՐԴ

Նոյն տեսարանը:

### ՏԵՍԻԼ ՄԻՍԿ

Լուսնի զիշեր է: Բայց այն՝ սենեակը չի  
մտնար վասն զի փեղկերը զոց են: Մէջտեղի  
ստուղին վրայ, ուր ՅՈՎՀԱՆՆԵՍ զընդու հետ է,  
կանանչ լուսարգելով վառուած կանթեղ: Կը  
մտնէ ՆԻՆՆԵԼԷ զբուշուրեամբ իրեն սենեկէն:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Է՞:

Կը դառնայ դեպ ի Նենեւէի  
դուռը և մտիկ ընելու կ'ըլլայ:

ՆԻՆՆԵԼԷ կանգուն պատին մատիկ անշարժ  
կը մնայ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Ո՛հ:

Կը թօթուէ ուսերը և կը սկսի  
նորէն աշխատութիւնը:



Նէննելէ կ'անցնի ոտքին ծայրովը որչափ որ կրնայ հորմէն հեռու, սկսելով երթալ դէպ ի եւբը: Մուտքին վրայ հասնելով, կը դառնայ և կը շրկէ Յովհաննէսի համբոյր մը: Բանալու կ'ըլլայ: Մղակը կը հռնչէ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Բայց ո՞վ է:

Ոտք կ'ըլլայ:

Ո՞վ է:

Լուսարդեւ կը վերցնէ:

Նէննելէ բացած է և արդէն սուղոսկեր իջեր է անկէջ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Նէննելէ:

Ետեւէն կ'երթայ, կը հասնի իրեն, նորէն ետ կը բերէ:

Ի՞նչ կը նշանակէ: Ի՞նչ կը նշանակէ: Ո՞ւր ելեր կ'երթայիր:

Նէննելէ գլխուն վրայ սեւ շալ մը ունի, խոսոված է:

Քնանայ չէի կրնար . . . . կ'ուզէի վար իջնալ օդ ծծել . . . .

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Աղէկ չե՞ս զգար:

Նէննելէ

Շատ աղէկ, այ՛ . . . . Տաքը . . . . Չեմ գիտեր: Օդի պէտք ունէի:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Ի՞նչ ունիս: Ի՞նչ ունիս:

Նէննելէ

Չեմ գիտեր . . . . Օդ առնելու պէտք ունէի: Թող դիս որ երթամ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Հոս, հոս:

Կը տանի զինքը մեծ պատուհանին մօտ: Կը բանայ փեղկերը: Սենեկին մէջ լուսնի լոյս:

Հոս նստիր: Հոս որչափ որ կ'ուզես օդ ունիս . . . . և զո՞վ: Տուրտ չե՞ս զգար:

Նէննելէ

Ոչ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Այս իրիկուն այնքան հանդարտ էիր: Ճշին կերար: Կը խօսէիր: Երբոր Մաքսիմոս երթալու վրայ էր, կատակներ ըրիր ճամբորդութեան վրայ որ վաղը պիտի ընենք Շաղութեան վրայ որ վաղը պիտի անուշութեամբ մուսնի: Մօրդ հետ այնքան անուշութեամբ խօսեցար: Այնքան գոհ էի: Այն ատեն բան մը չէիր զգար . . . .

ՆԵՆՆԵԼԵ

Բան մը :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Կը ցաւէիր որ Թոմին սեղանին չկար էջ :  
Բայց կ'ախորժիմ որ քիչ մը սթափի : Զինքը  
հրաւիրող բարեկամները գիտե՞ս դու թէ ով են :

ՆԵՆՆԵԼԵ

Ոչ :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Մայրդ ըսաւ թէ Միլանու բարեկամներ  
էին :

ՆԵՆՆԵԼԵ

Կրնայ ըլլալ :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Դեռ չմտա՞ն :

ՆԵՆՆԵԼԵ

Ոչ :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Ի՞նչ գեղեցիկ գիշեր է :

ՆԵՆՆԵԼԵ միշտ քիչ մը երազելով :

Պատուհանը կեցած էի . . . . Իրեն կը սպա-  
սէի :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Իրե՞ն կը սպասէիր : Կ'ուզէիր հետը խօսիլ :

ՆԵՆՆԵԼԵ

Ոչ . . . . Կը սպասէի մտնալուն . . . . Կը  
վախնայի որ իրեն հանդիպիմ :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Իրե՞ն հանդիպիս :

ՆԵՆՆԵԼԵ

Հըմ . . . .

Գլխուն ցունց մը կու տայ ինչպէս մեկը որ կ'ան-  
դրադառնայ անխելք խօսք մը ըսած ըլլալուն :

Սադ չէր որ կ'ուզէի ըսել :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Գլուխդ դեռ քիչ մը միգապատ է :

ՆԵՆՆԵԼԵ

Թեքեա :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Քիչ մը գոնեաք կ'ուզե՞ս :

Կը շնէ մէկ ձեռքը ճակտին, շնչերակներուն վրայ :

Շնչերակներդ կը զարնեն : Անհանգիստ  
ես : Գաւաթ մը երիցուկ կ'ուզես : Կանչեմ  
մայրդ : Կանչեմ Մարթան :

ՆԵՆՆԵԼԻ

Ոչ, մէկը մի կանչեր: Բանի մը պէտք չու-  
նիմ: Աղէկ եմ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Կը դողաս բոլորովին..... կը դողաս բո-  
լորովին.....

ՆԵՆՆԵԼԻ

Աղէկ եմ, կ'ըսեմ քեզի.... Կը խղրուէի  
սենեակս:

Ինչպէս լացե մը կը բռնուի,  
թեւերը անոր վրէ կը սլուէ:

Ո՛հ հայր:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Ի՞նչ կայ: Ի՞նչ կայ: Կը վախցնես զիս....  
Նէննէլէ: Հայր, Նէննէլէ:

ՆԵՆՆԵԼԻ արցունքներու մէջ:

Թող զիս:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Լաց, լաց, այո՛ լաց, իմ սիրունս: Լաց,  
որ քեզի աղէկ կ'ընէ: Ետքը կ'ըսես ինձի....

ՆԵՆՆԵԼԻ կը հանդարտի, և կը նայի շուրջը  
քեզ մը մտորած:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Քիչ մը անցաւ: Զղային է: Հոս հանդարտ  
կեցիր: Անկողին մտած էիր արդէն:

ՆԵՆՆԵԼԻ

Ոչ: Երկայն ժամանակ անգիտի պատուհա-  
նը կեցայ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Գիտէս ինչ է: Անցեալ գիշերուան փոթո-  
րիկն է: Երէկ բոլոր օրը խղրուէի տաք մը  
թողոց: Ես ալ ոսկորներուս մէջ կը զգայի:  
— Երբոր ինձի գիշեր բարի ըսիր, այն ա-  
տեն այո՛, ինձի երեւցաւ թէ տարօրինակ  
աչքեր ունէիր: Սաստիկ փայլուն էին:

ՆԵՆՆԵԼԻ

Հիմա հանդարտեցայ: Կը վերադառնամ  
սենեակս:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Կ'ընկերեմ հետք:

ՆԵՆՆԵԼԻ պատրաստ:

Ոչ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ժպտելով:

Ո՛հ: Ո՛հ: ԱՆՅԱԿՍԻ կերպով ոչ մը կ'ը-

սուբ՞ : Քու հօրդ : Նայէ ինչ ձայն , օրիորդիկ :  
Ո՛չ : Եւ ես այո՛ կ'ըսեմ : Երթանք :

ՆԵՆՆԵԼԵ

Այն ատեն հոս կենանք :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Սենեկիդ մէջ ի՞նչ կայ որ չեմ կրնար տեսնալ : Ո՛վ գիտէ ինչ մեծ գաղտնիքներ : Զիշերը յեղյեղուկ են : Կ'ուզե՞ս երկնալ :

Կը մօտեցնէ երես թիկնաթոս մը :

Ոտքերդ հոս դիր : Այդպէս : Եւ հանդարտ կեցիր : Խօսելու կամք չունիս է՛հ : Իրարու հետ ընկերութիւն կ'ընենք :

Կ'երթայ ստուիւն դիմաց և կը նստի դրելու համար :

ՆԵՆՆԵԼԵ դադարէ մը ետքը :

Ի՞նչ կ'ընես :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Աշխատութիւն մը ունիմ՝ պիտի լմնցնեմ :

ՆԵՆՆԵԼԵ

Գիշերն ալ :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Կարեւոր է :

Լուսթիւն :

Նէննէլէ :

ՆԵՆՆԵԼԵ

Հայր :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Երբոր քիչ առաջ կ'անցնէիր , դուրս ելլալու համար . . . և հարցուցի , Ո՛վ է , ինչո՞ւ չի պատասխանեցիր :

ՆԵՆՆԵԼԵ

Զի լսեցի :

Լուսթիւն :

Սակայն գէշ կ'ընես գիշերը հսկելով : Մաքսիմոս քեզի շատ աշխատութիւն կու տայ :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Ոչ :

ՆԵՆՆԵԼԵ

Ո՛հ պիտի ըսեմ իրեն :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Մաքսիմոսին համար չէ որ կ'աշխատիմ :

ՆԵՆՆԵԼԵ

Ի՞նչ :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Յանկարծակի վրաս հասար , պէտք է խոստովանիմ : Աւելի աշխատութիւն մըն է որ վրաս առի : Կը տեսնայի որ թռչակը չի բաւեր . . . Գտայ ազնիւ մարդիկներ . . .

ՆԵՆՆԵԼԵ

Ո՛հ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Սակայն . . . Քիչ բան:

ՆԵՆՆԵԼԵ

Ո՞րչափ ատենէ ի վեր է:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Ամիս ու կէս: Ամէն գիշեր չէ, գիտես: Եւ հիմայ լմեցայ, այս գիշեր վերջինն է: Միայն տեղեկագիրը մնաց որ օրինակեմ. . . . Անոր համար հոս նստայ . . . Մէկալ գիշերները վարը կը կենայի աշխատանոցին մէջ:

ՆԵՆՆԵԼԵ կ'ելլայ և կու գայ դէպ ի հայրը  
ձեռնամած:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Ի՞նչ ունիս:

ՆԵՆՆԵԼԵ

Ներէ ինծի, հայր:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Ի՞նչ բանի: Ի՞նչ է որ քեզի պիտի ներեմ:  
Միժողիւով:

Այս քիչ մը աշխատութիւններս:

ՆԵՆՆԵԼԵ

Այդ չէ: Ներէ ինծի:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Այդ ի՞նչ աչքերով կը նայիս ինծի: Ճիշդ այս իրիկուան աչքերը երբոր զիս բարեւեցիր: Հոս եկուր: Ի՞նչ բան է որ քեզի պիտի ներեմ: Ի՞նչ ըրեր ինծի: Գու: Ո՛ւր կ'երթայիր: Ինչու չի պատասխանեցիր երբոր զքեզ կանչեցիր: Լսեցիր. . . . Երկու անգամ կանչեցիր: Ո՛ւր կ'երթայիր, խօսէ: Կը վստահայիր թոմիկն հանդիպելու, ըսիր: Ի՞նչ բան է որ չեմ կրնար տեսնալ սենեկիդ մէջ: Ա՛հ: Կ'ելլայ ոտք:

ՆԵՆՆԵԼԵ

Ոչ, ոչ. . .

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Կեցիր հոն: Եւ չի շարժիս, գիտես:  
Կ'անէ կանթեղը, մայր դուռը բանալիով կ'երթայ կը գոցէ և յետոյ կ'երթայ աճապարանօք Նէնեւէի սենեակը:

ՆԵՆՆԵԼԵ ընդարձացած կը մնայ ստուղին մօտ:  
ՅՈՎՀԱՆՆԵՍ ձեռքը նամակով մը կը դառնայ:

Նամակ մը ինծի համար:  
Կանթեղը վար կը շնէ:

ՆԵՆՆԵԼԷ

Հայր, մի կարդար:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Պէտք չկայ:

Ստուի՛ն վրայ նամակը կը նետէ:

Դատարկաշըլիկ մը չես, աշխարհքիս մէջ  
թափառելու համար չէիր փախչեր: Կը փախ-  
չէիր.... երթալու:....

Երկայն դադար:

Դո՛ւ էիր այս բանը ընողը՝ Դո՛ւ, Նէննէլէ:  
Կրցար յղանալ, կրցար ընդգրկել այս հրէ-  
շաւոր դադափարս: Այս սենեակը կտրեցիր  
անցար, տեսար զիս, այս տունէս պիտի ել-  
լայիր, ուր որ ես կամ, և.... վաղը աշխար-  
հիս մէջ աստանդական երթայի պիտի խեն-  
թի մը պէս ոռնալով, ազլիկս փնտռելու,  
կամ նոյն իսկ այս գիշեր պիտի բերէին զքեզ  
հոս.... պիտի կանչէին զիս.... տեսնայի  
պիտի զքեզ.... հոս.... անկենդան.... իմ  
Նէննէլէս.... իմ Նէննէլէս....

Երկայն դադար:

Ինչո՛ւ: Ինչո՛ւ նէ՛հ.... Ինչո՛ւ: Ի՞նչ հան-  
գիւպեցաւ: Պէտք է գիտնամ.... պէտք է  
գիտնամ ինչ հանդիպեցաւ.... Մեռնիլ, ախ:

Քեզի ի՞նչ ըրի.... էս.... Ուրիշները քեզի  
ի՞նչ ըրին: Ի՞նչ է որ դեռ կ'անգիտանամ  
իմ տանս վրայ:

ՆԵՆՆԵԼԷ

Խենթ էի.... Խենթ էի.... մի հարցներ....  
խենթ էի:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Ըսէ ի՞նչ է որ կ'անգիտանամ, Ըսէ ինձի:  
Կը հրամայեմ: Թո՛մբ:

ՆԵՆՆԵԼԷ

Այն ալ: Թո՛մի կորսուած է: Գէշ կնկան  
մը հետ կը կարգուի: Ստիպուած է: Մաք-  
սիմոս կը բացատրէ քեզի: Ես չեմ գիտեր:  
Այսօր գիտցայ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Ո՛ւր է:

ՆԵՆՆԵԼԷ

Հոն, կարծեմ.... չեմ գիտեր.... չեմ գի-  
տեր.... Գիտեմ թէ անդարման կորսուած է:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ընկճուած կը մնայ:

ՆԵՆՆԵԼԷ

Եւ ես զքեզ կը թողուի երբ աւելի պէտք

ունէիր օգնութեան և սիրովանքի, երբ աւելի մինակ էիր, և քու վրայ չէի մտածեր, և դու միշտ մեր վրայ կը մտածէիր, և մեզի համար կ'ապրէիր:

Յովհաննէս զաղափարի մը ետեւէն երթալով:

Յիրուցան կ'ըլլան: կ'երթան, կը հեռանան:

ՆԵՆՆԵԼԷ

Ես վրայդ գէշ կը մտածէի, և զքեզ շարաշար կը դատէի: Միայն Հոս զարձուր: Հոս հետս կեցիր, մտիկ ըրէ ինծի, լսէ, հարկ է որ խոստովանիմ, հարկ է որ գիտնաս ինչ որ քու վրայօքդ կը մտածէի: Վիշտը որ ուրիշներէն կու գար ինծի աւելի մեծ և աւելի բուռն էր, բայց այն որ քու նկատմամբ կը մտածէի, կը խոցէր զիս հոգեոյս ամէնէն աւելի խոր և փափուկ կէտին: Ինծի կ'երեւար թէ ձեռքէդ եկածին չափ չէիր ըներ: Կը հասկընան: Կը հասկնան: Քեզի ըսածներէս բան մը չեն իմանար:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Այո՛, սիրելիս: Կ'իմանամ: Իրաւունք ունէիր: Չեզի համար ձեռքէս եկածը չըրի:

ՆԵՆՆԵԼԷ

Ո՛հ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Ոչ հոս, ոչ հիմա: Հոս ուրիշ բան չէի կըրնար ընել, և ոչ աւելին: Եւ կը տեսնայի, գիտես, որ աղէտները կու գային: Ո՛հ, որչափ անգամ: Բայց աւելին չէի կրնար ընել: Միւրանի մէջ՝ այո՛: Երբոր պղտիկ էիք: Ինծի կ'երեւար թէ զձեզ հարստացնելը բաւական էր:

ՆԵՆՆԵԼԷ

Եթէ գիտնայիր թէ զքեզ ինչպէս վեր, բարձր կը տեսնամ իմ առջեւ: Ինչ անդորր, ինչ ապահովութիւն կու տայ ինծի այն քու արթուն պաշտպանութիւնը լսելս: Ինչո՞ւ երբեք այս բաներու վրայ չենք խօսիր: Ինչո՞ւ երբեք իրարու չենք ըսեր ամէն բան: Ոչ ոք իր անձին վրայօք ամէն բան կ'ըսէ: Մինչեւ իր անձին վրայօք ամէն բան կ'ըսէ: Մինչեւ զէկ կ'ընէ: Ոչ մէկ ցաւ, ոչ մէկ ուրախութիւն, պիտի կրնան երբեք յաղթել քաղցրութեան՝ որ կը զգամ այս վայրկեանիս, քեզի հետ, քեզի մօտ, ճանչնալով և պաշտելով: Կը ներէս ինծի:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Սիրելիս : Կը ներեմ՝ քեզի և կ'օրհնեմ  
դքեզ :

Իրեն գլուխը գրկած կուրծքին վրայ կը բռնէ,  
յետոյ ճակատը կը պագնէ : Ազատ կը թողու : Կը  
պտըտի : Կ'երթայ պատուհանը : Գուրս կը նայի :

Ի՞նչ գեղեցիկ գիշեր : Հոս եկուր : Չէս մսիր :

ՆԵՆՆԵԼԷ

Ոչ :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Ըսիր ոչ մը, ինչպէս կ'ըսէիր տղակուց,  
երկայն բարակ, շատ մը ձայնաւորներով :  
Ոտոռչ : Քիչ փոխուած ես : Դեռ կը տեսնամ՝  
դքեզ դէմքով . . .

Կը կտրէ խօսքը գուրս նայելու համար  
սեւեռած : Յետոյ նորէն կը սկսի :

Այն ատենուան դէմքովդ : Նիհարցեր ես :  
Ա՛նչափ գեղեցիկ էիր :

ՆԵՆՆԵԼԷ

Այդ շըսուիր :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Ամէնքը կը դառնային որ . . .

Կը դառնայ նայելու :

ՆԵՆՆԵԼԷ

Բայց ի՞նչ ունիս : Երկրորդ անգամ է որ  
խօսքդ կը կտրես : Ի՞նչ կը նայիս :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Ինծի երեւցաւ թէ հոս ծառերուն տակ  
մարդ մը տեսնեմ : Բայց խարուած պիտի  
ըլլամ : Լուսնին և ճիւղերուն միջեւ :

ՆԵՆՆԵԼԷ

Կայ : Կայ մէկը :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Կը տեսնե՞ս զինքը :

ՆԵՆՆԵԼԷ

Անչարժ կեցած է : Շուքին մէջ է : Ոչ :  
Կը նայի դարձեալ մերամազձիկ :

Ոչ, ոչ :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Տրտմութեամբ կ'ըսես : Կը ցաւիս որ մէկը  
չըլլայ : Ո՞վ կը կարծէիր :

ՆԵՆՆԵԼԷ

Բայց մտածէ : Ո՞վ կ'ուզես . . .



ՅՈՎՀԱՆՆԵՍ

Թամի՞ն, կը կարծէիր:

ՆԵՆՆԵԼԵ

Ձէ: Ոչ որ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Դու՛ այլ եւս զէշ մտածմունքները պիտի չունենանս:

ՆԵՆՆԵԼԵ

Ոհ, ոչ: Երբեք:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Այլ եւս զիս թողու պիտի չի մտածեն: Օր մը սակայն հարկ պիտի ըլլայ որ թողուս: Պէտք է յուսալ: Յուսացեր էի....

ՆԵՆՆԵԼԵ մէկ թեւէն կը բռնէ:

Կայ: Ահաւասիկ: Յանկապատին ստուել-րին մտեցաւ.... մեզի ականջ դնելու հա-մար: Կը տեսնաս:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Ո՞ր է:

ՆԵՆՆԵԼԵ

Հոն, մացառուտին ետեւ: Նայէ լուսնէն ձգած անոր ստուերին: Կը տեսնենս:

Յնծալից եռանդով:

Կեցեր է: Կը հսկէր: Ինծի համար կեցեր է, հասկցաւ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Ի՞նչ կ'ըսես: Ո՞չ է:

ՆԵՆՆԵԼԵ

Կ'ուզե՞ս որ զինքը կանչեմ: Մաքսիմո՛ս, եկու՛ր:

Վարագոյրը կ'իջագայ:



Վ Ե Ր Ջ





ՀՀ Ազգային գրադարան



NL0318352

8180

